# ԷՋՄԻԱԾԻՆ



1967

ՌՆԺԷ

ԻԴ ՏԱՐԻ

Դեկտեմբեր

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ԺԲ

1967

ՊԱ-9.325.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Էջ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարք, Նորին Սրբություն Տ. Տ. Ալեքսի սրբազան պատրիարքի ծննդյան իննսունամյակի առիթով . . . 3

Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակի առիթով փոխանակված հեռագրեր Վեհափառ Հայրապետի և պետական անձնավորությունների միջև . . . 5

Հայաստանում սովետական կարգերի հաստատման քառասունյոթերորդ տարեդարձի առիթով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական անձնավորությունների միջև փոխանակված հեռագրեր . . . 7

Հանդիսություններ Վեհափառ Հայրապետի գահակալության 12-րդ տարեդարձի առիթով . . . 9

Վեհափառ Հայրապետի այցելությունը Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Նագուշ Հարությունյանին . . . 15

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի այցելությունը Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Բ. Մուրադյանին . . . 16

Վեհափառ Հայրապետը Լենինգրադում և Մոսկվայում . . . 17

Հանդիսություն Հոգևոր Ճեմարանում՝ Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակի առիթով . . . 22

ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆ—Գարուն . . . 24

Գերաշնորհ տ. Վաչե եպիսկոպոս Հովսեփյան . . . 25

Գերաշնորհ տ. Վազգեն եպիսկոպոս Գրպըրոյան . . . 27

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ . . . 28

Եկեղեցական-ազգային կյանք . . . 32

Ա. ՀԱՏԻՏՅԱՆ—Համառոտ ակնարկ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատմության վրա (1920—1967 թթ.) . . . 37

ԲԱԲԳԵՆ ԵՊՍ. ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆ—Ս. Բարսեղ Մեծ Հայրապետը և Իգնատիոս Անտիոքի . . . 49

ՌՈԲԵՐՏ ԱԹԱՅԱՆ—Հայ միջնադարյան տաղեր . . . 53

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ . . . 74

Ցանկ «Էջմիածին» ամսագրում 1967 թվականի ընթացքում տպագրված նյութերի . . . 77



Հանձնված է արտադրության 14/XI 1967 թ. Ստորագրված է տպագրության 19/XII 1967 թ.
տպագրական 6 մամուլ, թուղթ 60×84¹/₈ պատվեր 830

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue „Etchmiadzine", Etchmiadzine, Arménie, URSS.

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1967 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

**Տ. Տ. ՎԱԶԳԷՆԻ ԱՌԱՋՆՈՅ**

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



## ԱՊՐԻԼՅԱՆ ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ԽՆԿԵԼԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

**Նոյեմբերի 29-ին**՝ մեր ազգային վերածննդի տոնի օրը, Երևանում, Ծիծեռնակաբերդի բարձունքի վրա, հանդիսավոր իրադրության մեջ կատարվեց Ապրիլյան եղեռնի մեր բյուրավոր նահատակների հիշատակը հավերժացնող հուշարձանի պաշտոնական բացումը:

Հանդիսությանը ներկա էին պետական, կառավարական ղեկավար անձնավորություններ, մտավորականության, գիտության, արվեստի, աշխատավորության և ուսանողության բազմահազար ներկայացուցիչներ և ժողովրդի հոծ բազմություն, որոնք եկել էին խոր հարգանքի զգացմունքով իրենց գլուխը խոնարհելու մեր նահատակների անմոռաց հիշատակի առաջ:

Ծիծեռնակաբերդի բարձունքում, չորսուկես հազար քառակուսի մետր տարածության վրա, վեր է խոյացել հոյակապ հուշարձանը՝ 30 մետր տրամագիծ ունեցող շրջանաձև դամբարանը, դեպի կենտրոն խոնարհված 12 հսկա բազալտե պիլոններով:

Դամբարանում վառվում է հավերժական հուրը՝ ի հիշատակ Ապրիլյան եղեռնի զոհերի:

Դամբարանից քիչ հեռու վեր է խոյացել քառասուն մետրանոց երկնասլաց մի այլ կոթող, որը խորհրդանշում է հայ ժողովրդի ազգային վերածնունդը։

Հուշարձանի նախագծի հեղինակներն են՝ ճարտարապետներ Ա. Թարխանյանը, Ս. Քալաշյանը և քանդակագործ Հ. Խաչատրյանը։

1915 թվականի Ապրիլյան եղեռն և 1920 թվականի Նոյեմբերի ազգային վերածնունդ։

Նոյեմբերյան արևը ոսկեզօծել է մայրաքաղաքի գեղեցիկ համայնապատկերը։

Ժամը 15-ն է։ Բացօթյա ամբիոն են բարձրանում Հայաստանի կառավարության ղեկավարները, մինիստրներ, մշակույթի, գիտության անվանի գործիչներ։

Ապրիլյան եղեռնի նահատակների հիշատակին կառուցված հուշարձանի բացմանը նվիրված հանդիսությունը ներածական խոսքով բաց է անում Երևանի քաղաքային կոմիտեի առաջին քարտուղար **Լ. Պ. Ղարիբջանյանը**։

«1915 թվականի ապրիլին թուրքական ռեակցիոն կառավարողների նախօրոք մշակած ծրագրով նահատակվեցին մոտ մեկուկես միլիոն հայեր։ Շարունակելով արևմտահայության բնաջնջման իրենց ոճրապարտ ծրագիրը, արյունարբու բռնակալները նետվեցին դեպի Արևելյան Հայաստան, որպեսզի նույն ճակատագրին արժանացնեն նաև մեր ժողովրդի արևելյան հատվածը։

Համազգային աղետի այդ մղձավանջային օրերին, երբ թվում էր, թե կորսված է ամեն հույս, և փակված է ու թաղված արյան մեջ հայոց պատմության գիրքը, մեծ Հոկտեմբերի ազատարար այգը ճառագեց արյունաքամ ու ավեր Հայաստանի վրա։

Պայծառացավ երկինքը, փարատվեց մղձավանջը և բացվեց հուսալի լուսաբացը հայոց աշխարհում։ Մեր զարկված, զրկված ու ողբի հայրենիքը դարձավ հույսի ու լույսի հայրենիք, չքնաղ մի Հայաստան։

Հայ ժողովուրդը իր նահատակների անմահ հիշատակին կանգնեցրել է կենդանի, ներշնչող, ամենամեծ հուշարձանը՝ մեր վերածնված Հայաստանը։

Մեր ժողովրդի լավագույն վարպետների հմուտ ձեռքերով այդ հոյակերտ հուշարձանը արդեն կանգնել է Հայաստանի մայրաքաղաքում, որպես աներիմ նահատակների հավերժ կենդանի հուշարձան, որպես հայ ժողովրդի վերածննդի պայծառ խորհրդանիշ»։

Սովետական Միության և Հայկական ՍՍՀ-ի պետական հիմների վեհ հնչյունների ներքո գլուխները խոնարհում են մի անգամ ևս նահատակաց հուշարձանի առաջ, մինչ մայրաքաղաքի աշխատավորության ներկայացուցիչներ Երևանի Կիրովի անվան քիմիա-



Հուշարձանի հանդիսավոր բացումը

կան կոմբինատի մշտաբորբոք քուրայից վառած և գրահամեքենայով Ծիծեռնակաբերդ բերած ջահը հանձնում են Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար **Ա. Ե. Քոչինյանին**։ Ընդունելով ջահը, նա վառում է հավերժական կրակը, ապա բարձրանում ամբիոն և, ոգեկոչելով հիշատակը Ապրիլյան եղեռնի զոհերի, ասում.

*«Այսօր, նոյեմբերի 29-ին, երբ Հայաստանի աշխատավորները նշում են սովետական կարգերի հաստատման պատմական օրը, մենք հավաքվել ենք բացելու Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թուրքական ռեակցիոն կառավարող շրջանների ազգայնամոլ քաղաքականության զոհերի, մեր ժողովրդի զավակների անմահ հիշատակը հավերժացնող կոթողը:*

*Այդ ողբերգությունից անցել է ավելի քան կես դար: Այժմ մեր նոր սերունդներին դժվար է անգամ մտովի պատկերացնել այն արհավիրքը, որ ապրեց հայ ժողովուրդը այդ օրերին:*

*1915 թվականին երիտասարդ թուրքերի կառավարությունը, օգտվելով համաշխարհային պատերազմի ընձեռած հնարավորություններից, պետական մասշտաբներով իրականացրեց հայ ժողովրդի արևմտյան հատվածի ոչնչացման վաղեմի ծրագիրը: Ամենավայրենի մեթոդներով գործադրվող տեռորի զոհ դարձան մեկուկես միլիոն հայեր: Իրենց բնօրրանից տեղահանվեցին և անապատներ քշվեցին հարյուր հազարավոր անմեղ մարդիկ: Եղեռնը վերջին գործողությունն էր այն մեծ ողբերգության, որ ապրեց հայ ժողովուրդը օսմանյան լծի տակ, հարյուրամյակների ընթացքում:*

*Դառն ճակատագիր էր սպասում ամբողջ Հայաստանին, եթե մեր պատմության այդ օրհասական պահին Ռուսաստանում չհաղթանակեր Հոկտեմբերյան հեղափոխությունը:*

*Հայաստանում սովետական կարգերի հաղթանակը փրկեց մեր ժողովրդին ազգովին բնաջնջման վտանգից, ավետեց մեր ժողովրդի հրաշք-վերածնունդը:*

*Հայ ժողովուրդը ստեղծեց իր սոցիալիստական պետությունը՝ Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը:*

*Սովետական իշխանության 47 տարվա ընթացքում Հայաստանի բնակչությունը 750 հազարից հասել է 2 միլիոն 300 հազարի, այսինքն՝ ավելացել է 3 անգամ:*

*Հայ ժողովրդի աշխարհով մեկ սփռված տարագիր զավակները, որոնք հեռավոր երկինքների տակ ապրում էին հայրենիքի կարոտով, բռնեցին հայրենիք վերադառնալու ուղին: Նրանցից 200 հազարն արդեն վերադարձել են Սովետական Հայաստան և ակտիվորեն մասնակցում են հայրենիքի ծաղկման ու բարգավաճման գործին:*

*Պատմության անդարձ ճանապարհներին են մնացել մեր ժողովրդի այնպիսի դարավոր ուղեկիցներ, ինչպիսիք են կոտորածն ու ավերը, ազգային հալածանքը, թշնամական ասպատակությունները, արյունն ու արցունքը:*

*Հայ ժողովուրդը զգում է հայրենի հողի ամրությունը, ապրում է այսօրվա և ապագայի նկատմամբ աներեր հավատով, կառուցում ու շենացնում է հայրենի ոստանը, համոզված, որ ոչ ոք այլևս չի հանդգնի ավերել կառուցածը:*



Նահատակների հիշատակին վառվող հավերժական կրակը

*Այս հանդիսավոր պահին մենք կարող ենք վստահորեն ասել, որ նման ողբերգություն հայ ժողովրդի պատմության մեջ այլևս երբեք չի կրկնվի, որովհետև նա այլևս մենակ չէ: Նրա հետ են սովետական եղբայրական ժողովուրդները, նա հզոր է իր մեծ հայրենիքի հզորությամբ:*

*Այս կոթողը բողոք է ոչ միայն անցյալի, այլև այսօրվա իմպերիալիստական քաղաքականության դեմ, ցեղասպանության ամեն մի դրսևորման դեմ:*

*Մեր ժողովուրդը լավ գիտե խաղաղության գինը:*

*Նրա երջանիկ այսօրվա, հետագա բարգավաճման, ստեղծագործ աշխատանքի կարևոր երաշխիքը խաղաղությունն է, որի պահպանությունը սովետական կառավարության հետևողական արտաքին քաղաքականության հիմնական խնդիրն է:*

*Այսօր մենք մասնակցում ենք մի այլ հուշարձանի բացման արարողությանը, հուշարձան, որը, խոր հարգանքի տուրք հանդիսանալով թուրքական ջարդարարների ոճրագործության զոհերի հիշատակին, միաժամանակ խորհրդանշում է մեր ժողովրդի սոցիալիստական վերածնունդը»:*

Հայաստանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս **Վիկտոր Համբարձումյանը**, հանդես գալով հանրապետության մտավորականության անունից, ասում է, որ այսօր բացվող կոթողը միևնույն ժամանակ խորհրդանշում է հայ ժողովրդի վերածնունդը և նրա բազմաթիվ հաղթանակները: Ազատվելով պատմական մեծ արհավիրքների վտանգից, Հայաստանի ժողովուրդն այսօր ապացուցում է իր գոյության խոր իմաստը, քրտնաջան աշխատանքով շարունակելով կառուցել մեր չքնաղ հանրապետությունը, ոչինչ չխնայելով Սովետական Միության հզորության ամրապնդման համար, համայն մարդկության լավագույն իղձերի իրականացման համար:

Ծինարար, ստեղծագործ աշխատանք և կրկին աշխատանք, անձնվեր աշխատանք՝ սա է մեր կյանքի իմաստը և ապագա հաջողությունների երաշխիքը:

Ապրիլյան եղեռնի նահատակների հիշատակին կառուցված հուշարձանի բացման հանդիսության ավարտին բոլոր ներկաները երկյուղածորեն ու խորին հարգանքով, գլխաբաց անցնում են 1915 թվականի հայ ժողովրդի նահատակ զավակների խնկելի հիշատակը հավերժացնող դամբարանով, ուր վառվում է հավերժական հուրը՝ որպես վերածնված ու երախտագետ մեր ժողովրդի սրտի կնդրուկը՝ անմահ նահատակների սուրբ հիշատակին:



## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՂՈԹՔԸ ԱՊՐԻԼՅԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՎՐԱ

1968 թվականի հունվարի 8-ին՝ երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 12-ին, **Վեհափառ Հայրապետը** ուխտի գնաց Երևան, Ծիծեռնակաբերդ, Ապրիլյան եղեռնի նահատակների հուշարձանին հայրապետական Իր աղոթքն ասելու:

Հայոց Հայրապետին ընկերակցում էին Գերագույն հոգևոր խորհրդի և Մայր Աթոռի միաբանության անդամները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, մայրավանքի պաշտոնեությունը, Երևանի թեմական խորհրդի անդամներն ու քահանայական դասը:

Հանուն Հայոց Հայրապետի, Մայր Աթոռ ս. Էջմիածնի և Հայաստանյայց առաքելական եկեղեցու և բովանդակ հայ հավատացյալ ժողովրդի, Ապրիլյան եղեռնի նահատակների հուշարձանին դրվեց ծաղկեպսակ՝ հետևյալ մակագրությամբ.

**«Ընկալցի Տէր զպատարագս այսօրինս պարգևեալսն ի Հայաստան աշխարհէ և յիշատակ նոցա օրհնութեամբ եղիցի»:**

Այնուհետև Վեհափառ Հայրապետի նախագահությամբ հոգեհանգստյան մասնավոր կարգ է կատարվում նահատակների դամբարանի վրա:

Արարողության ավարտին Նորին Սուրբ Օծությունը «հոգւոց» է արտասանում 1915 թվականի Ապրիլյան եղեռնի շուրջ երկու միլիոն մեր նահատակների խնկելի և անմոռաց հիշատակին:

Հավերժական փառք, լու՜յս և օրհնությո՜ւն մեր նահատակների պայծառ հիշատակին:





ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀՈՒՇԱՐՁԱՆ—ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ, ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԱԼԵՔՍԻ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԾՆՆԴՅԱՆ ԻՆՆՍՈՒՆԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

### ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ, Տ. Տ. ԱԼԵՔՍԻ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՄՈՍԿՈՒԱՅԻ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈՅ

Աստուածակառոյց սուրբ Էջմիածնէն և հայ եկեղեցւոյ հաւատացեալներու սրտէն, Ձերդ Սրբութեան կուգանք բերելու Մեր և բոլորիս սիրոյ և յարգանքի ողջոյնը, Ձերդ Սրբութեան ծննդեան իննսունամեակի յոբելեանին շատ երջանիկ առիթով:

Մենք զՁեզ իրապէս կը սիրենք եղբայրաբար, խոր գնահատանքի զգացումներով, իբրև մեր ամենամոտիկ քոյր եկեղեցւոյ՝ ռուսական պրաւոսլաւ մեծ եկեղեցւոյ Քահանայապետը, իբրեւ մեծասիրտ և պայծառատես Հովուապետը ռուս աստուածասէր ու մարդասէր ժողովուրդի և իբրև համայն աշխարհին ծանօթ, ներշնչեալ ու անվեհեր պաշտպանը խաղաղութեան սրբազան դատին և ժողովուրդներու եղբայրության նուիրական գործին:

Ձերդ Սրբութիւնը կը հանդիսանայ բոլոր եկեղեցիներու, բայց մանաւանդ հայ եկեղեցւոյ և Մեզ համար՝ լուսաւոր բարձունք մը՝ հոգևոր և բարոյական հեղինակութեան:

Սոյն Մեր գրով, եղբայրական ամենաջերմ յոյզերով կը շնորհաւորենք Ձեր իննսուն տարիներու կեանքն ու փառաւոր վաստակը, և իբրև իրաւ արտահայտութիւնը հայ եկեղեցւոյ և անձամբ Մեր գուրգուրալից սիրոյ և գնահատանքի, Ձերդ Սրբութեան կը ներկայացնենք ս. Գրիգոր Լուսաւորչի Ա կարգի շքանշանը, աղօթելով, որ Տէրը պագնէ Ձեզ՝ և՛ս բազում ու արևոտ տարիներ, խաղաղ ու երջանիկ հովուապետութեամբ:

«Այլ ինքն Աստուած և Հայր մեր և Տէր մեր Յիսուս Քրիստոս ուղղեսցէ զճանապարհս մեր առ ձեզ: Եւ զձեզ ինքն Տէր բազմապատիկս և առաւելս արասցէ սիրով ընդ միմեանս և առ ամենեսին, որպէս և մեք ի ձեզ (Ա. Թես. Գ. 11—13): Ամէն:

ՎԱԶԳԷՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 18-ը նոյեմբերի
1967 փրկչական ամի,
և ի տումարիս հայոց ՌՆԺԶ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի:
ՀԱՄ. 627





ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԻ



## ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ 50-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

### ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ն. Վ. ՊՈԴԳՈՌՆՈՒՆ

Հանուն հայ առաքելական եկեղեցու և հավատացյալ ժողովրդի, հաճեցեք ընդունել Մեր շնորհավորությունները և հարգալից ողջույնը Հոկտեմբերյան մեծ հեղափոխության և Սովետական Միության հիմնադրման հոբելյանի երջանիկ առիթով։

Մենք ջերմապես մաղթում ենք, որ սովետական ժողովուրդների մեծ ընտանիքը հավետ անսասան մնա ու հառաջադիմե և ծաղկի լույսի և խաղաղության մեջ՝ միշտ լույսի ու խաղաղության ոգի բաշխելով համայն մարդկության։

Փառք Սովետական Միության ու նրա խաղաղարար առաքելության։

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

* * *

### ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. Ն. ԿՈՍԻԳԻՆԻՆ

Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը և սովետական պետության հիմնադրումը նախախնամական եղան նաև Հայաստանի և դարեր շարունակ տառապող հայ ժողովրդի համար։ Հինավուրց հայ ազգը ևս հասավ նոր կյանքի խաղաղ ու ապահով ափին։ Կազմավորվեց հայկական նոր պետությունը, վերածնվեց հայ ժողովուրդը սովետական եղբայրական ժողովուրդների մեծ ընտանիքի ծոցում։

Հոկտեմբերյան հեղափոխության հիսնամյա հոբելյանի առթիվ երջանիկ ենք Ձեզ ներկայացնելու Մեր շնորհավորությունները հանուն հայ առաքելական եկեղեցու և հայ հավատացյալ ժողովրդի՝ մաղթելով Սովետական Միության անսասան առաջընթաց ու բարօրություն և հաջողությամբ պսակում իր մարդասեր ու խաղաղասեր առաքելության։

Հարգանք և փառք՝ աշխարհի խաղաղության սրբազան դատի հզոր պաշտպան սովետական հայրենիքին և նրա կառավարության։

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

*
* *

## ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. ԿՈՒՐՈՅԵԴՈՎԻՆ

Այսօր, երբ սովետական բոլոր ժողովուրդները ցնծությամբ տոնում են հիսնամյա հոբելյանը Հոկտեմբերյան մեծ հեղափոխության և Սովետական Միության հիմնադրումը, ուրախ սրտով շնորհավորում ենք Ձեզ՝ հայ առաքելական եկեղեցու ու նրա հավատացյալների անունից, աղոթելով առ Աստված, որ սովետական մեծ հայրենիքը միշտ աճի ու զարգանա բարօրության մեջ ու հավետ հանդիսանա երաշխիքը մեր եղբայրացած ժողովուրդների երջանկության ու համայն աշխարհի խաղաղության։

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

*
* *

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Անկեղծորեն զգացված եմ մեծ Հոկտեմբերի հիսնամյակի առթիվ հղած Ձեր ջերմ շնորհավորանքի համար։ Առիթից օգտվելով, կամենում եմ մաղթել Ձեզ քաջառողջություն, բարօրություն և հաջողություն՝ խաղաղության պաշտպանության վեհ գործում։

Վ. ԿՈՒՐՈՅԵԴՈՎ
**ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ**

ՌԱ-9325

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՔԱՌԱՍՈՒՆՅՈԹԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ

### ՀՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՏԻԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հանուն Հայաստանյայց առաքելական եկեղեցու և հայ հավատացյալ ժողովրդի, հաճեցեք ընդունել Մեր ջերմագին շնորհավորանքներն ու սրտագին բարեմաղթությունները՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման քառասունյոթերորդ տարեդարձի առիթով։ Թող Տերը խաղաղության ու բարօրության մեջ հավետ պահպանի մեր սիրելի ու ծաղկյալ մայր հայրենիքը՝ ի մխիթարություն և հերջանկություն համայն հայ ժողովրդի։

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

* * *

### ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ Բ. ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Սովետական Հայաստանի քառասունյոթերորդ տարեդարձի առիթով հաճեցեք ընդունել Մեր ամենաջերմ շնորհավորանքները և սրտագին բարեմաղթությունները Ձեզ և մեր հայրենի հարազատ կառավարության բոլոր անդամներին։ Հանուն հայ եկեղեցու և Մեր հավատացյալ ժողովրդի աղոթում ենք վերածնված մայր Հայաստանի հարաճուն զարգացման և շինարարության համար, հավետ խաղաղության մեջ, սովետական եղբայրական ժողովուրդների մեծ ընտանիքում։

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

## ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ Կ. ԴԱԼԼԱՔՅԱՆԻՆ

Սովետական Հայաստանի քառասունյոթերորդ տարեդարձի առիթով կհոնենք Ձեզ և հարգո Խորհրդիդ բոլոր անդամներին Մեր ջերմագին շնորհավորանքները և բարի մաղթանքները՝ Ձեր արնշատության ու հայրենանվեր առորյա հաջողության համար: Կհայցենք Ամենակալից խաղաղություն, անսասանություն և լիառատ բարիքներ վերածնված մեր մայր հայրենիքին:

**Վ Ա Զ Գ Ե Ն Ա**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

* * *

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Վ Ա Զ Գ Ե Ն ԱՌԱՋԻՆԻՆ
ԷՋՄԻԱԾԻՆ

Ընդունեցեք խնդրեմ Գերագույն սովետի նախագահության անդամների և անձամբ իմ սրտագին շնորհակալությունը Սովետական Հայաստանի 47-րդ տարեդարձի առթիվ Ձեր հղած ջերմ շնորհավորանքների և բարեմաղթություններների համար:

Խորին ակնածանքով՝

ՆԱԳՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
**ՀՍՍՀ Գերագույն սովետի**
**նախագահության նախագահ**

* * *

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Վ Ա Զ Գ Ե Ն ԱՌԱՋԻՆԻՆ

Սովետական Հայաստանի քառասունյոթերորդ տարեդարձի առթիվ Ձեր հղած ջերմագին շնորհավորանքների և լավագույն բարեմաղթությունների համար հայտնում եմ խորին շնորհակալություն՝ Սովետական Հայաստանի կառավարության և անձամբ իմ անունից:

Խորին հարգանքներով՝

ԲԱԴԱԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ
**Հայկական ՍՍՀ**
**Մինիստրների սովետի նախագահ**

* * *

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Վ Ա Զ Գ Ե Ն ԱՌԱՋԻՆԻՆ

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 47-րդ տարեդարձի առթիվ Ձեր ուղարկած ջերմ շնորհավորանքների և բարեմաղթությունների համար հաճեցեք ընդունել Խորհրդիս և անձամբ իմ սրտագին շնորհակալությունները:

Խորին հարգանքներով՝

Կ. ԴԱԼԼԱՔՅԱՆ
**Հայկ. ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր**
**հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ**



# ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 12-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

**Եպիսկոպոսական ձեռնադրություն**

Հոկտեմբերի 1-ին՝ կիրակի. «Տոն է Վարագայ սրբոյ Խաչի»:

Այսօր լրանում է նաև Վեհափառ Հայրապետի գահակալության տասներկուերորդ տարեդարձը:

Տոն է Մայր Աթոռում, ուրախության օր:

Մայրավանքի շրջակայքը, Մայր տաճարն ու այգիները լցված են ուխտավորական ծովածավալ բազմությամբ:

Ժամը 11-ն է: Տոնական ու ցնծագին հընչում են Մայր տաճարի զանգերը:

Արարատյան դաշտի քուրումնավետ և ոսկի աշնան պայծառ օրերից մեկն է:

Վեհարանում զգեստավորված, եկեղեցական թափորով, ամպհովանու տակ Մայր տաճար է առաջնորդվում Վեհափառ Հայրապետը՝ խուռներամ բազմության խանդավառ արտահայտությունների ներքո, մատուցելու օրվա հանդիսավոր ս. պատարագը և կատարելու եպիսկոպոսական ձեռնադրության և օծման կարգը:

Ն. Ս. Օծության գահակալության օրը եպիսկոպոս են ձեռնադրվելու Կանադայի հայոց առաջնորդական փոխանորդ տ. Վաչե և ԱՄՆ-ի արևելյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Վազգեն ծ. վարդապետները:

Շաբաթ օրը, երեկոյան ժամերգությունից հետո, Մայր տաճարում կատարվեց նորընծաների «ընտրութիւն և ուխտադրութիւն՝ ըստ սահմանի Հայց. եկեղեցւոյ»:

Իջման սուրբ սեղանի առաջ տ. Վաչե և տ. Վազգեն վարդապետները ուխտեցին անխոտոր և անսայթաք ընթանալ Հայց. եկեղեցու ուղղափառ դավանության ճանապարհով. «հաստատրիմ լինել Սրբոյ Էջմիածնի մինչև ցվախճան կենաց մերոց և կամնալ հլու հպատակութեամբ ի ներքոյ իշխանութեան և հրամանաց Սրբոյ Կաթողիկէ Մայր Աթոռոյ»:

Ուխտագրի ընթերցումից հետո նորընծաները այն ստորագրեցին:

Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպիսկոպոսը վկայում է ուխտագրությանը: «Պահպանիչ»-ով ավարտվում է եպիսկոպոսական ուխտադրման արարողությունը: Լուսարարապետ սրբազանը այնուհետև ստորագրված ուխտագրերը ներկայացնում է Ամենայն Հայոց Հայրապետին:

Կիրակի օրը, պատարագից առաջ, սուրբ Ստեփաննոսի սեղանի մոտ սկսվում է ձեռնադրության կարգի կատարումը:

Ամենայն Հայոց Հայրապետի աղոթքով ու օրհնությամբ նորընծաներին շնորհվում են եպիսկոպոսական կոչման յոթ աստիճանները՝ խարտավիլակությամբ լուսարարապետ տ. Հայկազուն արքեպիսկոպոսի և աղընթերակայությամբ տ. Կոմիտաս և տ. Պարգև եպիսկոպոսների:

Այնուհետև հայրապետական հանդիսավոր ս. պատարագը շարունակվում է Ավագ սեղանի վրա՝ մինչև Ճաշու գրքի ընթերցումը, որից հետո շարունակվում է ձեռնադրության կարգը:

Ձեռնադրիչ Հայոց Հայրապետը Ավագ սեղանի առաջ բազմած Իր առաքելական Աթոռի վրա, ոգեշնչումով և ապրումով ընթերցում է ձեռնադրության մեծ աղոթքը՝ «Դու, Տէր, այսօր վերածեր տնօրինութեամբ քո ի քահանայապետական շնորհ, տուր սոցա նմանիլ Քեզ՝ ճշմարիտ Հովուիդ, դնել զանձինս իւրեանց ի վերայ ոչխարաց, առաջնորդ լինել կուրաց, լոյս՝ խաւարելոց, խրատիչ՝ անզգամաց, լուսատու՝ տիեզերաց...»:

Այնուհետև նորընծաները ծնկաչոք, դեմքները դարձրած դեպի հավատացյալները,

հրաժարվում են աշխարհի ունայնություններից, մինչ Մայր տաճարի կամարների ներքո թնդում է եպիսկոպոսական կոչման հատուկ խորիմաստ ու տպավորիչ շարականը՝ **«Աստուածային և երկնաւոր Շնորհ, որ միշտ լնու զպէտս սպասաւորութեան Առաքելական Եկեղեցւոյ, կոչէ զՎաչէ և զՎազգէն վարդապետս ի քահանայութենէ յեպիսկոպոսութիւն»**:

### Օծում և հայրապետական քարոզ

Շարականի օրհներգությունը կրկնվում է երիցս, որից հետո Վեհափառ Հայրապետը կատարում է օծման կարգը: Ն. Ս. Օծությունը սրբալույս մեռոնով օծում է բույթ մատը և ճակատը նորընծաների:

Համապատասխան աղոթքներով նորոծ եպիսկոպոսներին տրվում են եպիսկոպոսական գավազան և մատանի:

Ավագ բեմի վրա ընթերցվում է վերջին Ավետարանը, որից հետո Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով ավարտվում է օծման հանդիսությունը:

Ն. Ս. Օծությունը համբուրում է ճակատը հայ եկեղեցու նորապսակ երկու իշխանների և տալիս է հայրապետական Իր ներշնչված պատգամն ու հորդորները.

**«Ամենակալն Աստված հայրն մերոց, որ յուր սուրբ և ապահով հովանու ներքն պահպանում է մեր ս. եկեղեցին և համայն մեր ժողովուրդը, որ իր իսկ աստվածային տնօրինությամբ կերտել է այս միածնաէջ տաճարը երանելի ս. Գրիգոր Լուսավորչի օրերին, նույն տնօրինությամբ պահպանվել է ահա դարերն ի վեր հաճախ բազում ողբերգություններ ապրելով նա ևս մեր տառապած ժողովրդի հետ միասին անցյալում: Եվ ինչպես հայ ժողովուրդը վերապրել է և այսօր իր վերածնունդն է ողջունում, այնպես էլ Հայաստանյայց եկեղեցին, Մայր Աթոռ ս. Էջմիածինը տոկացել են դարերի տառապանքներին և ավերումներին: Եվ այսօր տեսնում ենք ահա՛ մեր կենդանի աչքերով, որ մեր վերածնված հայրենի հողի վրա կանգուն է ս. Էջմիածինը՝ փառավոր, պայծառ, շեն և լեցուն հավատացյալ ժողովրդով: Մենք հավատում ենք, թե իսկապես Աստված է, որ առաջնորդում է մեր կյանքը: Մենք հավատում ենք, թե Աստված է, որ յուր օրհնության ներքո պահպանում է մեզ բոլորիս և առաջնորդում ու շնորհում է մեզ յուր երկնային շնորհները, որպեսզի մենք բոլորս, հոգևորականներ թե հավատացյալ ժողովրդի զավակներ, առավել լուսավորված ու զորացած շարունակենք մեր ս. առաքելությունը կյանքի ընթացքում և արժանի լինենք մեր լուսաբնակ նախնյաց և գուցե կարողանանք մեր պատմության գրքին մեջ արձանագրել լուսավոր փառավոր էջեր, իբրև վկայություն մեր քրիստոնեական հավատքին, իբրև վկայություն մեր ժողովրդի ոգեկան ուժերի ծաղկումին, իբրև վկայություն մեր կենդանության և ստեղծագործ շնորհներին: Ահա այսպես է, սիրելի ժողովուրդ, որ կանք միասին այս պահուն, այս ս. տաճարի կամարների ներքև բացառիկ առիթով մը, սրբազան առիթով մը, երբ ս. պատարագի այս ժամին եպիսկոպոսական աստիճանի տվչություն ենք կատարում սուրբ ձեռնադրությամբ: Աստուծո ս. Հոգվո ներգործությամբ մենք ձեռնադրեցինք այսօր և օծեցինք երկու երիտասարդ հոգևորականներ, արժանավոր երկու սպասավորներ մեր ս. եկեղեցվո: Մեկը կոչվում է Վաչե եպս. Հովսեփյան, երկրորդը՝ Վազգեն եպս. Գըպըրըյան: Երկուսն էլ հավատավոր զավակները մեր ժողովուրդին և մեր եկեղեցուն: Երկուսն էլ բազում տարիներե ի վեր արդյունավետությամբ ծառայում են մեր ս. եկեղեցուն, ս. Էջմիածնից մարմնապես հեռու, բայց հոգեպես միշտ մեզ հետ՝ մեկ սիրտ և մեկ հոգի: Նրանք երկուսն էլ, թե Վաչե եպիսկոպոս և թե Վազգեն եպիսկոպոս, գալիս են հեռավոր Ամերիկայի Միացյալ Նահանգներից: Վաչե եպիսկոպոս իր վերադարձին հրավիրվելու է և կոչվելու ղեկավարը դառնալու Կանադայի հայ եկեղեցուն, իսկ Վազգեն եպիսկոպոս լինելու է անմիջական օգնականը Միացյալ Նահանգաց հայոց արևելյան թեմի սրբազան եպիսկոպոսին, իբրև առաջնորդական փոխանորդ:**

**Բարձրաստիճան այս երկու հոգևորականները եկան մայր երկիր Հայաստան, իրենց ուխտը վերստին նորոգեցին Փրկչի ս. սեղանի առաջ և ձեռնադրությամբ ու ս. օծմամբ ընդունեցին աստվածային շնորհներ և վերածնված հոգիներով վերադառնում են շարունակելու իրենց քրիստոնեական և հայկական առաքելությունը, հովվելու մեր հավատացյալ ժողովուրդը հեռավոր Ամերիկայում, բաշխելու նրանց Ավետարանի լույսը, Աստուծո խոսքը կենարար, բաշխելու նրանց շնորհները և օրհնությունները, որ բխում են այս ս. սեղանից, ու նաև ոգի ի բռին աշխատելու, որպեսզի մեր ժողովրդի պանդուխտ զավակները իրենց քրիստոնեական հավատքի հետ միասին պահպանեն ամուր, պահպանեն անայլայլ իրենց հայկական հոգին: Որովհետև մենք դավանում ենք, որ Աստուծո իսկ տնօրինությամբ, Փրկչի իջման իսկ խորհուրդով այստեղ, ի Հայաստան աշխարհ, միաձուլվեց հայոց հավատքը հայ ոգիին հետ միասին, միաձուլվեց Հայաստանյայց եկեղեցին հայ ժողովրդի հետ, նրանք**



Մի պահ Կոչման արարողությունից

դարձան մեկ մարմին, մեկ հոգի՝ հավետ միացյալ, հավետ անբաժան, հավետ անբաժանելի: Ահա այս ոգով է, որ մեր նորապսակ եպիսկոպոսներ Վաչե և Վազգեն պիտի առաջնորդեն մեր պանդուխտ ժողովուրդը: Դուք, սիրելի հավատացյալներ, որ վկաները հանդիսացաք այս ս. ձեռնադրության, և դուք էլ մեզ հետ միասին գոչեցիք՝ արժանի են, վստահ եմ, թե ուրախ եք այսօր, և դուք էլ մեզ նման և մեզ հետ մաղթում եք, որ Աստված նրանց երկար և քաջառողջ կյանք պարգևի, նրանց բոլոր գործերը պսակի լիակատար հաջողությամբ և արժանի անի աստվածային օրհնության և մեր գնահատանքին: Սիրելի նորապսակ սրբազաններ, կարծում ենք, թե այս ս. արարողության աղոթքները, ընթերցումները, այս խունկն ու Աստծո լույսը և այս ծովածավալ ժողովրդյան ներկայությունը անմոռանալի տպավորություն թողած պետք է լինեն ձեր հոգու վրա, այսօր, երբ դուք վերածնվում եք և դառնում եք այսուհետև բարձրաստիճան հոգևոր տեսուչներ, եպիսկոպոսներ, ամենայն պատասխանատվության գիտակցությամբ թե՛ հոգևոր, թե՛ բարոյական և թե՛ հայկական ազգային իմաստով: Մենք իբրև Հայոց Հայրապետ, իբրև ձեր հոգևոր ծնողը, շնորհավորում ենք ձեզ և հայցում ենք ձեզ համար Աստուծո օգնականությունը, Աստուծո ողորմությունը և Աստուծո օրհնությունը այժըմ և հավիտյան ամեն:

Երթալք խաղաղութեամբ. սէր և շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ»:

Վեհափառ Հայրապետի քարոզից հետո շարունակվում է հանդիսավորապես ս. պատարագը՝ «Ողջոյն»-ից սկսած:

Այսօր հայրապետական պատարագի երգեցողության իրենց շնորհալի մասնակցությունն են բերում երկու տաղանդավոր երգչուհիներ՝ Լիլի Չուքասզյանը և Գոհար Գասպարյանը, Մայր տաճարն ու բոլոր ներկաների հոգիները լցնելով հայկական սուրբ և անմահ պատարագի աստվածային խորհըր-



Օծում տ. Վաչե եպիսկոպոսի

դով ու մեղեդիով: Հազարավորներ տաճարից դուրս կանգնած, բարձրախոսի միջոցով ըմբոշխնում են օրվա հանդիսության և երգեցողության հոգեկան անխառն բերկրանքը:

### Շնորհավորություններ գահասրահում

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը հանդիսավորությամբ առաջնորդվում է գահասրահ՝ շնորհավորություններ ընդունելու Իր գահակալության 12-րդ տարեդարձի առիթով:

Եկեղեցական թափորը «Որ զշնորհս» շարականի երգեցողությամբ բարձրանում է վեհարանի հանդիսությանց մեծ դահլիճը և կանգ առնում գահասրահում:

Ն. Ս. Օծությունը բազմած Իր գահի վրա, գահակալության 12-րդ տարեդարձի առթիվ ընդունում է եկեղեցու և Իր հոգևոր զավակների շնորհավորությունները:

Մայր տաճարի լուսարարապետ և Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետ տ. Հայկազուն արքեպիսկոպոսը, հանուն Մայր Աթոռի միաբանության, Գերագույն հոգևոր խորհրդի և ներքին թեմերի, սրտագին շնորհավորում է Վեհափառ Հայրապետի գահակալության 12-րդ տարեդարձը՝ մաղթելով, որ Տերը երկար տարիների բարի հովվապետություն շնորհի Ն. Ս. Օծության, ի պայծառություն Հայց. առաք. եկեղեցու, հանսասանություն՝ Մայր Աթոռ ս. Էջմիածնի, և ի մխիթարություն՝ հայ հավատացյալ ժողովրդի, և ի բարօրություն՝ հայրենյաց:

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը ջերմորեն շնորհավորելով Հայոց Հայրապետի գահակալության տոնը, ասում է.

«Ձերդ Սրբություն,

Այս պաշտոնական և հանդիսավոր առիթով ես գերագույն հաճույքը և պատիվը ունեմ ներկայացնելու այստեղ մեր պետությունը, պետություն, որը ճիշտ մեկ ամիս հետո նշելու է իր ստեղծման հիսուներորդ տարելիցը:

Սուրբ Էջմիածինը վավերական վկան է մեր ժողովրդի պատմության վերջին հազար վեց հարյուր տարիների: Այդ տասնվեց հարյուրամյակները շատ ավելի խոր վերքեր են դրել մեր երկրի ու ժողովրդի սրտում, քան ապեղանի: Այս պատերի լուռ, այլև բազմախոսուն հայացքը հաճախ է առիթներ ունեցել փայփայելու իր ստորոտին թշնամու ձեռամբ անօթևան ծգված, քաղցած ու տանջահար հայ բազմությունները:

Ս. Էջմիածինը եղել է նաև վավերական գործոն մեկ ուժը մեր ժողովրդի ազատագրության պայքարի ճանապարհին, և այդ ոչ միայն դարավոր մշակույթի զարգացումը սատարելու, այլև ազատագրության գործի կազմակերպմանը թիկունք կանգնելու իմաստով: Ս. Էջմիածինը առաջիններից մեկն էր, որ կարողացավ ճիշտ կողմնորոշվել և ճիշտ կողմնորոշել հայ ժողովրդին դեպի հավիտյան եղբայրական բարեկամությունը ռուս ժողովրդի հետ: Ներսես Աշտարակեցի կաթողիկոսը ռահվիրան եղավ պատմության քառուղիներում խարխափող մեր ժողովրդի վերջնական կողմնորոշման այդ բախտորոշ հարցում:

Ս. Էջմիածինը վկան եղավ և է մեր ժողովրդի պատմության վերջին տասնամյակների, Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից հետո, մինչև այսօր, սովետական իշխանության կենարար արևի ներքո: Այս պատերի լուռ, այլև բազմախոսուն ջերմացած հայացքի առջև հասակ նետեց մեր երկիրը, կառուցեց ու ստեղծագործեց, ուռճացավ ու բազմացավ:

Հավատարիմ հայրենասիրական ավանդության, սովետական իշխանության մեջ տեսնելով միակ փրկարար ուժը մեր ժողովրդի համար, Ամենայն Հայոց Հայրապե-

տությունը հենց ի սկզբանե կանգնեց նրա կողքին, բանիվ և գործով օժանդակելով նրա վերաշինությանը, վառ պահելով հայրենասիրության ջահը աշխարհիս տարածքով սփռված հայության սրտում: Այդ ընթացքով ամերեր գնացին Հայրապետները Ամենայն Հայոց, նույն ընթացքով, ահա, այսօր արդեն տասներկու տարի գնում է Նորին Սրբություն Վազգեն Ա-ը:

Մեր երկիրը բարձր է գնահատում, Ձերդ Սրբություն, Ձեր հայրենասիրական գործունեությունը, Ձեր բարձր ջանքերը, որպեսզի խաղաղություն լինի, և ժողովուրդների եղբայրական ընտանիքում հայ ժողովուրդն էլ ապրի ու ստեղծագործի ապահով, որպեսզի միաբանություն լինի, և հայ ժողովուրդը մեկ մարդու պես համախմբվի իր միակ հայրենիքի՝ Սովետական Հայաստանի շուրջ:

Ձերդ Սրբություն,

Թույլ տվեք այս մաղթանքներով, Ձեր գահակալության տասներկուերորդ տարեդարձի առթիվ, սրտանց շնորհավորել Ձեզ՝ Խորհրդիս և իմ անունից, ցանկալով Ձեզ արևշատություն և Ձեր հայրենասիրական ջանքերին՝ արգասաբեր պտուղներ»:

Հանդիսության վերջում օրհնության և գոհունակության հայրական խոսք է ասում Վեհափառ Հայրապետը՝ Իր գահակալության առթիվ տ. Հայկազուն արքեպիսկոպոսի միջոցով արտահայտված ջերմ շնորհավորանքների և բարեմաղթությունների համար:

Հայոց Հայրապետը Իր զգացված, սրտագին շնորհակալությունն է հայտնում նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանին՝ իր ու Խորհրդի անունից արտահայտած նրա շնորհավորանքների համար:

Այնուհետև Ն. Ս. Օծությունը օրհնելով ազգն ու եկեղեցին, ժողովուրդն ու հայրենիքը, աշխարհին խաղաղություն է բարեմաղթում, սեր ու համագործակցություն՝ քրիստոնեական եկեղեցիներին, Աստծու փառքին ու մարդկանց մխիթարության համար:

Գահասրահում հանդիսությունն ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և շնորհավորական աջահամբույրով:

### Պաշտոնական ընդունելություն վեհարանում

Ժամը 4-ին վեհարանում, Վեհափառ Հայրապետի գահակալության 12-րդ տարեդարձի առթիվ, կազմակերպվել էր պաշտոնական ընդունելություն, որին ներկա էին ավելի քան 80 հրավիրյալներ և հյուրեր, այդ



Օծում տ. Վազգեն եպիսկոպոսի

թվում՝ Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, հոգևոր ճեմարանի դասախոսներ, վանքի պաշտոնեությունը:

Ընդունելությանը ներկա էին նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը և տեղակալ Ս. Հովհաննիսյանը:

Հրավիրյալների թվում էին՝ ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Վաչե և տ. Վազգեն եպիսկոպոսները, տ. Օհան ծ. վարդապետը՝ Սան-Պաուլոյից, տ. Ոսկան աբեղան՝ Մելբուրնից, տ. Սուրեն ավագ քհն. Բաբախանյանը՝ Դետրոյտից, տկն. Լիլի Զուքասզյանը իր ամուսնու հետ՝ ԱՄՆ-ից, Երվանդ Հյուսիսյանը, Արամայիս Սրապյանը՝ Միլանոյից, տեր և տիկին Արծրուն-Էլիզա Զրբաշյանները՝ Մարսելից, երաժշտագետ Աշոտ Պատմագրյանը, բանաստեղծ Գառնիկ Ադդարյանը, հասարակական գործիչ Փանոս Դիդիզյանը՝ Բեյրութից, բանաստեղծուհի Մարի Աթմաճյանը՝ Փարիզից, գրող Վահրամ Մավյանը՝ Լիսաբոնից, երաժշտագետ Միհրան Թումաճանը, Ստեփան Տեր-Գրի-

գորյանը և Հակոբ Նազարյանը՝ ԱՄՆ-ից, Կարապետ Փափազյանը՝ Պլովդիվից և ուրիշներ:

Հայրենի մտավորականներից և արվեստագետներից հրավիրվել էին՝ Գոհար Գասպարյանն իր ամուսնու հետ, Կոստան Զարյանը, Սիլվա Կապուտիկյանը, Մարո Մարգարյանը, պրոֆ. Մեդնիկյանը, Գր. Բեքմեզյանը, վերապատվելի Սարգիս Կոնսոլյանը և ուրիշներ:

Սրահն օրհնում է Վեհափառ Հայրապետը: Մայր Աթոռի բարիքներով զարդարված սեղանների շուրջ ստեղծվում է ջերմ, հայրենասիրական մթնոլորտ:

Ընդունելության ժամանակ Վեհափառ Հայրապետի գահակալության տոնը շնորհավորում են ներկաներից շատերը, ջերմ, սրտագին ելույթով:

Տ. Վաչե և տ. Վազգեն նորապսակ եպիսկոպոսները Վեհափառ Հայրապետին ուղղյալ որդիական երախտագիտության և շնորհակալության սրտագին խոսքեր են ասում, ուխտելով մի անգամ ևս իրենց նվիրյալ աշխատանքով արդարացնելու Վեհափառ Հայրապետի բարձր վստահությունը և թեմի ազգային-եկեղեցական մարմինների և ժողովրդի սպասումներն ու համակրանքը:

Ընդհանուր խանդավառության մեջ տաղանդավոր երգչուհի Գոհար Գասպարյանը երգում է «Կիլիկիա»-ն, իսկ շնորհալի բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը արտասանում է իր ինքնագիր սքանչելի քերթվածքը՝ «Հայկական բարդի», հոգևոր ճեմարանի դասախոս Սամվել Անթոսյանը՝ գրաբար լեզվով Եղիշեից «Տիկնայք փափկասունք հայոց աշխարհի»-ն և Վարդանի ճառը, իսկ Պ. Շահբազյանը՝ Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը:

Ընդունելությունն ավարտվում է Վեհափառ Հայրապետի տերունական աղոթքով:

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՆԱԳՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հոկտեմբերի 4-ին Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն տվեց Երևանում՝ Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Նագուշ Հարությունյանին:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին՝ Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը, Վրաստանի հայոց թեմի առաջնորդ տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանը, Կանադայի հայոց առաջնորդական փոխանորդ տ. Վաչե եպս. Հովսեփյանը, ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Վազգեն եպս. Գըպըրըսլյանը, Մելբուրնի հայոց հոգևոր հովիվ տ. Ոսկան աբեղա Գալփակյանը, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Հ. Բ. Ը. Միության երկրորդ նախագահ և Եվրոպայի շրջանային հանձնաժողովի նախագահ պրն. Երվանդ Հյուսիսյանը (Միլանոյից), Մարսելի թեմական վարչության ղեկավարներից՝ Արծրուն Ջրբաշյանը, Հ. Բ. Ը. Միության Մարսելի մասնաճյուղի տիկնանց հանձնաժողովի նախագահ տկն. Էլիզ Ջրբաշյանը, սփյուռքահայ երաժշտագետ Աշոտ Պատմագրյանը (Բեյրութից), Մայր Աթոռի բարերար Ստեփան Տեր-Գրիգորյանը և Հակոբ Սմսարյանը:

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահի, Ամենայն Հայոց Հայրապետի և բոլոր ներկաների միջև տեղի ունեցավ ջերմ զրույց՝ սրտագին մթնոլորտում:

Ընդունելությանը ներկա էր նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը:



# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ Բ. ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

**Նոյեմբերի 10-ին՝ հինգշաբթի օրը,** Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն տվեց Երևանում, Կառավարական տանը, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Բ. Մուրադյանին։

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էր Մայր տաճարի լուսարարապետ և Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը։

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահի և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց՝ սրտագին մթնոլորտում։

Զրույցին ներկա էր նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը։



ԼԵՆԻՆԳՐԱԴ. ԻՍԱԱԿԵՎՅԱՆ ՏԱՃԱՐԸ




ԼԵՆԻՆԳՐԱԴ. ՊԵՏՐՈՍ Ա-Ի ՀՈՒՇԱՐՁԱՆԸ



# ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԼԵՆԻՆԳՐԱԴՈՒՄ ԵՎ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

## ԼԵՆԻՆԳՐԱԴՈՒՄ

**Հոկտեմբերի 25-ին և 26-ին** Լենինգրադում տեղի ունեցավ Խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեի հոբելյանական նստաշրջանը՝ նվիրված խաղաղության վերաբերյալ լենինյան դեկրետի 50-ամյակին:

Նստաշրջանին հրավիրված էր նաև Նորին Սուրբ Օծություն **Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը**, իբրև Խաղաղության սովետական կոմիտեի մշտական անդամ:

**Հոկտեմբերի 24-ի** առավոտյան Վեհափառ Հայրապետը մեկնեց Լենինգրադ: Ն. Ս. Օծությանն ճանապարհ դնելու համար օդակայան էին եկել Մայր Աթոռի միաբանությունը:

Հայոց Հայրապետին ճանապարհում էր նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ **Կ. Դալլաքյանը**:

Նորին Վեհափառությանը ընկերանում էին Ադրբեջանի թեմի առաջնորդ գեր. տ. Հուսիկ եպիսկոպոսը և Մայր Աթոռի դիվանապետ Հայկ Առաքելյանը:

Չորս և կես ժամ տևող թռիչքից հետո «Իլ—18» օդանավը վայրէջք կատարեց Լենինգրադի օդակայանում:

Օդակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել Լենինգրադի և Նովգորոդի միտրոպոլիտ գեր. տ. **Նիկոդիմը**, Զագորսկի հոգևոր ակադեմիայի տեսուչ, գեր. տ. **Ֆիլարետ եպիսկոպոսը**, Լենինգրադի հոգևոր ակադեմիայի տեսուչ **տ. Հերման վարդապետը**, քահանա հայրեր և Խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեի ներկայացուցիչը:

Փոխադարձ ողջույնից և ողջագուրումից հետո, Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ Նիկոդիմ միտրոպոլիտի, առաջնորդվեց Լենինգրադի «Եվրոպա» հյուրանոցում Իրեն հատկացված հարկաբաժինը:

Հյուրանոցում հրաժեշտ առնելով Վեհափառ Հայրապետից, Նիկոդիմ միտրոպոլիտը խնդրեց, որ Նորին Սրբությունը Իր հետնորդներով, Լենինգրադում գտնված ժամանակամիջոցին, լինեն Լենինգրադի միտրոպոլիայի թանկագին հյուրերը:

Նույն օրը երեկոյան Վեհափառ Հայրապետը, գեր. Նիկոդիմ միտրոպոլիտի հրավերով, ներկա գտնվեց Լենինգրադի հոգևոր ակադեմիայում ուսանողների հոգևոր համերգին, որը մեծ տպավորություն թողեց ներկաների վրա:

Համերգից հետո ճաշկերույթ տրվեց ի պատիվ խաղաղության ժողովին ժամանած կրոնական ներկայացուցիչների: Պատվո սեղանի շուրջ տեղ գրավեցին՝ **Վեհափառ Հայրապետը**, Համայն Վրաց պատրիարք-կաթողիկոս **Տ. Եփրեմ Երկրորդ և Նիկոդիմ** միտրոպոլիտը և շուրջ քսան հոգևորականներ՝ ժամանած արտասահմանյան զանազան երկրներից՝ Եվրոպայից, Ասիայից և Ամերիկայից:

Հաջորդ օրը՝ **հոկտեմբերի 25-ին**, առավոտյան ժամը 10-ին, Սմոլնու պալատի դահլիճում բացվեց Խաղաղության սովետական կոմիտեի առաջին նիստը:

Սմոլնին Լենինգրադի հին. հոյակապ շենքերից մեկն է՝ կառուցված 19-րդ դարի սկզբներին: Հոկտեմբերյան հեղափոխության օրերին պատմական այս դահլիճում էր, որ տեղի ունեցավ Խորհուրդների պատմական 2-րդ համագումարը, որ Լենինը

հրապարակեց սովետական իշխանության առաջին դեկրետները խաղաղության և հողի ազգայնացման մասին:

Ընդարձակ սյունազարդ դահլիճը լեցուն էր բազմությամբ: Ժողովին եկել էին Խաղաղության սովետական և համաշխարհային կոմիտեների անդամները, հրավիրված էին արտասահմանյան 45 երկրների բարի կամեցողության տեր մարդիկ, սովետական նշանավոր գիտնականներ, գրողներ, արվեստի գործիչներ, մամուլի, ռադիոյի և հեռուստատեսության ներկայացուցիչներ:

Հանդիսավոր բացումից ու ողջույնի խոսքերից հետո, ժողովը լսեց Խաղաղության սովետական կոմիտեի նախագահ, գրողբանաստեղծ Նիկոլայ Տիխոնովի զեկուցումը՝ «Խաղաղության լենինյան դեկրետը և սովետական ժողովրդի 50 տարվա պայքարը խաղաղության համար» թեմայով:

Զեկուցումից հետո տեղի ունեցավ մտքերի փոխանակություն:

Նիստից հետո Վեհափառ Հայրապետը, Տ. Եփրեմ կաթողիկոսի, Նիկոդիմ ու Պիմեն միտրոպոլիտների ընկերակցությամբ, հրավիրվեց դիտելու Լենինի աշխատասենյակն ու բնակարանը Սմոլնիում:

Նույն օրվա երեկոյան նիստը և հաջորդ օրվա՝ հոկտեմբերի 26-ի ցերեկային նիստը տեղի ունեցան Տավրիկյան պալատում: Ելույթ ունեցան շուրջ 50 հոգի:

Այս պալատը ևս հին Պետերբուրգի նշանավոր շենքերից է եղել՝ կառուցված 1780-ական թվականներին, և պատկանելիս է եղել իշխան Պոտյոմկինին:

Ժողովը որոշեց սահմանել Խաղաղության սովետական կոմիտեի պատվավոր կրծքանշան՝ «Խաղաղության մարտիկին» մակագրությամբ, որով պարգևատրվելու են խաղաղության գործի համար առավել ակտիվորեն պայքարող գործիչներ: Այդ կարգի առաջին մեդալը հանդիսավոր իրադրության մեջ հանձնվեց Խաղաղության պաշտպանության Լենինգրադի կոմիտեին:

Հոկտեմբերի 28-ին ժողովի աշխատանքները ավարտվեցին:

Նույն օրը, ճաշից հետո, Պիսկարևսկայա մեմորիալ գերեզմանատանը տեղի ունեցավ Լենինգրադի աշխատավորների միտինգ՝ մասնակցությամբ Խաղաղության սովետական և համաշխարհային կոմիտեների անդամների և հոբելյանական նստաշրջանին ժամանած արտասահմանյան և սովետական հյուրերի:

Խորապես հուզիչ և ցնցող պատկեր է բացվում այցելուի առաջ վերոհիշյալ գերեզմանատանը: Այստեղ թաղված են 600000 լենինգրադցիներ՝ մեծ թե փոքր, կին թե տղամարդ, նրանք, ովքեր հերոսաբար ընկել են մարտի դաշտում և կամ սովամահ են եղել և կամ մեռել հիվանդություններից պատերազմի այն դաժան տարիներին, երբ Լենինգրադը պաշարված էր ֆաշիստական թշնամիների կողմից:

Գերեզմանատունը զբաղեցնում է նսկայական մի տարածություն՝ շուրջ 20 հեկտար: Խնամքով մշակված քառակուսի կանաչ հողաթմբերի տակ ամփոփված են նահատակների աճյունները: Գերեզմանատան մուտքի առաջ վառվում է հավերժական կրակը, որի շուրջը պատվո պահակ են կանգնել զինվորները: Խորքում՝ գրանիտե հսկայական հուշապատն է, իսկ նրա առջևը՝ մեծ հրապարակ, որի կենտրոնում, գրանիտե պատվանդանի վրա, վեր է խոյանում ռուս կնոջ բրոնզյա արձանը՝ ծաղկեպսակ դնելու նահատակների շիրիմներին:

Միտինգում ելույթ ունեցող հռետորները նշեցին Լենինգրադի պաշտպանների սխրանքները և կոչ արեցին առավել ևս ամրապնդելու խաղաղության արդար գործը, որպեսզի մարդկությունը երբեք այլևս չմատնըվի պատերազմի աղետներին:

Այնուհետև ծաղկեպսակներ դրվեցին նահատակների շիրիմներին՝ Խաղաղության համաշխարհային և սովետական կոմիտեների, Լենինգրադի աշխատավորության և սովետական 15 հանրապետությունների, այդ թվում՝ Հայաստանի աշխատավորների անունից:

Նույն օրվա երեկոյան Վեհափառ Հայրապետը Նիկոդիմ միտրոպոլիտի կողմից հրավիրվեց ճաշկերույթի: Վեհափառ Հայրապետը և Նիկոդիմ միտրոպոլիտը փոխադարձ ողջույնի և բարի մաղթանքների ճառեր փոխանակեցին:

**Հոկտեմբերի 27-ին** Վեհափառ Հայրապետը զբոսապտույտ կատարեց Լենինգրադում՝ դիտելով քաղաքի եկեղեցիներն ու տեսարժան վայրերը: Վեհափառ Հայրապետը այցելեց Նիկոլսկու մայր տաճարը, սրբ. Վլադիմիրի և Պրեոբրաժենսկու եկեղեցիները: Դրանք երեքն էլ հին պատմական եկեղեցիներ են, հոյակապ շինություններ, որոնք ա՜նքան լրացնում են քաղաքի ընդհանուր ճարտարապետական գեղեցկությունը:

Երեք եկեղեցիներումն էլ տեղի էին ունենում ժամերգություններ, որով եկեղեցիները լեցուն էին հավատացյալներով: Բոլոր եկեղեցիներումն էլ Վեհափառ Հայրապետին ցույց տրվեց արժանավայել ընդունելություն թե՛ հոգաբարձուների և թե՛ ներկա եղող հավատացյալների կողմից: Ամենուրեք Վեհափառ Հայրապետը աղոթեց և օրհնեց ներկաներին:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը դիմեց դեպի Իսակկյան տաճարը, որը հիացմունք




ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ Տ. ԱԼԵՔՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԸ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐՈՎ

է պատճառում դիտողին և հանդիսանում է Լենինգրադի զարդերից մեկը: Տաճարի կառուցումը տևել է 40 տարի (1818—1858 թթ.) ճարտարապետ Օ. Մոնֆերանը ձեռնարկել է կառուցումը 32 տարեկան հասակում և ավարտել այն ծերացած՝ 72 տարեկան հասակում:

Տաճարն ամբողջովին կառուցված է քարով: Ընդհանուր բարձրությունն է 100 մետր: Այն ունի 108 հատ հղկված գրանիտյա միակտուր հսկայական սյուներ: Հիանալի են տաճարի ներսի ոսկեզօծ քանդակները, խճանկարները, ուրալյան թանկարժեք քարերից պատրաստված սյուները և այլ զարդարանքները, որոնք տաճարին կարծեք հեքիաթային տեսք են տալիս:

Իր կառուցումից հետո տաճարը գրեթե չի նորոգվել: Մեծ վերանորոգչական աշխատանքներ են կատարված միայն վերջին 10 տարիների ընթացքում:

Վեհափառ Հայրապետին շատ ջերմորեն դիմավորեց և մանրամասն բացատրություններ տվեց տաճար-թանգարանի տնօրենը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով այցելում է Ալեքսանդր Նևսկու մայրավանքը, որը Լենինգրադի պատմական հուշարձաններից մեկն է և ներկայումս ծառայում է իբրև թանգարան: Այս մայրավանքը կառուցված է Պետրոս Մեծի ժամանակ և նրա նախաձեռնությամբ:

Մայրավանքից հետո Վեհափառ Հայրապետը մեծ հետաքրքրությամբ դիտեց 18 և 19-րդ դարերի ռուս պետական, հասարակական, մշակույթի և արվեստի գործիչների գերեզմանատունը:

Այստեղ Ն. Ս. Օձությանը հետաքրքրեց նաև հինավուրց այն մատուռ-դամբարանը, ուր ամփոփված են ռուսական բանակի հայազգի նայտնի զորավար Հովհ. Լազարյանի, ռուս մեծ զորավար Սուվորովի, ինչպես նաև նշանավոր իշխանների ու իշխանուհիների աճյունները: Հովհ. Լազարյանի աճյունը հետագայում է փոխադրված այստեղ և ամփոփված մարմարակերտ գեղեցիկ դագաղաձև տապանաքարի տակ, որի վրա հայերեն և ռուսերեն լեզուներով կան համապատասխան արձանագրություններ:

Մատուռ-դամբարանը դիտելուց հետո, Հայոց Հայրապետը շրջեց ամբողջ գերեզմանատունը, որը բավական ընդարձակ տարածություն է զբաղեցնում և բաժանված է երկու մասի: Այստեղ թաղված են համաշխարհային հռչակի արժանացած ռուս գրողներ, գիտնականներ ու արվեստագետներ՝ Դոստոևսկին, Լոմոնոսովը, Կոմիսովը, Չայկովսկին, Բորոդինը, Մուսորգսկին, Գլինկան և շատ ուրիշներ:

Ապա Վեհափառ Հայրապետը դիմում է դեպի Պետրոպավլովյան ամրոցը: Ամրոցի կառուցումը սկսվել է 1703 թվականի մայիսի 16-ին, որը և համարվում է Պետերբուրգի հիմնադրման օրը Պետրոս Մեծի կողմից: Ամրոցը ապագա մայրաքաղաքի առաջին շինությունն է եղել:

Այստեղ Վեհափառ Հայրապետը դիտեց միայն Պետրոպավլովյան տաճարը՝ կառուցված 1712—1733 թթ.: Այս տաճարում են ամփոփված ռուս ցարերը՝ սկսած Պետրոս Ա-ից մինչև Ալեքսանդր Գ-ը:

19-րդ դարից սկսած ամրոցը դարձել է բանտ, ուր նետվել են նշանավոր հեղափոխականները մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը:

Ինչպես ցարերի ժամանակ, այնպես էլ սովետական օրոք այստեղ է գտնվում պետական դրամատունը, ուր հատվում են ամեն տեսակի մետաղյա դրամներ:

Ցերեկվա ժամը 4-ը անց էր, երբ Վեհափառ Հայրապետը ավարտեց Իր պտույտը և վերադարձավ հյուրանոց:

Հոկտեմբերի 28-ին Վեհափառ Հայրապետը այցելեց Լենինգրադի մերձակայքում գտնվող տեսարժան վայրերը՝ Պուշկինոյի (նախկին Ցարսկոյե Սելո) և Պավլովսկի հոյակերտ պալատները, որոնք հանդիսացել են ռուս ցարերի ամառանոցները:

Վեհափառ Հայրապետը նախ այցելեց Պավլովսկ:

Այս ավանը գտնվում է Լենինգրադից 26 կմ հեռավորության վրա, ներկայիս ունի շուրջ 15000 բնակչություն: Պավլովսկը հիմնվել է 18-րդ դարի կեսերին: Այստեղ է գտնվում Պավել Ա կայսեր պալատը:

Ինչպես Լենինգրադի մերձակայքում գտնվող բոլոր պատմական հուշարձանները, այնպես էլ Պավլովսկի արքայական պալատը ենթարկվել է անասելի ավերածությունների վերջին համաշխարհային պատերազմի ժամանակ:

Հետպատերազմյան տարիներին մանրակրկիտ դժվարին աշխատանքներ են տարվում հերոս քաղաքի մերձակայքում եղած պալատները վերականգնելու համար:

Պավլովսկից Նորին Սրբությունը դիմեց Պուշկինո (Ցարսկոյե Սելո)՝ չնայած տեղատարափ անձրևին:

Այս գյուղաքաղաքը, որ թագավորական գյուղ է կոչվել անցյալում, հայտնի է իր Եկատերինյան պալատով, որի կառուցումը նույնպես սկսվել է 18-րդ դարի կեսերին և տևել է 100 տարի: Պալատի ընդհանուր երկարությունն է 306 մետր:

Այս պալատն էլ պատերազմի ժամանակ խիստ ավերվել է և միայն հրաշքով է փրկվել վերջնական կործանումից: Այստեղ ևս

վերականգնման մեծ աշխատանքներ են տարվում:

Պալատին կից է գտնվում նախկին կայսերական լիցեյի շենքը, ուր սովորել է հռչակավոր ռուս բանաստեղծ Ալ. Պուշկինը (այստեղից էլ Պուշկինո անունը), որի բրոնզյա գեղեցիկ արձանը դրված է պալատամերձ պարտեզում:

Երեկոյան խորը և անջնջելի տպավորություններով Վեհափառ Հայրապետը վերադառնում է Լենինգրադ:

**Հոկտեմբերի 29-ին՝** կիրակի օրը, Ն. Ս. Օծությունը Նիկոլսկի մայր տաճարում ներկա է լինում պատարագի արարողությանը: Պատարագիչն էր գեր. տ. Ֆիլարետ եպիսկոպոսը՝ միտրոպոլիտի փոխանորդը: Հսկայական տաճարը լեցուն էր հավատացյալների խուռներամ բազմությամբ: Վեհափառ Հայրապետին հատկացված էր պատվո տեղ տաճարի խորանում:

Պատարագից հետո Ֆիլարետ եպիսկոպոսը ջերմ խոսքերով ողջունեց Վեհափառ Հայրապետի ներկայությունը և մաղթեց Նրան քաջառողջություն և հաջողություն Իր հովվապետական բեղմնավոր գործունեության ասպարեզում:

Ն. Ս. Օծությունը պատասխան խոսքով ողջունեց ռուս մեծ եկեղեցին և նրա ծերունազարդ պետին՝ Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսիին և բարի մաղթանքներ ուղղեց ռուս եկեղեցու և հավատացյալ ժողովրդի հասցեին:

Կեսօրին Ֆիլարետ եպիսկոպոսը ճոխ ճաշկերույթ տվեց ի պատիվ Հայոց Հայրապետի: Ճաշին, որն անցավ խիստ ջերմ մթնոլորտում, ներկա էին Լենինգրադի թեմի հոգևորականներ և հոգևոր ակադեմիայի դասախոսներ:

**Հոկտեմբերի 30-ին և 31-ին** Վեհափառ Հայրապետը դիտեց հռչակավոր Էրմիտաժի թանգարանը, որն ունի 1050 դահլիճներ, և ուր ցուցադրված են երկու միլիոն երեք հարյուր հազար գեղանկարներ, արձաններ, քանդակներ ու այլ և այլ գեղարվեստական գործեր:

**Նոյեմբերի 1-ի** երեկոյան Նորին Սրբությունը օպերայի և բալետի թատրոնում ներկա եղավ Արամ Խաչատրյանի հեղինակային սիմֆոնիկ համերգին՝ մեծանուն երգահանի մասնավոր հրավերով:

**Նոյեմբերի 2-ի** երեկոյան Վեհափառ Հայրապետը Լենինգրադից գնացքով մեկնեց Մոսկվա:

Վեհափառ Հայրապետին ճանապարհ դնելու համար կայարան էին եկել ռուս եկեղեցու հոգևոր և աշխարհիկ ներկայացուցիչներ:

## ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

**Նոյեմբերի 3-ին,** առավոտյան, **Վեհափառ Հայրապետը** գնացքով ժամանում է Մոսկվա՝ ընկերակցությամբ տ. Հուսիկ եպիսկոպոսի:

Լենինգրադյան քաղաքային կայարանում Ն. Ս. Օծությանը դիմավորում են՝ Հյուսիսային Կովկասի և Ռուսաստանի հայոց առաջնորդ տ. Պարգև եպիսկոպոսը և տ. Պիմեն միտրոպոլիտն ու տ. Ալեքսեյ արքեպիսկոպոսը՝ հանուն Համայն Ռուսաց պատրիարք, Ն. **Սրբություն Տ. Ալեքսիի:**

Ն. Ս. Օծության ժամանումը ողջունում են՝ ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահի տեղակալ **Պ. Մակարցևը** և ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ **Կ. Դալլաքյանը:**

Ողջույնի և բարիգալստյան խոսքերից հետո, Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է «Պեկին» հյուրանոց:

**Նոյեմբերի 6-ին,** հետ միջօրեի ժամը 15-ին, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ տ. Հուսիկ և տ. Պարգև եպիսկոպոսների, այցելում է Մոսկվայի ռուսաց պատրիարքարանում Ն. Սրբություն Ալեքսի պատրիարքին:

Երկու քույր եկեղեցիների հոգևոր պետերի միջև տեղի է ունենում եղբայրական զրույց՝ սրտագին մթնոլորտում:

**Նոյեմբերի 7-ին,** հետ միջօրեի ժամը 15-ին, Վեհափառ Հայրապետը կառավարական հրավերով Մոսկվայում, Կրեմլի Նիստերի դահլիճում, ներկա է լինում Հոկտեմբերյան մեծ հեղափոխության 50-ամյակի առթիվ կազմակերպված կառավարական պաշտոնական ընդունելության:

Ընդունելության ժամանակ Հայոց Հայրապետը անձամբ, հանուն Իր, Մայր **Աթոռ ս.** Էջմիածնի և Հայց. առաք. եկեղեցու, կառավարության ղեկավարներին՝ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ **Ն. Վ. Պոդգոռնուն,** ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար **Լ. Ի. Բրեժնևին** և ՍՍՀՄ Մինիստրների սովետի նախագահ **Ա. Ն. Կոսիգինին** է ներկայացնում շնորհավորություններ՝ Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակի առթիվ:

**Նոյեմբերի 9-ին,** առավոտյան ժամը 11-ին, Հայոց Հայրապետը տ. Պիմեն միտ-



ԵՐԿՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԸ ԶԱԳՈՐՍԿՈՒՄ




ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀՈԲԵԼՅԱՐ Տ. ԱԼԵՔՍԻ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ Է ՀԱՆՁՆՈՒՄ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՇՔԱՆՇԱՆԸ

րոպոլիտի ուղեկցությամբ առաջնորդվում է Զագորսկի ռուս եկեղեցու մայրավանքը, ուր նշվելու է Ն. Սրբություն Տ. Ալեքսի պատրիարքի ծննդյան 90-ամյակը:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում են նաև տ. Հուսիկ և տ. Պարգև եպիսկոպոսները:

Ն. Ս. Օծությունը հանդիսավորությամբ առաջնորդվում է եկեղեցի՝ ներկա լինելու հանդիսավոր ս. պատարագին:

Արարողության ավարտին Տ. Ալեքսի պատրիարքն ու Հայոց Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում են վանատան հանդիսությանց մեծ սրահը:

Ն. Սրբություն Ալեքսի պատրիարքը իր ծննդյան 90-ամյակի առիթով ընդունում է բազում շնորհավորություններ:

Հանդիսության ներկա ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ Կուրոյեդովը, հանուն կառավարության և իրեն շնորհավորելով Ն. Սրբություն Տ. Ալեքսի պատրիարքի ծննդյան 90-ամյակը, հանձնում է կառավարական մեծ պարգևը՝ Աշխատանքային կարմիր դրոշ:

Հայոց Հայրապետը ևս, հանուն Իր և Մայր Աթոռ ս. Էջմիածնի շնորհավորելով Ալեքսի պատրիարքի 90-ամյա հոբելյանը, նրա կուրծքը զարդարում է ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի շքանշանով: Այս ուրախ առիթով Հայոց Հայրապետը Տ. Ալեքսի պատրիարքին նվիրում է նաև մի ընտիր հայկական գորգ:

Հանդիսության պաշտոնական ավարտից հետո, ռուսաց պատրիարքարանի կողմից ճաշկերույթ է տրվում՝ ի պատիվ բոլոր հյուրերի, բարձրաստիճան ռուս հոգևորականության, Զագորսկի աստվածաբանական ճեմարանի դասախոսներին և այլ հրավիրյալների:

Ճաշկերույթի ընթացքում Վեհափառ Հայրապետը հանդես եկավ ջերմ ողջույնի ճառով՝ սրտագին բարեմաղթություններ անելով հոբելյար ծերունազարդ սրբազան պատրիարքին: Ողջույնի խոսքեր արտասանեցին նաև ներկաներից շատերը՝ շնորհավորելով Ն. Սրբություն Տ. Ալեքսի պատրիարքին, որը հակառակ իր առաջացած տարիքին, առողջ է, կենսուրախ, զվարթամիտ՝ պահելով իր մտքի պայծառությունը:

Նոյեմբերի 10-ին Վեհափառ Հայրապետը, 17-օրյա բացակայությունից հետո, վերադառնում է Մայր Աթոռ՝ ընկերակցությամբ տ. Հուսիկ եպիսկոպոսի:

Մոսկվայի օդանավակայանում Հայոց Հայրապետին ճանապարհում են՝ տ. Պիմեն միտրոպոլիտը, տ. Պարգև եպիսկոպոսը և տ. Ներսես ծ. վարդապետը:

Հայոց Հայրապետին ճանապարհում է նաև ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահի տեղակալ Պ. Մակարցևը:

Երևանի օդանավակայանում Վեհափառ Հայրապետի վերադարձը ողջունում են՝ Մայր Աթոռի միաբանությունը, վանական խորհրդի անդամները՝ լուսարարապետ տ. Հայկազուն արքեպիսկոպոսի գլխավորությամբ:

Հայոց Հայրապետի ժամանումը ողջունում է նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը:

Վեհափառ Հայրապետը Մայր տաճարում Իր աղոթքն անելուց հետո, առաջնորդվում է վեհարան, ուր օրհնում է միաբանության անդամներին և բոլոր ներկաներին:



## ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ 50-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

**Նոյեմբերի 11-ին՝** շաբաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, Մայր տաճարում Վեհափառ Հայրապետի նախագահությամբ տեղի ունեցավ կառավարական մաղթանք՝ Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակի առիթով:

Արարողության ներկա էին՝ Գերագույն հոգևոր խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, մայրավանքի պաշտոնեությունը և հավատացյալների բազմությունը:

Օրվա հանդիսության համապատասխան ս. գրական ընթերցումներից, շարականներից և աղոթքներից հետո, տեղի ունեցավ անդաստան՝ Իջման ս. սեղանի առաջ:

Ժամը 12-ին հոգևոր ճեմարանում կազմակերպվել էր գրական-գեղարվեստական ցերեկույթ՝ Հոկտեմբերի 50-ամյակի առիթով:

Հանդիսության նախագահում էր Վեհափառ Հայրապետը՝ շրջապատված Գերագույն հոգևոր խորհրդի անդամներով:

Ներկա են՝ Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու վանքի պաշտոնեությունը և հրավիրյալներ:

Հանդիսությանը ներկա է նաև Հայկ. ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը:

Հանդիսությունը բացվում է ՍՍՀՄ և ՀՍՍՀ պետական հիմներով:

Հոգևոր ճեմարանի դասախոս արժ. տ. Հովհաննես քհն. Մարությանը կատարում է հանդիսության բացումը ներածական խոսքով:

Հոկտեմբերի 50-ամյակի առթիվ կազմակերպված հանդիսության իրենց մասնակցությունն են բերում հոգևոր ճեմարանի սաները՝ օրվա խորհուրդը նշող արտասանություններով, երգերով ու խմբերգերով:

Հոգևոր ճեմարանի երգչախումբը, երաժշտության դասատու Խորեն Մեխանաջյանի ղեկավարությամբ, կատարում է Կոմիտաս վարդապետի «Սարերի վրով գնաց», «Գարուն ա» և «Քաղհան» երկձայն խմբերգերը: «Հայրապետին խոսքը», որը հրատարակվել է «Էջմիածին» ամսագրի Ժ—ԺԱ համարում (1-ին էջ), ընթերցում է Բ լսարանի ուսանող Հակոբ Նալբանդյանը:

Գ դասարանի ուսանող Խ. Խաչատրյանը արտասանում է Ե. Չարենցի «Դեպի ապագան», Բ լսարանի ուսանող Հովհաննես Գրիգորյանը՝ Գ. Սարյանի «Հոկտեմբերի սիրունդներ», և Գ դասարանի ուսանող Տիգրան Սահակյանը՝ Ե. Չարենցի «Ամբոխները խելագարված» ստեղծագործությունները, Բ լսարանի ուսանող Արարատ Գալստյանը դաշնամուրի վրա նվագում է Բեթհովենի Սոնատի առաջին մասը:

Օրվա հանդիսության գլխավոր բանախոսն է «Էջմիածին» ամսագրի խմբագիր և հոգևոր ճեմարանի դասախոս Ա. Հատիտյանը, որը իր բովանդակալից ելույթում ծան-

խոսում է Հոկտեմբերի կատարած վճռական դերի մասին հայ ժողովրդի պատմական ճակատագրի որոշման գործում, վերածնված մայր հայրենիքի 47-ամյա նվաճումների, Մայր Աթոռ ս. Էջմիածնի հայրենասիրական գործունեության մասին, հայրենի երկրի խաղաղ և ապահով պայմաններում:

Հանդիսության փակումը կատարվում է Վեհափառ Հայրապետի օրհնությամբ: Ն. Ս. Օծությունը Հոկտեմբերի հաղթանակի մեջ ողջունում է առավելապես խաղաղության և փոքր ազգերի ինքնորոշման իրավունքի հայտարարությունը, որը կյանքի է կոչված 47 տարիներից ի վեր մեր վերածնված մայր հայրենիքում:

Իր խոսքի ավարտին՝ Վեհափառ Հայրապետը նորանոր հաջողություններ է մաղթում մեր հայրենիքին ու ժողովրդին սովետական եղբայրական ժողովուրդների ընտանիքում:

ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆ

## ԳԱՐՈՒՆ

Թագավորական լեռներ: Արարատը,
Թևերը բաց արած
Պարը Հայկական,
Սկիհը բարձրացրած լազուրը Սևանի:
Ճանապարհներ անհամար,
Բոլոր ուղղություններին հասնող:
Արտեր առատ,
Այգիներ փարթամ:
Մարեմխոտ բուրող
Եվ բարձր խոտերի տակից
Լալազարներ կարմիր ձայնով երգող,
Օդը բուրվառող:
Հանկարծ Սևանի վրա
Երկինքը իր սավանը թափ է տալիս.
Արևը բռնկվում է. պսպղալով վայր թափվում:
Ճառագայթների միջից
Դուրս է գալիս
Քղամիդ հագած մի հերոս —
Արա՞ն է արդյոք —
Նա կապում է իր սանդալները ոսկեզօծ,
Նետում աղեղը իր ուսին
Եվ նոր գարնան հետ վերածնված
Մի աստված,
Աչքերը վառ, վարսերը գանգուր,
Թեթև քայլերով
Մեկնում է դեպի լեռները:
Ինչքա՞ն պայծառ է Հայաստանը:

Երևան, մայիս, 1967

# ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՎԱՉԵ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ



Նորապսակ տ. Վաչե եպս. Հովսեփյանը, ավազանի անունով՝ Հովսեփ, ծնվել է 1930 թվի հունիսի 11-ին Բեյրութում (Լիբանան): Հովսեփն իր ծնողների՝ Գրիգոր և Օվսաննա Հովսեփյանների հինգ զավակներից միջնեկն էր:

Նախնական կրթությունը փոքրիկ Հովսեփը ստանում է Բեյրութի Մեսրոպյան ազգային վարժարանում և 1944 թվին ընդունվում Անթիլիասի դպրեվանքը, որի քառամյա դասընթացը փայլուն հաջողությամբ ավարտելով, 1948 թվի սեպտեմբերին սարկավագ է ձեռնադրվում տ. Դերենիկ եպս. Փոլադյանի ձեռքով:

1951 թվի հունիսին հաջողությամբ ավարտելով դպրեվանքի ընծայարանի եռամյա դասընթացը, կուսակրոն քահանա է ձեռնադրվում հունիսի 24-ին՝ տ. Դերենիկ եպիսկոպոսի կողմից:

Այնուհետև երիտասարդ, խոստումնալից վարդապետի առաջ բացվում են վանական-վարչական, մշակութային-քարոզչական բեղուն ասպարեզ:

1953 թվի փետրվարին ուղարկվում է Անգլիա՝ երանաշնորհ Տ. Գարեգին կաթողիկոսի մահից առաջ եղած համաձայնությամբ աստվածաբանական իր ուսումը շարունակելու որպես Երվանդ Հյուսիսյանի սան:

Ուսանողական տարիներին Անգլիայում մնում է Մըրֆիլտի ս. Հարություն կոլեջի, ապա Էտինբուրգի համալսարանի աստվածաբանական դասընթացներին, թեկնածու լինելով սյանկավոր աստվածաբանության տիտղոսին:

Անգլիայում ուսումն ավարտելուց հետո, նշանակվում է Միացյալ Նահանգներ՝ հովվական պաշտոնով Յունիըն—Սիտի, Նյու-Ջըրզի քաղաքի ս. Խաչ եկեղեցու:

Հովվական գործունեության շրջանին շարունակում է խորացնել իր աստվածաբանական գիտելիքները՝ հետևելով Նյու-Բրունըսվիկի աստվածաբանական դասընթացքնե-

րին, վկայվելով պսակավոր աստվածաբանության տիտղոսով:

Հովվական պաշտոնավարության շրջանին գործուն մասնակցություն է բերում թեմի եկեղեցական, կրթական կյանքին՝ որպես թեմական խորհրդի, կիրակնօրյա դպրոցների կենտրոնական խորհրդի, թեմի հրատարակության խմբագրական մարմնի անդամ:

Առաջնորդարանի կողմից որպես ներկայացուցիչ մասնակցել է Ամերիկայի Ազգային եկեղեցիների խորհրդի միջեկեղեցական աշխատանքներին՝ հանուն հայ եկեղեցու:

Տ. Վաչե վարդապետը իր հովվական պաշտոնավարության շրջանին հրատարակել է «Երգեցողութիւնք Ծննդեան» և «Երգեցողութիւնք Ավագ շաբթուան» նոտագրյալ բազմաձայն գրքերը:

1967 թվին տ. Վաչե վարդապետը, ԱՄՆ-ի արևելյան թեմի առաջնորդ, գեր. տ. Թորգոմ եպիսկոպոսի առաջարկով, թեմական խորհրդի կողմից նշանակվել է Կանադայի հայոց առաջնորդական փոխանորդ, ուր պաշտոնի է անցել նոյեմբերին:

1967 թվի հունիսի 17-ին տ. Վաչե վարդապետը ծայրագույն վարդապետական աստիճան է ստացել՝ ձեռամբ տ. Թորգոմ եպս. Մանուկյանի:

1967 թվի հոկտեմբերի 1-ին Մայր տաճարում տ. Վաչե ծ. վրդ. Հովսեփյանը եպիսկոպոս ձեռնադրվեց Ամենայն Հայոց Հայրապետի կողմից:

Նորապսակ տ. Վաչե եպիսկոպոսը գտնըվում է իր հոգևոր ու մտավոր ուժերի հասունության և ծաղկման շրջանում, և իր կոչման ու հոգևոր պարտականությունների նվիրված եկեղեցական է, սիրված ու գնահատված՝ իր ժողովրդի և բոլորի կողմից:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է նորապսակ տ. Վաչե եպիսկոպոսին և բարեմաղթում նրան բեղուն գործունեություն՝ ապագա պաշտոնավարության պատասխանատու ասպարեզում:

## ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԸՊՐԸՍԼՅԱՆ



Նորապսակ տ. Վազգեն եպս. Գըպրըսլյանը, ավազանի անունով՝ Գևորգ, ծնվել է Մուսա լեռան Քեբուսիե գյուղում 1931 թվի հունիսին, հողագործի ընտանիքում:

1939 թվին ծնողների և համագյուղացիների հետ գաղթում է Լիբանան և հաստատվում Այնճար նորաշեն գյուղում, ուր և 1941 թվին հաճախում է տեղի նախակրթարանը, որի 5-րդ դասարանը ավարտած ընդունվում է Երուսաղեմի հայոց ս. Հակոբյանց վանքի ժառանգավորաց վարժարանը 1947 թվի հունվարին, և 1951 թվականի մայիսի 5-ին սարկավագ է ձեռնադրվում տ. Զարեհ եպիսկոպոսի կողմից: 1954 թվի օգոստոսին հաջողությամբ ավարտելով ընծայարանի դասընթացը, կուսակրոն քահանա է ձեռնադրվում տ. Եղիշե արքեպիսկոպոսից՝ վերանվանվելով տ. Վազգեն աբեղա:

Սարկավագության շրջանից, որպես ուսուցիչ և վերակացու, պաշտոնավարել է ժառանգավորաց վարժարանում և Սրբոց Թարգմանչաց նախակրթարանում:

Այնուհետև երիտասարդ վարդապետի առաջ բացվում է վանական-եկեղեցական, ուսուցչական-քարոզչական գործունեության լայն ասպարեզ:

1955 թվականին նշանակվում է Երուսաղեմի հայոց վանքի ավագ թարգման, իսկ 1956 թվի մարտին՝ Ամմանի հայոց հոգևոր հովիվ և տեղի Հեթումյան ազգային վարժարանի տեսուչ և ուսուցիչ:

1958 թվի սեպտեմբերին ստանում է մասնավոր վարդապետական գավազանի իշխանություն տ. Տիրան արքեպ. նորընտիր պատրիարքի տվչությամբ և նշանակվում վանքի կալվածոց տեսուչ և ընտրվում՝ Տնօրեն ժողովի անդամ:

1960 թվի հոկտեմբերին մեկնում է Լոնդոն՝ հետևելու աստվածաբանական դասընթացներին:

1963 թվին, որպես գավազանակիր տ.

Շնորհք սրբազան պատրիարքի, այցելում է Մայր Աթոռ ս. Էջմիածին։

1964 թվի հունվարին ստանում է ծայրագույն վարդապետական գավազանի իշխանություն՝ Լոնդոնի հայոց հայրապետական պատվիրակ տ. Պսակ արքեպ. Թումայանի տվչությամբ.

Նույն թվականի հունվարին մեկնում է Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ որպես հոգևոր հովիվ Օհայոյի Կլիվլենդ քաղաքի հայերի, ուր և ծավալում է հովվական բեղուն գործունեություն։

1966 թվի դեկտեմբերին տ. Վազգեն ծ. վարդապետը նշանակվում է Հյուսիսային Ամերիկայի արևելյան թեմի առաջնորդական փոխանորդ։

1967 թվի հոկտեմբերի 1-ին Մայր տաճարում Ամենայն Հայոց Հայրապետը եպիսկոպոս է ձեռնադրում տ. Վազգեն ծ. վարդապետին։

Նորապսակ տ. Վազգեն եպիսկոպոսը նույնպես գտնվում է իր հոգևոր, իմացական ուժերի հասունության շրջանում, ու իր կոչման ու հոգևոր պարտականություններին նվիրված հոգևորական է՝ գնահատված ու սիրված իր ժողովրդի և բոլորի կողմից։

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորելով նորապսակ տ. Վազգեն եպիսկոպոսին, մաղթում է նրան եկեղեցանվեր փայլուն հաջողություններ՝ իր ապագա պատասխանատու պաշտոնավարության ընթացքում։



# ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

## Հաղորդագրություն

**Ամենայն Հայոց Հայրապետը** նոյեմբերի 30-ին՝ հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Երևանում ենթարկվեց բժշկական վիրահատման (Hernia):

Գործողությունն անցավ բարեհաջող:

Վիրահատումը կատարեցին վիրաբույժ պրոֆեսորներ **Սուրեն Գալստյանը** և **Սուրեն Հովհաննիսյանը**:

Ն. Ս. Օծությունը դեկտեմբերի 19-ին՝ երեքշաբթի օրը, լրիվ ապաքինված վերադարձավ Մայր Աթոռ:

Այս առթիվ նվիրապետական Աթոռներից, բոլոր թեմերից, ազգային-եկեղեցական բոլոր մարմիններից և ծանոթ անձնավորություններից ստացվեցին բազմաթիվ հեռագրեր՝ Վեհափառ Հայրապետի առողջության և թանկագին կենաց արևշատության մաղթանքներով:

Սրտագին շնորհակալություն բոլորին:

*
* *

Հոկտեմբերի 2-ին՝ երկուշաբթի.—*Մայր տաճարում, Իջման սուրբ սեղանի վրա, իր եպիսկոպոսական անդրանիկ պատարագը մատուցեց նորաօծ գեր. տ. Վաչե եպս. Հովսեփյանը։*

*
* *

Հոկտեմբերի 3-ին՝ երեքշաբթի.—*Մոսկվայում Մեծ Բրիտանիայի արտակարգ ու լիազոր դեսպան Ջերի Հարիսոնը իր հարգելի տիկնոջ հետ և դեսպանության երկրորդ քարտուղար Սիմոն Հիների հետ այցելեցին Մայր տաճար։ Այնուհետև վեհարանում հարգարժան հյուրերին ընդունեց Վեհափառ Հայրապետը։*

*
* *

Հոկտեմբերի 5-ին՝ հինգշաբթի.—*ՄԱԿ-ի Մանկական ֆոնդի (ՅՈՒՆԻՍԵՖ) տնօրեն Հենրի Լաբուիսսը իր հարգելի տիկնոջ հետ այցելեց Մայր տաճար։*

*Վեհարանում հարգելի հյուրերին վերջում ընդունեց Վեհափառ Հայրապետը։*

*
* *

Հոկտեմբերի 6-ին՝ ուրբաթ.—*Մայր Աթոռ այցելեցին հյուրաբար Հայաստանում գտնվող Բուլղարիայի պատվիրակները։*

*Վեհարանում հյուրերին ընդունեց Վեհափառ Հայրապետը և բարի գալուստ մաղթեց բուլղար ժողովրդի պատվիրակներին՝ Ստանկո Դիմիտրովին, Բուլղարիո հողագործական միության ղեկավար, Սոֆիայի քաղաքային խորհրդի նախագահի տեղակալ Անգել Դիմիտրովին, բուլղարահայերի «Երևան» մշակութային լուսավորական կազմակերպության նախագահ Կապրիել Կապրիելովին, արվեստի և կուլտուրայի կոմիտեի քարտուղար Ժիվկու Վիչկովին, «Օտարոտնիչեսկո դելո» թերթի խմբագրի տեղակալ Վլադիմիր Զախարիևին, Բուլղարիայի Ժողովրդական Հանրապե-*

*տության ժողովի ղեկավար Կալոստ Կալուստյանին և ականավոր վիրաբույժ, պրոֆ. Հակոբ Ցակիրովին։*

*Հյուրերը Վեհափառ Հայրապետին նվիրեցին «Շիպկա»-ի հուշարձանի նկարը։*

*Ընդունելությունն անցավ սրտաբուխ և ջերմ մթնոլորտում։*

* * *

Հոկտեմբերի 8-ին՝ կիրակի.— *Մայր տաճարում իր անդրանիկ եպիսկոպոսական պատարագը մատուցեց և քարոզեց նորընծա գեր. տ. Վազգեն Գըպըըսյանը։*

*Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։*

* * *

Հոկտեմբերի 14-ին՝ շաբաթ.— *«Տոն սրբոց թարգմանչաց վարդապետացն մերոց».*

*Օշականի եկեղեցում Մայր Աթոռի լուսարարապետ գեր. տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, մասնավոր վարդապետության չորս աստիճաններ շնորհեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Մելբուրնի հայոց հոգևոր հովիվ հոգ. տ. Ոսկան աբեղա Գալփակյանին։*

*Արարողությանը ներկա էին Մայր Աթոռի ողջ միաբանությունը։*

* * *

Հոկտեմբերի 15-ին՝ կիրակի.— *Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Ոսկան վրդ. Գալփակյանը և քարոզեց «Ունտ դիք և կատարեցէք» բնաբանով։*

*Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։*

* * *

Հոկտեմբերի 22-ին՝ կիրակի.— *Մայր տաճարում պատարագեց և քարոզեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Սան-Պաուլոյի հայոց հոգևոր հովիվ հոգ. տ. Օհան ծ. վրդ. Գապագյանը։*

*Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։*

* * *

Հոկտեմբերի 23-ին՝ երկուշաբթի.— *Երեկոյան ժամը 6-ին վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ ներքո, գումարվեց Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը.*

* * *

Սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 25-ը *ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող բազմավաստակ երգահան, երաժշտագետ Աշոտ Պատմագրյանը հոգևոր ճեմարանում կարդաց իր 7-րդ դասախոսությունը՝ «Հայ երաժշտության պատմություն» թեմայով։*

*Դասախոսությունների ավարտին ճեմարանի տեսուչ տ. Ներսես ծ. վարդապետը շնորհակալություն հայտնեց սիրելի դասախոսին, հանուն բոլոր ներկաների, շահեկան դասախոսության համար։*

* * *

Հոկտեմբերի 28-ին՝ շաբաթ.— *Հոգևոր ճեմարանի ուսանողությունը, վերատեսչի և դասախոսական կազմի մասնակցությամբ, այցելեցին Բյուրականի աստղադիտարանը, որտեղ Բյուրականի գիտաշխատողներից Հայկ Բադալյանը ծանոթացրեց աստղադիտարանի աշխատանքներին և բացատրեց Բյուրականի աստղադիտարանի դերը և դիրքը համաշխարհային աստղագիտության ասպարեզում։*

* * *

Հոկտեմբերի 29-ին՝ կիրակի.— *«Գիւտ խաչի».*

*Մայր տաճարում պատարագեց և քարոզեց հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պողապալյանը՝ «Ընդ յայտնիլ սրբոյ խաչին ի տեղւոջն սրբութեանն» (Շարկ.) բնաբանով։*

* * *

Նոյեմբերի 5-ին՝ կիրակի.— *Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Մկրտիչ քհն. Մկրտչյանը։*

* * *

Նոյեմբերի 12-ին՝ կիրակի.— *Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը։*

* * *

Նոյեմբերի 13-ին՝ երկուշաբթի.— *Երեկոյան ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ ներքո, գումարվեց Գերագույն հոգևոր խորհրդի նիստը։*

* * *

Նոյեմբերի 16-ին՝ հինգշաբթի.—*Բեյրութից հյուրաբար Հայաստան եկած հասարակական գործիչ Հարություն Կուժունին և «Ազդակ» թերթի խմբագիր Ժիրայր Նայիրին այցելեցին Մայր Աթոռ և ընդունվեցին Վեհափառ Հայրապետի կողմից՝ վեհարանում։*

* * *

Նոյեմբերի 18-ին՝ շաբաթ.—*Վեհափառ Հայրապետը ընդունեց Փարիզից Հայաստան այցի եկած ծանոթ նկարիչ Արտավազդ Պերպերյանին։*

* * *

Նոյեմբերի 19-ին՝ կիրակի.—*Մայր տաճարում պատարագեց և քարոզեց Հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պողապալյանը՝ «Ել սերմնացան սերմանել զսերմանիս իւր» (Ղուկ. Ը, 5 հ.) բնաբանով։*

*Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։*

* * *

Նոյեմբերի 23-ին՝ հինգշաբթի.—*Երեկոյան ժամը 6-ին վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական նիստը։*



# ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԱԶԳԱՅԻՆ ԿՅԱՆՔ

### Վենետիկի ս. Ղազար վանք

Սեպտեմբերի 8-ին Վենետիկում, ս. Ղազար վանքում, ս. պատարագի մատուցմամբ, քարոզով և այլ հանդիսությամբ կատարվել է վանքի հիմնադրման 250-ամյա հոբելյանի բացումը:

Այս առթիվ Վենետիկի Մխիթարյան հայրերի միաբանության անդամ **հ. Ներսես վրդ. Տեր-Ներսիսյանը** խմբագրությանս ուղարկած հոդվածում համառոտ պատմականը անելուց հետո ս. Ղազարի վանքի հիմնադրման, գրում է օրվա հանդիսության մասին հետևյալը.

«Վանական ամփոփ ու ներանձնացյալ շրջանակի մեջ, աղոթքի քաղցրությամբ օծուն, տեղի ունեցավ բացման հանդեսը ս. Ղազարու 250-ամյակին:

Միաբանությունը փափաքեցավ, որ զուտ կրոնական ու վանական գույն ունենար անդրանիկ հանդեսը՝ հոգևին վերապրելու համար այն նվիրական պահը, երբ Մխիթար, իր առաջին աշակերտներուն հետ, միս մինակ և անաղմուկ, մտավ այն ամայի կղզին, որ այդ թվականեն կոչվեցավ հայոց կղզի:

Կհնչեն զանգերը հաղթական, չքնաղ տաճարին մեջ, ուր կհանգչի երանաշնորհ հիմնադիրը, կմատուցվի գոհաբանական սուրբ պատարագ:

Մեծն Մխիթարի ութերորդ հաջորդը, շուրջը ունենալով բազմաթիվ միաբանակիցներ, միաբանության անդամներուն կեսեն ավելին, նախատագիտության խումբ կմատուցանե Նախախնամության և ս. Աստվածամոր:

Ներկա է փոքր թիվ մը հավատացյալներու, Վենետիկի հայ գաղութին անդամներեն և տեղացի բարեկամներե կազմված:

Պատարագի սույբ արարողության հրավիրված է նաև Իրաքի առաջնորդ, գերշն. տ. Ասողիկ եպս. Ղազարյան, որ օրերս հյուրաբար կանգներ Վենետիկեն:

Երեկոյան ժամերգութենեն ետք, միաբանները կուղղվին դեպի մխիթարակերտ մեծ գրադարանի դահլիճը:

Մխիթար աբբահոր ի պատիվ քայլերգի հնչյուններուն հետ, ուխտիս ընդհանուր աբբահայրը, իր շքախումբով մուտք կգործե սրահ: Խորքին վրա կանգնած է Մխիթարի անդրին, ծաղիկներու և դրասանգներու մեջ:

Խոսք կառնե միաբանության ընդհանուր աբբահայրը՝ գերպ. Հմայակ վրդ. Կետիկյան, և հոգեշունչ ճառով մը կբանա գեղեցիկ խորհրդածություններու շղթան:

«Մեծ հուզումով կու գանք խանդավառորեն ոգեկոչելու այն պահը, զոր ապրեցան մեր նախնիք. երբ երկարամյա ալեկոծյալ թափառումներե, զրկանքներե ու տառապանքներե ետք անոնք ոտք դրին աս օրհնյալ կղզին, 1717 թվականի սեպտեմբերի 8-ին, և անոր խարխուլ եկեղեցվույն մեջ իրենց սիրտը և ուխտը մատուցին ս. Աստվածամոր:

Այդ օրեն սկիզբ առավ պատմությունը հայոց կղզիին, և քորոտներու հին անկելանոցին մեջ հիմերը դրվեցան հայ վերանորոգ վանականության, հոգևոր ներանձնության դարբնոցի մը վերածելով երբեմնի զինարանը վենետիկյան հզոր տորմիղներուն:

Նախախնամության առաջնորդությամբ, Արևելքեն եկած խումբ մը վանականներ Սեվանի Աստվածամոր ժպիտը ցանեցին այս ամայի կղզյակին վրա, զայն դարձնելու համար սրբության և լուսավորության օջախ մը, Ադրիատիկանի խաղաղ և հուրքնկալ ափունքին:

Եվ ս. Ղազար շենցավ, զարդարվեցավ, տարիներու և դարերու հետ մեծցավ, պարըսպապատ ամրոց և կազմակերպյալ վանք դարձավ, Վենետիկի լճակին գոհար կղզին կոչվեցավ:

Ի՜նչ քաղցրավոր աշխատանք... Եկեղեցին, ուր այս առավոտ մատուցինք հանդիսապես գոհաբանական սուրբ պատարագը, այս գեղակերտ գրադարանը, որ մասունքն իսկ է մեր երանաշնորհ հիմնադրին, վկաներն են այդ 250-ամյա ժիր և անխոնջ աշխատանքին ու նվիրումին:

Մեր վանքի ամեն մեկ անկյունը, իր շնորհալի կամարակապներով ու խորհրդավոր սրահներով, իր լուսազվարթ ընծայարանով ու մշտաճոխինչ մատույներով, իր հազարամյա մագաղաթներով, իր սլացիկ նոճիներով ու խնկաբույր շիրիմներով մեզի անդադար կփոխանցե գործոն ոգին մեր լուսերամ հայրերուն, մեծն Մխիթարի շունչով թաթավուն:

Արտասահմանի անցյալի ու ներկայի մեր առաքելությունները և վարժարանները, որոնք դալար ոստերն են ս. Ղազարի կենսունակ ոգիին, հայության հեռավոր և գիրուցան գաղութներուն մեջ ծլարձակված, և հաճախ անոնց քախտին կամ աղետին վիճակակից, մեր վանքի դարավոր պատմության խոսուն վկաներն են:

350 վանականներ, Մխիթար աբբահոր օրերեն, կյանք են առած այս խոնարհ կղզյակեն և սնած սրբության և գիտության օծումով, աշխատած են կրոնական և հոգևոր լուսավորության, ինչպես նաև մշակույթի ջահը արծարծել հայ իրականության մեջ»:

Բոլորին ուրախության մեջ ավետիս կտըրվեր, թե հոբելյանական մեծ հանդեսը տեղի պիտի ունենար քիչ ատենեն, համազգային տոնակատարությամբ և շուքով, նվիրական այդ թվականին զուգելով պաշտոնական բացումը նոր ձեռագրատան, որուն որմերը օրեօր արդեն իսկ կբարձրանան ս. Ղազարու մեջ, սիրելի բարերարի մը նախաձեռնությամբ: Այդ ձեռագրատունը պիտի ըլլա մեծագույն նվերը Մխիթարյան միաբանության այս հիշատակն անմահացնող:

Դժբախտաբար տակավին չեն լրացած անցյալ նոյեմբերի ողողումներուն հետևանքով վանքի կրած վնասները դարմանելու աշխատանքները, որոնք, սակայն, շուտով պիտի ավարտին, Աստվածամոր օրհնությամբ:

Վենետիկցի բարեկամներու և իտալական շրջանակներու համար ծրագրված է երրորդ հանդես մը, նպատակ ունենալով շոշափել իտալահայ մշակութային հարցեր, որոնց մեծ զարկ տված է միաբանությունը:

Գրական ուսումնասիրություններ և հիշատակի հրատարակություններ, հայ և այլ լեզուներով, պիտի գան հավերժացնելու այս հիշատակը:

Աստվածամոր ի պատիվ, ապաշխարության և նվիրումի վսեմ ու հուսալիր երգ մը կհնչեր հանկարծ, վանքի աշակերտության կողմե, բազմաձայն, դաշն ու խորհրդավոր, հեղինակությամբ՝ հ. Ղևոնդ վրդ. Տայանի:

Ու կու գային մեր հոգիներուն առջևեն անցնելու, լուսերամ հույլերով, միաբանությանս բոլոր հայրերը վաղեմի, Մխիթարեն Ալիշան, հոգեկան կայծեր կցեղվին անոնք՝ մանավանդ պատանի մեր ժառանգավորներու սրտերուն մեջ:

Հիշատակ արդարոց օրհնությամբ եղիցի:

Հազարտողյան նոր քերթված մը, բանաստեղծ հ. Վահան վրդ. Հովհաննիսյանի գրիչեն, կու գար բանալ հանդիսավոր թափորը անդենական խոհերու:

Հոգիներու հանգրվանը այն սուրբ վայրն է, ուր կհանգչին վանքին բոլոր վաստակավորները երբեմնի. ս. Ղազարու գերեզմանատունը, որ հոգերգու բանաստեղծին համար տխուր ու տրտմաթախիծ հիշատակներու թատերաբեմը չէ, այլ հավատքի բուրաստան մը, վարդակարմիր արշալույսին նման սիրելի. հոն բանաստեղծը կու գա շրջիլ հաճախ, ծաղիկներ դարմանել, խոսիլ մեր նախնիքներուն հետ, ներշնչվիլ անոնցմե, խանդավառվիլ անոնց հիշատակով: Բանաստեղծին համար այդ պահը «Մեռելոց» չէ, այլ հայ հոգիին և հայ հավատքին Վարդավառը:

Այս հոգեկան թափառումներեն մեկուն ընթացքին է, որ բանաստեղծը, Դանթեական երևակայությամբ բորբոքուն, կհանդիպի հանճարեղ պատմահայր Չամչյանին, խաղաղադեմ Ինճիճյանին, քրմահանդերձ Բագրատունիին, քամբռահայր Ոգիին Հայաստանյայց... Հուզումի գիշեր մը, վերհիշումներ կփթթին Հյուրմյուզի բուրաստանեն, Տարոնի նահատակ բանաստեղծի քնարեն... կհատնվին հուսկ դեմքեր մեզի ծանոթ ու սիրելի... մշտեռանդ Փեշիկյան վարդապետը, Ուլուհոճյան աբբահայրը մշտաժպիտ:

Բանաստեղծական ոգեկոչում՝ Մխիթարյան վանքի 250-ամյա գործունեության, հավատքի լույսերին տակ:

Քերթվածին ընդհանուր ներկայացումը կատարեց հ. Ներսես վրդ. Տեր-Ներսիսյան. հաջորդաբար, երիտասարդ վարդապետներ կարդացին ընտրանքով վեց մասեր. Նախեր-

գանք, Նոճիներու ստվերին, Նահապետին ձայնը, Սիրելիներու ժպիտը, Մեծ դամբանը, Աղոթք։

Ջերթվածն իր ամբողջությամբ (19 մասերե կբաղկանա) լույս պիտի տեսնե հոբելյանական հրատարակություններու շարքին։

Հանդեսի փակման, վանքի աշակերտներու երգչախումբը լսելի կըներ Մխիթար աբբայի հեղինակություններեն տաղ մը՝ «Գովեալ դասուցն հրեղինաց» սկզբնավորությամբ, որ ավանդաբար հասած է մինչև մեր օրերը, ուրիշ չորս տաղերու եղանակներուն հետ։

250 տարիե ի վեր, վանքի կարմիր պատերը և բոլորիս սրտերը»։

## Սուդանի հայ գաղութը և դպրոցական կյանքը

Ապրիլի վերջերին Խարթումում, Հ. Ե. Մ. Հրանդ մարզադաշտի նորակառույց բեմի վրա, տեղի է ունեցել Ստեփանյան ազգային վարժարանի և Պարսամյան մանկապարտեզի ամավերջի հանդիսությունը՝ հովանավորությամբ գաղութահայ ազգային վարչու-



Խարթումի ազգային վարժարանը. Տ. Մամբրե արքեպիսկոպոսը ուսուցչական կազմի և սաների հետ

Եղանակ մը, արևելյան անուշ գույներով, որ մեզ կտաներ դեպի Սեբաստիա, Սնան կամ Էջմիածին, քայլ առ քայլ հետևելու վերածնունդի մեծ Առաքյալի ճիգերուն և հսկա քայլերուն։

Հանդիսասրահեն բաժնվելով, միաբանները կիջնեին պարտեզ և գրեթե բնազդաբար կուղղվեին դեպի վանքի մայր դուռը. հոն կհասներ ծովը, ժամանակին. հոն, ճիշտ 250 տարի առաջ, այսպիսի ժամու մը, Մխիթար աբբահայր ոտք է դրած՝ իր առաջին աշակերտներուն հետ։ Սուրբ է տեղիս այս...

Այդ դռան մոտ այժմ բարձրացած է Մխիթարի մեծ անդրին։

Բայց մենք կհավատանք, որ Մխիթարի հոգին տակավին ներկա է մեր մեջ, ինչպես ոսկի շողերը սա վերջալույսին, որ կողողե,

թյան և ներկայությամբ Սուդանի կրթական նախարարի։

Հանդիսության ներկա են եղել՝ Խարթումի հայ գաղութը, աշակերտությունը, ծնողները և հյուրերը։

Հանդիսությունը սկսվել է սուդանական քայլերգով։ Այնուհետև աշակերտական ուժերով գործադրության է դրվել գեղարվեստական մի հայտագիր՝ բաղկացած արտասանություններից, խմբերգերից, պարերից և ներկայացումից։

Ապա դպրոցի տնօրեն Օննիկ Գալստյանը ներկայացրել է դպրոցի 1966—1967 ուսումնական տարվա ընդհանուր ծրագիրը։

Ապա կրթական նախարարի ձեռքով բաշխվում են մանկապարտեզի վկայականները ու մրցանակները։

Պրն. կրթական նախարարը խոսք առնելով, շնորհավորում է շրջանավարտներին և ապա շեշտում՝ Սուդանի հայության որպես տիպար օրինակելի քաղաքացիների նվիրվածությունը դեպի Սուդանի հողը, ժողովուրդըն ու կառավարությունը՝ գովելով հայ ժողովրդի հոգևոր, իմացական բարեմասնությունները ու շնորհները, որոնք ի սպաս են դրվում սիրով Սուդանի հանրապետության բարօրության ու զարգացման համար:

Այնուհետև հոգաբարձության գանձապահ-քարտուղար Նշան Բարձիկյանը ներկայացնում է դպրոցի տնտեսական հաշվետվությունը:

Հանդիսության փակումը կատարում է Սուդանի հայոց հոգևոր հովիվ տ. Սուրեն վրդ. Չինչինյանը:

Սուդանի հայ գաղութը շուրջ 70 տարվա պատմություն ունի: Առաջին գաղթական հայերը (Ակն, Թոքատ, Այնթապ և այլ քաղաքներից) հաստատվում են նախ Օմտուրման՝ զբաղվելով վաճառականությամբ և արհեստներով:

Գաղութի թիվը աճում է Առաջին համաշխարհային պատերազմից հետո:

Այժմ Սուդանում ապրում են շուրջ 800 հայեր, որոնցից 650 հոգի՝ մայրաքաղաքում՝ Խարթումում, և շուրջ 200 հոգի՝ այլ քաղաքներում:

Խարթումում 1920 թվին բացվել է հայկական առաջին դպրոցը, իսկ եկեղեցին շինվել է 1949—1954 թվականներին: Գաղութը ղեկավարվում է ընտրովի Սուդանահայ գաղութային ազգային վարչության կողմից: 1956 թվին գաղութը ունենում է իր դպրոցական մասնավոր շենքը՝ եկեղեցու կողքին:

Սուդանի կառավարությունն է նվիրել հայ համայնքին դպրոցի և եկեղեցու հողամասը՝ որպես գնահատություն հայ գաղութի նվիրումին ու աշխատասիրությանը:

Սուդանի հայ դպրոցը ինքնաբավ է՝ նվիրատվությամբ արաբկիրցի Հակոբ Ստեփանյանի, որը մահացել է 1959 թվին՝ դպրոցին ի նպաստ շոշափելի մի գումար նվիրելով:

Սուդանի հայ գաղութը որպես հոգևոր հովվություն, մտնում է եգիպտահայ թեմի մեջ, բայց անկախ է վարչականորեն տնօրինելու համայնքի բոլոր գործերը:

Գաղութահայ վարչությունն ունի իր կանոնադրությունը, որը վավերացվել է կառավարության կողմից:

Սուդանահայ գաղութի ազգային-եկեղեցական կյանքն, ընթանում է խաղաղ, արդյունավետ ու համերաշխ՝ շնորհիվ գաղութային վարչության իմաստուն ղեկավարության:

### Բուլղարահայերը Մայր Աթոռում

**Հոկտեմբերի 8-ին** Վեհափառ Հայրապետը բարեհաճեց վեհարանում ընդունել ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող մի խումբ բուլղարահայերի այցելությունը, որոնց թվում՝ Օննիկ Քյուրտյանի (Սոֆիայից)՝ ատենապետ եկեղեցական վարչության և փոխ-ատենապետ բուլղարահայ թեմական խորհրդի, Գևորգ Ասլանյանի (Սոֆիայից)՝ անդամ բուլղարահայ թեմական խորհրդի՝ իր հարգելի տիկնոջ հետ, Սարգիս Փաջաճյանի (Սոֆիայից)՝ կրթական երկարամյա գործիչ, Սարգիս Բաղդայանի (Պլովդիվից)՝ ս. Գրիգոր եկեղեցու վաստակավոր երաժըշտապետ, Կարապետ Գ. Փափազյանի (Պլովդիվից)՝ երկարամյա ավագ սարկավագ Պլովդիվի ս. Գրիգոր եկեղեցու և ատենապետ «Շնորհալի» եկեղեցական երկսեռ երգչախմբի:

Վեհափառ Հայրապետը այցելության ժամանակ ողջունեց բուլղարահայ ուխտավորների ներկայությունը և հետաքրքրվեց թեմի եկեղեցական, մշակութային կյանքով:

Վերջում Վեհափառ Հայրապետը բարեհաճեց Իրեն սեղանակից դարձնել հյուրերին:

Ընդունելության ժամանակ ծերունազարդ ավագ սարկավագ Կարապետ Գ. Փափազյանը, հանուն բոլոր ներկաների, ողջունելով Հայոց Հայրապետին, ասաց.

«Վեհափառ Տեր,

Կյանքի մեջ կան պահեր, որոնք թանկ ու երջանկաբեր են, ինչպիսին է անձայրածիր, կիզիչ անապատին մեջ գոյություն ունեցող զովասուն, հագեցնող օազիսը, որ կյանքը կնորոգե, կթարմացնե: Նման պահ մըն ալ մեզի վիճակվեցավ, երբ բախտը ունեցանք այցելելու Երևան ու Մայր Աթոռ ս. Էջմիածին:

Կյանքի մեջ շատ մը երազներ, իղձեր ալ կան: Հայուն դարավոր իղձը իրականացավ, քանզի այսօր մեզի պարգևված է ն՛ գահ, ն՛ սուրբ խորան: Հայրենիք այցելելով ականատես եղանք իրարու ժպտացող ավաններու, արվարձաններու, հաւու հանճարին, տաղանդին և ամուր բազուկին: Տեսանք դաշտերու մեջ զվարթորեն աշխատող մշակներու կյանքը, լսեցինք նաիրյան աղջիկներու արեվահամ երգերը, տեսանք դարերու հսկա, ալեհեր Արարատը: Տեսանք նույնպես մեր հավատքի դարավոր կոթողը՝ ս. Էջմիածինը, և անոր գահակալը՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը, որ նոր փառքով կպայծառացնե Մայր Աթոռը:

Հայը դարուն հետ քալելով, ամեն օր կըկերտե իր նոր կյանքն ու պատմությունը: Ան գիտե ապրի որպես ազգ և որպես եկեղեցի:

Մանկութենէս ի վեր ունեցած եմ մէկ սէր մը՝ եկեղեցիի սէրը։ Ժամանակին հետ այդ սէրը աճեցաւ, հաստատուեցաւ և շաղկապուած կեանքիս հետ։ 60 տարիներէ ի վեր, հակառակ ամեն խոչընդոտներու, սպասարկած եմ որպէս սարկաւագ հայ եկեղեցիին, իսկ Պլովդիվի ս. Գէորգ եկեղեցիին մէջ 54 տարիներէ ի վեր կսպասարկեմ և պատրաստ եմ դեռ ծառայելու, եթէ Ամենակալը հաճի դեռևս կեանք շնորհելու։ Իմ փափագն էր՝ որպէս սարկավագ սպասարկել նաև ս. Էջմիածնի Մայր տաճարին մէջ։ Իմ տարիներու իղձը իրականացավ։ Էջմիածնի տաճարին գմբէթին տակ իմ տկար ձայնովը երգելով, ես 60 տարիներու ծառայութեանս հատուցումը լիուլի ստացած եղայ։ Կրկին և կրկին շնորհակալութիւն, Վեհափառ Տէր, ինծի պարգևած այդ շնորհքին համար։

Վեհափառ Տէր,

Ձեր գահակալութեան բարեբաստիկ տարեդարձին առթիվ մեր բոլորին հոգիներէն միայն աղերս մը կբարձրանայ առ Աստուած, որ Ձեր հովանին միշտ թևածէ մեր վերև, մեր տկարութեանց պահերուն նոր ուժ ներշնչէ մեզի և մեր անհուսութեանց պահերուն հոյսի նոր արշալոյսներով մեր աչքերուն նոր հորիզոններ բանայ։

Քաղցր երջանկութիւն է այս առթիվ Ձեզի մաղթել երջանկութիւն և բեղուն գործունէութիւն։

Արդ, մատչելով Ձեր ս. աջոյն, բոլոր ներկաներուն իմ և «Շնորհալի» երկսեռ երգչախմբի կողմէ կշնորհաւորեմ Ձեր գահակալութեան 12-րդ տարեդարձը ու կհայցեմ Ձեր հայրական օրհնութիւնը մեր բոլորին վրա»։



Ա. ՀԱՏԻՏՅԱՆ

# ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎՐԱ

## (1920—1967 թթ.)

Հայ եկեղեցու պատմության բազում մասամբ շահեկան, ազգային-եկեղեցական իրադարձություններով հարուստ վերջին 50-ամյակի պատմությունը, ինչպես հարկն է, դեռևս չի գրվել:

Օրմանյան սրբազանը, որն այնքան հեղինականորեն գրել է հայ եկեղեցու պատմությունը իր մեծարժեք «Ազգապատում» երեքհատորանոց աշխատության մեջ՝ ներկայացնելու «Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը, սկիզբէն մինչև մեր օրերը, յարակից ազգային պարագաներով պատմուած», «Ազգապատում»-ի երրորդ հատորը հասցընում է մինչև 1910 թվականը, Մատթեոս Բ Իզմիրլյան կաթողիկոսի ընտրությունն ու օծումը, ազգային-եկեղեցական հարակից մի քանի դեպքերով («Ազգապատում», երրորդ հատոր, Երուսաղեմ, 1927, էջ 5524):

Իհարկե առանձին ուսումնասիրություններ հրատարակվել են թե՛ Մայր Աթոռի և թե՛ նվիրապետական մյուս Աթոռների գահակալների կյանքի ու գործունեության նվիրված, բայց պակասում է դեռևս լիակատար, ամբողջական պատմությունը հայ եկեղեցու, ուր ընդգրկված լինեն մեր ազգային-եկեղեցական տարագրության վերջին 50-ամյակը:

«Էջմիածին» ամսագրի 1967 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր համարներում ներկայացվել է հայրապետական կոնդակների, եղույթների, ճառերի և արխիվային նյութերի հիման վրա Մայր Աթոռ ս. Էջմիածնի վերջին չորս գահակալների՝ Գևորգ Ե, Խորեն Ա, Գևորգ Զ և արդի Հայրապետ Տ. Վազգեն Ա կաթողիկոսների հայրենասիրական-խաղաղասիրական գործունեության ամփոփ պատկերը միայն:

Այժմ ներկայացվում է Մայր Աթոռի պատմության վերջին 50-ամյակի և չորս գահակալների եկեղեցական, թեմական, վարչական ընդհանուր գործունեության համառոտ պատկերը՝ ազգային հարակից դեպքերով:

### Գևորգ Ե Տփխիսեցի—Սուրենյանց. 1911—1930

Գևորգ Ե կաթողիկոսը ծնվել է 1847 թ. օգոստոսի 28-ին Թիֆլիսում: Նախնական և միջնակարգ կրթությունը ստացել է ռուսական գիմնազիայում: Երիտասարդ տարիքից ընդունվել է Մայր Աթոռի միաբանության շարքերը: Գործել է Մատթեոս Ա, Գևորգ Դ, Մակար, Խրիմյան և Իզմիրլյան կաթողիկոսների օրոք Մայր Աթոռում և թեմերում: Վար-

դապետ է ձեռնադրվել, ապա 1887 թ.՝ եպիսկոպոս, և նշանակվել Սինոդի անդամ, Թիֆլիսի առաջնորդ և Իզմիրլյանի մահից հետո՝ տեղակալ։ Կաթողիկոս է ընտրվել 1911 թ. դեկտեմբերի 13-ին, օծվել է 1912 թ. հուլիսին։ Վախճանվել է 1930 թ. մայիսի 8-ին՝ հինգշաբթի օրը։

Գևորգ Ե-ի կյանքն ու գործունեությունը կարելի է բաժանել երկու հիմնական շրջանների. առաջինը՝ 1912—1920, և երկրորդը՝ 1920—1930 թթ. գործունեության։

Մենք առայժմ կանգ ենք առնելու 1920—1930 տարիների գործունեության վրա։

Գևորգ Ե-ի գահակալության վերջին տասը տարիները անցան Հայաստանում, սովետական կարգերի հաստատման և մեր հայրենիքի պետականության պայմաններում։

Մեր ժողովուրդը 1920 թվի նոյեմբերի 29-ին իր կյանքն ու ապագան կապում էր Հայաստանում սովետական կարգերի հաստատման հետ։ Ըստ պետական սահմանադրության ստեղծված նոր կացության առաջ, եկեղեցին բաժանվում էր պետությունից, դպրոցը՝ եկեղեցուց։

Մայր Աթոռը չէր կարող երբեք անտարբեր մնալ պատմական մեծ տեղաշարժերի հանդեպ, երբ մեր երկիրն ու ժողովուրդը անցնում էին ընկերային, հասարակական բարդ վերափոխումների բովից։

Մայր Աթոռը սթափ ոգով գնահատում էր ստեղծված կացությունը, իրադարձությունների ընթացքը առաջին իսկ օրից, որպես հայրենասիրության օջախ, լինում էր իր ժողովրդի հետ, նրա հերոսական ու դժվարին պայքարում։

Ռուսաստանում 1917 թ. Փետրվարյան բուրժուական հեղափոխությամբ երբ ցարը գահընկեց հռչակվեց, և Ռոմանովների իշխանությունը վերջ գտավ, ցարիզմի օրոք Էջմիածնի համար կազմված 1836 թ. Պոլոժենիան դադարեց գոյություն ունենալուց։ Գևորգ Ե կաթողիկոսը մասնավոր կոնդակով ցրեց Պոլոժենիայի համաձայն ընտրված և Էջմիածնում կաթողիկոսի կողքին գործող վերջին Սինոդը։

Գևորգ Ե-ի օրոք Մայր Աթոռ ս. Էջմիածինը լծվում էր իր զուտ հոգևոր-բարոյական-հայրենասիրական գործունեությանը՝ ձերբազատվելով կողմնակի այլ պարտավորություններից, որոնք ըստ Թորգոմ պատրիարքի բնութագրման անցյալում «հարկադրաբար, անհրաժեշտ ստիպողականության և ոչ թե իր բնիկ պաշտոնին կամ կոչումին բերումով, հանձն էր առել Մայր Աթոռ ս. Էջմիածինը» («Սիոն», 1936 թ., էջ 256)։

### Գերագույն հոգևոր խորհրդի կազմությունն ու գործունեությունը

Ըստ Պոլոժենիայի, Էջմիածնում կաթողիկոսի կողքին գործում էր ցարի կողմից նշանակված Սինոդը՝ չորս արքեպիսկոպոսներից կամ եպիսկոպոսներից և նույնքան թվով վարդապետներից բաղկացած. «Ամեն բանում կաթողիկոսին գործակցում է Էջմիածնի Հայոց Սինոդը» (Հոդ. 1117)։ 1917 թվի ապրիլ 7 թվակիր և համար 678 կոնդակով Գևորգ Ե-ը ցրեց Սինոդը և Հայրապետական Դիվանը։

Նույն կանոնական կոնդակով Գևորգ Ե-ը ընդարձակում էր ընտրական իրավունքները, վերահաստատում թեմական ժողովներն ու թեմական խորհուրդները ժողովական ընտրությամբ կատարելու սկզբունքը, որը դժբախտաբար վերացել էր Պոլոժենիայով։

«Մեր սուրբ եկեղեցու սկզբնավորության առաջին իսկ օրերից սկսած, քրիստոնեական և համայնական լայնեզր հավասարության ոգին հանրական կյանքի գործերի մեջ իշխել և զարգացել է մեր մեջ, որով այդ ոգին մեր հանրական գործերի կենդանի աղբյուրն էր։ Այս ոգին օտար ազդեցությունների և օտարամուտ մտածողության եղանակի ու սկզբունքների ազդեցության ենթարկվելով, այլասեր տարազ ստացավ։

...Այնուհետև հասարակական յուրաքանչյուր գործ համայնքի ամբողջ կազմի ազատ ընտրությամբ պիտի կատարվի։ Այս կարգերի և կանոնների նախնական ձևի վերականգնումը մեր հաստատությունների հարատև և կենսունակ գոյության հիմքն ենք ճանաչում»։

Հայրապետական կոնդակը հրահանգում էր հուսկ ուրեմն «ազատորեն ձեռնարկել հոգևոր առաջնորդների, ինչպես և նոցա փոխանորդների, այլև այն բոլոր հոգևոր պաշտոնյաների ընտրության» ժողովրդական ազատ ընտրությամբ։

Նույն հարցին անդրադառնում էր Գևորգ Ե-ը 1924 թվի հունվարի 1-ին, համար 1 կոնդակով, և վերահաստատում ժողովրդական ընտրության սկզբունքը՝ «պահել զոգի ժողովրդական»։ Կաթողիկոսը հրահանգում էր ժողովրդին՝ իր ազատ կամքով կատարել իր հոգևոր առաջնորդների և սպասավորների ընտրությունը՝ «սկսեալ ի հայրապետէս մինչ ցվերջին սպասաւորն»։ Կաթողիկոսը կոնդակում նշում էր, որ այս դարավոր ընտրողական և ժողովրդական ոգին և ուղղությունը եղել են «հանապազ խարիսխ ամրութեան և աղբիւր կենսունակութեան Ս.

Եկեղեցւոյս հայոց և զօրեղ հիմնապատճառ ազգային, մտաւոր, բարոյական-կրօնական յառաջդիմութեան ժողովրդեան մերոյ»:

Այնուհետև նույն կանոնական կոնդակում կաթողիկոսը հրահանգում էր կազմել, իր նախագահության ներքո, հայ եկեղեցու ղեկավարության համար Գերագույն հոգևոր խորհուրդ, հայտարարելով, որ «կաթողիկոսական իրավանց շրջանին պատկանող ոչ մի հարց այնուհետև չպետք է լուծումն ստանա առանց Գերագույն հոգևոր խորհրդի քննության և օրագրական արձանագրության»:

Գևորգ Ե կաթողիկոսը իր նույն կոնդակում գծում էր նաև Գերագույն հոգևոր խորհրդի գործունեության և իրավասության սահմանները.

1. **Ժամանակավորապես** կազմել Գերագույն հոգևոր խորհուրդ՝ երեք արքեպիսկոպոսներից և երեք եպիսկոպոսներից բաղկացած.

2. Գերագույն հոգևոր խորհրդի մշտական կազմի անդամ համարել, ոչ միայն հանգամանքով, թեմական առաջնորդներին «ի ժամ ներկայութեան նոցա ի ս. Էջմիածին» և կամ անհրաժեշտության դեպքում՝ նրանց Մայր Աթոռ հրավիրելիս.

3. Մայր Աթոռի և բոլոր թեմերի կրոնական, վարչական, թեմական, եկեղեցական-տնտեսական գործերի ղեկավարությունը հանձնել Գերագույն հոգևոր խորհրդին:

Քանի որ հնարավոր չէր շտապ կարգով ազգային-եկեղեցական ժողով գումարել, որի իրավունքն էր ընտրել Գերագույն հոգևոր խորհուրդ, կաթողիկոսը ժամանակավորաբար նշանակում էր Գերագույն հոգևոր խորհրդի կազմը, որը մեջ մտնում էին տ. Խորեն, տ. Բագրատ, տ. Մեսրոպ արքեպիսկոպոսները, տ. Գարեգին, տ. Գևորգ, տ. Գյուտ եպիսկոպոսները:

1923 թվի մարտի 4-ին հայրապետական կոնդակով Տ. Խորեն արքեպս. Մուրադբեկյանը նշանակվում էր տեղակալ և Գերագույն հոգևոր խորհրդի նախագահող անդամ «ի նկատի առեալ զփորձութիւն ձեր յընթացս բազմամեայ և պատասխանատու պաշտոնավարութեան»:

Գերագույն հոգևոր խորհրդի կազմության առթիվ կաթողիկոսը 1927 թ. նոյեմբեր 7 պաշտոնական գրությամբ, Հայաստանի կառավարությանը հաղորդում էր հետևյալը. «Էջմիածնի Գերագույն խորհուրդը Ամենայն Հայոց կաթողիկոսի 1924 թ. հունվար 1-ի ընդհանրական կանոնական կոնդակով հաստատված մի մարմին է, որպես հայոց համաեկեղեցական, վարչական բարձր կազմակերպություն, կաթողիկոսի նախագահության ներքո և անպայման ավելի հարազատ հայ եկեղեցական կյանքին և նորա ոգուն, քան նախկին Սինոդը, որը լուծեցի հայրապետական կոնդակով, եկեղեցին պետությունից սովետական հիմնական օրենքով անջատվելուց հետո: Ապագայում Գերագույն հոգևոր խորհուրդի և՛ հոգևոր, և՛ աշխարհիկ անդամները ընտրվելու են Ամենայն Հայոց կաթողիկոսի նախագահությամբ գումարվելիք ազգային-եկեղեցական ժողովում:

Գերագույն հոգևոր խորհուրդը բնականաբար ընդունված և ճանաչված է մեր եկեղեցական-վարչական կազմակերպությունների և Հայաստանյայց առաքելական եկեղեցու հայ հավատացյալ համայնքների և արտասահմանյան գաղութահայության կողմից ամենուրեք»:

Նորակազմ Գերագույն հոգևոր խորհուրդը 1924 թվականից սկսած գումարվում է կաթողիկոսի նախագահության ներքո և զբաղվում՝ Մայր Աթոռ ս. Էջմիածնի և հայ եկեղեցու վերաբերյալ կարևոր հարցերի քննությամբ: Գերագույն հոգևոր խորհուրդը ունենում է նաև լիակատար կամ ընդլայնված նստաշրջաններ, որոնց հրավիրվում են թեմական առաջնորդներ: Այսպես, Գերագույն հոգևոր խորհուրդը իր 1926 թ. հունվար 25-ից մինչև փետրվար 15 տևող լիագումար նիստի մեջ քննության է առնում և որոշումներ է ընդունում մի շարք հրատապ եկեղեցական հարցերի մասին:

1926 թ. հունվարի 25-ին գումարվում է Գերագույն հոգևոր խորհուրդի վերոհիշյալ ընդլայնված նիստը:

Նիստին մասնակցում են Գերագույն հոգևոր խորհուրդի մնայուն անդամներ տ. Խորեն, տ. Մեսրոպ, տ. Բագրատ, տ. Գարեգին արքեպիսկոպոսները, տ. Գյուտ եպիսկոպոսը, թեմական առաջնորդներից՝ Գևորգ արք. Թիֆլիսի, Մատթեոս արք. Բաքվի, տ. Լևոն՝ Գանձակի, և տ. Արտակ՝ Սյունիքի եպիսկոպոսները, Հյուսիսափն Կովկասի և Աստրախանի տ. Գրիգորիս, Շիրակի՝ տ. Իսահակ վարդապետները, Երևանի և Նոր-Նախիջևանի առաջնորդական փոխանորդ Հակոբ և Պողոս քահանաները:

Գերագույն հոգևոր խորհուրդի նստաշրջանը բացվում է Գևորգ Ե կաթողիկոսի «Հայր մեր»-ով:

Ժողովը ղեկավարում է տ. Խորեն արք. Մուրադբեկյանը, որպես նախագահող անդամ Գերագույն հոգևոր խորհրդի:

Ժողովի օրակարգում հետևյալ հարցերն էին դրված.

1. Հաշվետվություն Գերագույն հոգևոր խորհրդի 1924—1926 տարիների գործունեության.

2. Զեկուցում թեմերից:

3. Նոր տոմարի հարց:

4. Եկեղեցական սահմանադրության նախագծի քննարկում:

5. Էջմիածնի և թեմերի տնտեսական կացության հարց:

6. Հոգևոր ճեմարանի վերաբացման և «Արարատ» ամսագրի վերահրատարակության հարց:

7. Հայաստանի կառավարության հետ Մայր Աթոռի բանակցությունների արդյունքների հաշվետվություն:

8. Եկեղեցական բարեկարգության և ազգային, եկեղեցական ժողով հրավիրելու հարց:

9. Ընթացիկ հարցեր:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցում է տ. Խորեն արքեպիսկոպոսը ներկայացնելով 1924—26 տարիների Գերագույն հոգևոր խորհրդի գործունեության ընդհանուր պատկերը, շեշտելով, որ «Գերագույն հոգևոր խորհուրդը գործել է տնտեսական-իրավական անբարեհաջող պայմաններում», բայց այնուամենայնիվ կատարվել են չափազանց կարևոր գործեր, ինչպիսիք են հայ եկեղեցու բարեկարգության, ազգային-եկեղեցական ժողով հրավիրելու, ճեմարանի վերաբացման, «Արարատ» գիտական ժողովածու հրատարակելու նախապատրաստական աշխատանքները:

Տեղակալը ժողովին հայտնում է, որ սերտագին կապեր են պահպանվել մեր նվիրապետական բոլոր Աթոռների հետ և կաթողիկոսի հանձնարարությամբ և ստորագրությամբ պաշտոնական գրություններ են ուղարկվել կառավարությանը՝ հայ եկեղեցու վերաբերյալ մի շարք կարևոր հարցերի առընչությամբ: Տեղակալը հայտարարում է, որ Մայր Աթոռ ս. Էջմիածինը և Գերագույն հոգևոր խորհուրդը իրենց վերաբերմունքի մեջ դեպի հայրենի հարազատ կառավարությունը եղել են «կոռեկտ և լոյալ»:

Կանոնավոր հարաբերություններ են պահպանվել նվիրապետական Աթոռների, հայրենի, միութենական և արտասահմանյան թեմերի հետ: Մայր Աթոռի տնտեսական ապահովության և զորացման նպատակով ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ, սփյուռքում հանուն Էջմիածնի եղած մեծ կտակները Մայր Աթոռում և Հայաստանում գործադրելու համար:

Գերագույն հոգևոր խորհուրդը իր սույն լիակատար նստաշրջանում ընդունում է հետևյալ որոշումները:

1. Գերագույն հոգևոր խորհրդի անդամների ընտրությունը դարձնել ընտրովի, ազգային-եկեղեցական ժողովի միջոցով:

2. Գերագույն հոգևոր խորհրդի կազմում ընտրել աշխարհական անդամներ:

3. Տարվա մեջ Գերագույն հոգևոր խորհրդի ընդլայնված նիստերի և ներթական ժողովի համար հաստատուն օրեր նշանակել:

4. Ազգային-եկեղեցական ժողով հրավիրել հարմար ժամանակի ըստ նայրապետական կոնդակի հրահանգին, 1924 հունվարի 1:

5. Կարգալույծ հռչակել «Ազատ եկեղեցի» և շարժման մասնակից հոգևորականներին:

Օրակարգի 2-րդ կարևոր հարցն էր՝ զեկուցում թեմերից: Ժողովում այս մասին զեկույցներով հանդես են գալիս բոլոր թեմակալ առաջնորդները:

Նոր տոմարի անցնելու կապակցությամբ Գեր. հոգ. խորհուրդը ընդունում է հետևյալ բանաձևը. «Նկատի առնելով, որ Միության սահմաններում գտնվող թեմերի մեծագույն մասում նոր տոմարն է, որ գործադրվում է, և նրա գործածությունը էլ ավելի ընդհանրացել է, ժողովը որոշեց ընդունել հայ եկեղեցում նոր տոմարի գործածությունը»:

Գերագույն հոգևոր խորհուրդը խնդրում է կաթողիկոսից հայրապետական կոնդակով այդ որոշումը հաստատել և կանոնականացնել, ինչ որ արվում է կաթողիկոսի կոնդակով:

Ժողովը զբաղվում է նաև եկեղեցական սահմանադրության հարցով: Նախապես կազմվել էր մի հատուկ հանձնաժողով Գյուտ եպիսկոպոսի նախագահությամբ զբաղվելու համար սույն հարցով, ինչպես նաև Խորհրդային Միության սահմաններում գտնվող հայ եկեղեցական համայնքների համար եկեղեցական կանոնադրություն մշակելու խնդրով:

Հանձնաժողովը Գերագույն հոգևոր խորհրդի սույն նիստին է ներկայացնում տասնմեկ կետերից բաղկացած եկեղեցական սահմանադրության մի նախագիծ, որը քննության է առնվում հոդված առ հոդված և ընդունվում որոշ փոփոխություններով, ներկայացվելու համար հառաջիկա կայանալիք ազգային-եկեղեցական ժողովին:

Բաքվի թեմի առաջնորդ տ. Մատթեոս արքեպիսկոպոսը ժողովում զեկուցում է 1923—26 տարիների Մայր Աթոռի և ներքին թեմերի տնտեսական կացության մասին: Զեկուցման մեջ փաստեր էին բերված, որ Մայր Աթոռի տնտեսական կացությունը ծանր է և լուրջ:

Այդ տարիներին Մայր տաճարը անմիջական վերանորոգության կարիքն ուներ: Միայն Մայր տաճարի գմբեթի անհետաձգելի նորոգության համար պահանջվում էր հինգ հազար ռուբլի: Հակառակ Մայր Աթոռի տնտեսական նեղ պայմաններին գմբեթը վերանորոգվում է ճարտարապետներ Ալ. Թամանյանի և Թորոս Թորամանյանի հսկո-

ղությամբ։ Ամիսներով չեն վճարվում վանքի պաշտոնյաների ռոճիկները։ Միաբանությունը ևս ապրում է տնտեսական նեղ պայմաններում։

Այս դժվարին կացության առաջ Գերագույն հոգևոր խորհուրդը որոշում է բարելավել միաբանների տնտեսական վիճակը և վերաբանալ միաբանական վանական սեղանը։

Գերագույն հոգևոր խորհուրդը, Մայր Աթոռի տնտեսական վիճակը բարելավելու համար, որոշում է Գարեգին արք. Հովսեփյանին ուղարկել Մոսկվա և Ռուսաստանի այլ քաղաքներ, Հյուսիսային Կովկաս՝ քարոզելու և ի նպաստ Մայր Աթոռի հանգանակություն կատարելու համար։ Նույն նպատակով որոշվում է Ռուբեն վրդ. Մանասյանին ուղարկել Չինաստան, Ճապոնիա, Հնդկաստան և Եգիպտոս։

Ժողովը քննության է առնում նաև հոգևոր ճեմարանի վերաբացման և «Արարատ» գիտական ժողովածուի հրատարակության հարցը։ Այս մասին ժողովին զեկուցում է տ. Գարեգին արք. Հովսեփյանը։ Դեռևս 1921 թ. սեպտ. 30-ի կառավարական որոշման համաձայն Էջմիածնին իրավունք էր տրվում տպարան ունենալ, «Աստվածաբանական դպրոց բանալ» կաթողիկոսի կողմից մշակված ծրագրով և հրատարակել «Արարատ» ամսագիրը։

Դժբախտաբար կառավարական այսքան բարյացակամ արտոնություններից հետո ն՛ ճեմարանի բացումը ն՛ ամսագրի հրատարակության հարցը գլուխ չէին գալիս, հատկապես Մայր Աթոռի տնտեսական, դրամական նեղ պայմանների պատճառով։

Այնուամենայնիվ Գեր. հոգ. խորհուրդը որոշում է փութացնել ճեմարանի վերաբացումը և «Արարատ» գիտական ժողովածուի փոխարեն հրատարակել «Արարատ» երկշաբաթաթերթը։ Ժողովում որոշվում է նաև Մայր Աթոռում ունենալ տպարան, որը գործելու էր ՀՍՍՀ օրենքների սահմաններում։ Թեմական առաջնորդները ժողովում հանդիսավոր խոստումներ են տալիս ճեմարանի վերաբացման, «Արարատ»-ի վերահրատարակության և Մայր Աթոռի նոր տպարանի վերակազմության համար դրամական օգնություն հասցնել Մայր Աթոռին։

Օրակարգի ամենակարևոր հարցերից մեկը հայրենի կառավարության հետ Մայր Աթոռի բանակցությունների և հարաբերությունների հարցն էր։ Այս մասին նույնպես զեկուցում է տեղակալ տ. Խորեն արքեպիսկոպոսը։ Տեղակալը հանգամանորեն ժողովին է ներկայացնում 1921 թ. մայիսից սկսած Մայր Աթոռի և կառավարության միջև կատարված բանակցությունները, որոնք բավարար լուծում են ստացել գործող օրենքի գործնական և իրավական պայմաններում։

Մի այլ նիստում Բագարատ արք. զեկուցում է հայ եկեղեցու բարեկարգության և ազգային-եկեղեցական ժողով գումարելու հարցի շուրջ։ Մտքերի փոխանակությունից հետո որոշվում է. «Նկատի ունենալով ներքին և արտաքին ռեալ պայմանները, Գեր. հոգ. խորհուրդը իր լրիվ կազմով գտավ, որ չափազանց մեծ պատասխանատվության հետ է կապված ազգային-եկեղեցական ժողովի խնդիրը»։

Գերագույն հոգևոր խորհուրդը իր սույն նստաշրջանում արձանագրում է նաև «Ազատ Եկեղեցի» թերթի և այդ աղանդավորական շարժման հետ կապված Աշոտ եպիսկոպոսի, Բենիկ վարդապետի և Մեսրոպ քահանա Մելյանի կարգալուծման հայրապետական կոնդակները։

Գևորգ Ե կաթողիկոսի օրով, 1923—1928 թվականներին, Հայաստանում և միութենական այլ հանրապետություններում սկիզբ առած «Ազատ եկեղեցի» աղանդավորական շարժումը հայ եկեղեցու ծոցում, խորը մտահոգություն և վիշտ էր պատճառում Հայոց Հայրապետին և Մայր Աթոռին։ Մի շարք հոգևորականներ կասկածելի անցյալով, վարք ու բարքով և հոգեբանությամբ, հանուն կեղծ բարեկարգության և ազատ մտածողության, բայց խորքում տարված մանավանդ զուտ անձնական և վրեժխնդրության զգացմունքներից, հրապարակ էին իջել հայ եկեղեցու համար ծանր այդ օրերին և փորձում էին քանդել դարերի հոլովույթով նվիրականացած հայ եկեղեցու կարգն ու կանոնը, ավանդությունն ու նվիրապետությունը, ուրանալով Մայր Աթոռ ս. Էջմիածինը, Ամենայն Հայոց հայրապետության ղեկավար դերը։ Շարժման հիմնական նպատակն էր քանդել հայ եկեղեցու նվիրապետական, դավանաբանական, ծիսական ու վարչական հիմքերը, աշխարհականացնել եկեղեցին, այն վերածելով սովորական մի ընկերակցության։

Այդ ծանր, դժվարին օրերին հայ եկեղեցու ծոցում նման դառն փորձություններ, փոթորիկներ վտանգավոր էին։

Արդարև «թշնամիք առն՝ ընտանիք իւր»։

«Ազատ եկեղեցի» աղանդավորական շարժումը հղի էր մանավանդ Մայր Աթոռի և նրա առաքելության սպառնացող լուրջ վտանգով և հատկապես եկեղեցու ծոցում ներքին պառակտում ստեղծելու ախտավարակ հոգեբանությամբ։

Շարժումը տևեց 1924—28 թվականները։ Այն հաջողություն չգտավ և չէր էլ կարող գտնել։ Հայ հավատացյալ ժողովուրդը հոգով փարել էր իր մայր եկեղեցուն, ազգային ա-

վանդություններին: Հաղթանակեց մեր ժողովրդի սրտառուչ հավատքն ու ողջմտությունը:

Մայր Աթոռը քանիցս աշխատեց կարգի հրավիրել աղանդավորներին, բայց «երկամեալ ներողամտութիւն և հայրապետական համբերութիւն մեր ոչ զգաստացուցին զնոսա», գրում է Գևորգ Ե-ը իր կարգալուծման կոնդակում:

Գերագույն հոգևոր խորհուրդը զբաղվեց ազատ եկեղեցականների գործով: Ամենայն Հայոց Հայրապետը ընդառաջելով նաև Երևանի, Շիրակի, Թիֆլիսի, Հյուսիսային Կովկասի հայ հավատացյալ ժողովրդի բողոքին և պահանջին, հաստատեց Գեր. հոգ. խորհուրդի կարգալուծման միջնորդությունը և 1924 թ. սեպտ. 5 թվակիր և համար 575 սրբատառ կոնդակով կարգալույծ հռչակեց Շիրակի թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոսին, այն ծանր մեղադրանքով, որ նա «անկեալ կայ ի դաւադրական խարդաւանս, ընդդէմ Հայաստանեայց ս. Եկեղեցւոյ եւ Մայր Աթոռոյս և կոյր գործի չարութեան յայսմ դժուարակիր ժամանակիս»:

1924 թ. սեպտ. 10 թվակիր և համար 593 կոնդակով Գևորգ Ե-ը կարգալույծ էր հռչակում Բենիկ վարդապետին, ավելի ծանր և քստմնելի արարքների համար. «Անվայել բարք, դատապարտելի գործք ըստ ամենայնի, կուրացեալ յանձնական վրէժխնդրութենէ և անկեալ ընդ ամբարիշտ կրիւք իւրոք զբաղեալ կայ այժմ գրպարտութեամբ եւ դաւադրութեամբ ընդդէմ Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյս եւ Մայր Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի եւ Միաբանութեանս»:

1926 թ. հուլիս 14 թվակիր և համար 553 կոնդակով կարգալույծ է հռչակվում նաև «Ազատ եկեղեցի» թերթի խմբագիր Մեսրոպ քհն. Մելյան, «Ըմբոստացեալ ընդդէմ հոգեւոր ծայրագոյն իշխանութեան և ընդդէմ Մայր Աթոռոյս, ի ճիգն եւ ի քիրտն մտեալ տքնի եւ աշխատի ամենայն հնարիւք, սերմանել երկպառակութիւն կրօնական ի մէջ զաւակաց Հայաստանեայց սուրբ և առաքելական եկեղեցւոյս»:

Կովկասյան հանրապետությունների պաշտոնական օրգան «Զարյա Վոստոկա» թերթը իր 775 համարում սպառիչ բնութագիր էր տվել «Ազատ եկեղեցի» թերթի և շարժման մասնակից հոգևորականների գործունեության մասին: Կառավարական թերթը գրում էր «Ազատ եկեղեցի»-ի մասին. «Լույս տեսավ հանկարծակի խորհրդային աշխարհայացքի դարձած մի խումբ քահանաների կողմից... Հանդեսի բովանդակությունը հանգում է մի կամ մյուս գործչի վրա, անվերջ գանգատների, մանր ինտրիգների, հին հաշիվների»:

Գերագույն հոգևոր խորհուրդի սույն ընդլայնված ժողովը փակվեց փետր. 15-ին, 20 լիակատար նիստ գումարելուց հետո, Մայր Աթոռ ս. Էջմիածնի և հայ եկեղեցու վերաբերյալ յուսամիտ, առողջ և օգտակար որոշումների ընդունումով:

## ԲԱՐԵԿԱՐԳԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ ԳԵՎՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՈՔ

Հայ եկեղեցու բարեկարգության խնդիրը շատ հին է և ունի իր պատմությունը: Այս մասին շատ է խոսվել և գրվել դեռևս 19-րդ դարի կեսերին, երբ Կ. Պոլսում լույս տեսավ 1860-ական թվականներին «Պատկեր Հայաստանեայց ս. Եկեղեցւոյ» գիրքը:

Հայ եկեղեցին ամեն օր աղոթում է «Վասն սուրբ եկեղեցւոյս շինութեան եւ բարեկարգութեան»:

Եկեղեցական բարեկարգություն հասկացողությունը շատ ընդարձակ է, բարդ և բազմակողմանի: Այդ հարցը հաճախ դրվել է նաև կաթողիկոսական ընտրությունների առթիվ ազգային-եկեղեցական ժողովի օրակարգի վրա: Բայց որոշ հանգամանքներ արգելք են հանդիսացել, որ Մայր Աթոռ ս. Էջմիածինը հանգամանորեն չկարողանա զբաղվել հայ եկեղեցու բարեկարգության ընդհանուր հարցով:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո ստեղծված կացությունը ստիպեց Գևորգ Ե կաթողիկոսին, կշռելով ժամանակի և պարագաների հրամայականը, ձեռնարկել մի շարք բարեկարգիչ միջոցառումներ, հավատարիմ մնալով սակայն միշտ հայ եկեղեցու դարավոր կարգ ու կանոնին և ավանդության:

1922 թ. նոյեմբ. 11 թվակիր և համար 644 կոնդակով Գևորգ Ե-ը սեղանի վրա էր դնում հայ եկեղեցու բարեկարգության հարցը: Կոնդակը պաշտոնապես ուղղված էր Մեծի Տանն Կիլիկիո Սահակ կաթողիկոսին, Երուսաղեմի հայոց պատրիարք Եղիշե արքեպիսկոպոսին, Կ. Պոլսի հայոց պատրիարք Զավեն արքեպիսկոպոսին, բոլոր թեմակալ առաջնորդներին, եպիսկոպոսներին և համայն հայ հավատացյալ ժողովրդին:

Կոնդակում կաթողիկոսը նշում էր, որ հայ եկեղեցին «Ընդ ձեռն սրբոց հարցն եւ երանաշնորհ հայրապետացն մերոց եւ ազգային-եկեղեցական ժողովոց ըստ ոգւոյ ժամանակաց եւ ըստ հանգամանաց սահմանէր

զկանոնական եւ զվարչական-ծիսական ուղղումս... Փոփոխէր, լրացուցանէր անխախտ եւ անփոփոխ պահեալ զհիմունս հաւատոյ»:

1919 թ.-ին և 1921 թվականին համար 715, 736 և 271 կոնդակներով կաթողիկոսը առաջարկում էր.

1. Այրիացած քահանաների երկրորդ ամուսնություն:

2. Երկրորդ անգամ ամուսնացած քահանայացումների ձեռնադրությունը:

3. Ամուսնության մեջ 5-րդ ազգակցական կապի ընդունում:

4. Հոգևոր ազգակցության կամ ազգականների միջև ամուսնական կապերի ընդլայնում:

Կ. Պոլսում Զավեն պատրիարքի նախագահությամբ և Եղիշե արք.-ի ատենապետությամբ գումարված կրոնական ժողովը զբաղվում էր այս հարցերով, որ «Զայս ըստ ամենայնի պատշաճեալս հոգեւոր պիտոյից եւ պահանջից ժամանակի»:

Կիլիկյան Աթոռը և Երուսաղեմի Աթոռը վերապահ էին քահանաների կրկնամուսնության առաջարկի կապակցությամբ:

1924 թ. հունվար 1 թվակիր կոնդակով Գեվորգ Ե մտածում էր Էջմիածնում հրավիրել ազգային-եկեղեցական ժողով: Կաթողիկոսը այս առթիվ կազմել էր 25 կետերից բաղկացած մի կանոնադրություն, որը Գերագույն հոգևոր խորհրդում քննարկվելուց հետո 1925 թ. հոկտ. 22-ին ուղարկվում էր նվիրապետական բոլոր Աթոռներին և թեմերին: 1926 թ. մայիսին համար 414 կոնդակով Էջմիածնում հրավիրված ազգային-եկեղեցական ժողովը պետք է ղեկավարվեր այդ կանոնադրությամբ:

Այդ կանոնադրությունը, որը բաղկացած էր երեք հիմնական կետերից և 25 հոդվածներից և ուներ հետևյալ վերնագիրը և բովանդակությունը.

## ՀՐԱՀԱՆԳ

**Ազգային-եկեղեցական ժողով գումարելու համար կաթողիկոսի կողմից արդեն հաստատված և կարդացված Էջմիածնի լիակազմ Գերագույն հոգևոր խորհրդի նիստում:**

1. Հայ առաքելական եկեղեցու գերագույն կանոնադիր մարմինը եկեղեցական ժողովն է:

2. Ազգային-եկեղեցական ժողովը գումարվում է Էջմիածնում:

3. Ազգային-եկեղեցական ժողով հրավիրում է Ամենայն Հայոց կաթողիկոսը:

4. Ազգային ժողովի նախագահն է Ամենայն Հայոց կաթողիկոսը:

5. Տանն Կիլիկիո կաթողիկոսը, Երուսաղեմի և Կ. Պոլսի Հայոց պատրիարքները ժողովի նախաթոռ անդամներն են:

6. Ամենայն Հայոց կաթողիկոսի հիվանդության դեպքում ազգային-եկեղեցական ժողովին նախագահում են Տանն Կիլիկիո կաթողիկոսը կամ Երուսաղեմի պատրիարքը: Սրանց բացակայության դեպքում նախագահում է Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղակալը:

7. Ազգային-եկեղեցական ժողովի իրավասության ենթակա են հետևյալ հիմնական խնդիրները.

ա) Ընտրություն Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք-կաթողիկոսի (հետ մահվան ներկա գահակալի):

բ) Ընտրություն Գեր. հոգ. խորհրդի անդամների:

գ) Հաստատություն ազգային-եկեղեցական սահմանադրության:

դ) Քննություն և վճռահատություն եկեղեցական բարենորոգական հարցերի:

ե) Կարգավորում եկեղեցական տնտեսական վիճակի:

զ) Վճռահատություն եկեղեցուն վերաբերյալ բոլոր հարցերին:

8. Ազգային-եկեղեցական ժողովն ինքն է որոշում իր գրագումարների օրակարգը և գործունեության ներքին հրահանգը:

9. Ազգային եկեղեցական ժողովի անդամներն են՝ ա) Էջմիածնի Գերագույն խորհրդի անդամները, բ) Հայոց եկեղեցու բոլոր առաջնորդները, գ) Հայոց եկեղեցու բոլոր եպիսկոպոսները:

**Ծանոթ.**—Առաջնորդի անձամբ ժողովին մասնակցել չկարողանալու դեպքում մասնակցում է թեմի հոգևորականության ընտրյալ ներկայացուցիչը:

10. Ազգային-եկեղեցական ժողովի անդամ են ս. Էջմիածնի միաբանության, ս. Երուսաղեմի միաբանության և Կ. Պոլսի խառն ժողովի կողմից ընտրված մի մի ներկայացուցիչ:

11. Ազգային-եկեղեցական ժողովի անդամ կարող են լինել ժողովրդից ընտրված 30 տարին լրացրած իրավասու ծխականները:

12. Յուրաքանչյուր թեմի ժողովուրդ մասնակցում է ազգային-եկեղեցական ժողովին, իր ընտրած մեկ կամ ավելի պատգամավորով:

13. Մինչև 25 հազար ժողովուրդ ունեցող թեմը ընտրում է մեկ պատգամավոր:

Յուրաքանչյուր թեմ ընտրում է այնքան պատգամավոր, որքան 25 հազար ժողովուրդ է պարունակում իր մեջ: Վերջին 25 հազարը կարող է լրիվ չլինել, բայց ոչ պակաս 10 հազարից:

**Ծանոթ.**—ա) Յուրաքանչյուր թեմ իր ընտրելի պատգամավորների թվով ընտրում է փոխանորդներ, որոնք փոխարինում են պատգամավորներին, եթե որևէ պատճառով պատգամավորը անձամբ անկարող է ինքը մասնակցել ժողովին:

**Ծանոթ.**—բ) Յուրաքանչյուր թեմ վիճակագրության հիման վրա բաժանվում է շրջանների այն հաշվով, որ յուրաքանչյուր շրջան բաղկանա 25 հազար ժողովրդից:

14. Ազգային-եկեղեցական ժողովի թեմական պատգամավորների ընտրության մասնակցում են հոգևորականները ու քաղաքացիական չափահասություն աշխարհական երկու սեռի իրավասու ծխականները:

15. Յուրաքանչյուր հազար շունչ ունեցող համայնքը ընտրում է մի պատվիրակ:

Ծանոթ.—Փոքր համայնքները ըստ հարմարության միանում են պատվիրակ ընտրելու համար:

16. Պատվիրակները պատգամավորներ կարող են ընտրել իրենց միջից կամ դրսից:

17. Ազգային-եկեղեցական պատգամավորների անձնափոխանորդների, պատվիրակների ընտրությունը Ս. Խ. Հ. Միության սահմաններից դուրս գտնված թեմերում կատարվում է ըստ տեղական գործող հայոց կանոնադրությունների և սահմանադրությունների և կամ ավանդական կարգերի, հրահանգվելով սույն կանոնադրությամբ:

18. Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորների ճանապարհածախսը հոգում է պատգամավորներին ընտրող թեմը, իսկ պատվիրակներինը՝ եկեղեցին:

19. Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորների ընտրության առթիվ ծագած ամեն տեսակ տարակուսանքների լուծումն տալիս է Էջմիածնի Գերագույն խորհուրդը:

20. Կարիք զգացված դեպքում Գերագույն հոգևոր խորհուրդը տալիս է հարկավոր բացատրություններ և հրահանգներ:

21. Ամենայն Հայոց կաթողիկոսի մահվան դեպքում կաթողիկոսի ընտրության համար ազգային-եկեղեցական ժողով հրավիրում է Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղապահը ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի հետ:

22. Նոր կաթողիկոսի ընտրությունը տեղի է ունենում կաթողիկոսի մահվանից ոչ ուշ, քան վեց ամիս հետո:

23. Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրությունը կատարվում է ս. Էջմիածնի Մայր տաճարում տեղապահի նախագահությամբ:

24. Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրության կարգը որոշում է ազգային-եկեղեցական ժողովը:

25. Սույն կանոնադրությունը ուժի մեջ է մինչև առաջիկա ազգային-եկեղեցական ժողովի գումարումը:

Սույն կանոնադրությունը ստորագրել են Գերագույն հոգևոր խորհրդի անդամները:

Իսկ վերևում մակագրված է՝ «Հաստատում ենք, 22 հոկտեմբերի, 1925 թ. ս. Էջմիածին—Վշտալի Գևորգ Ե Կաթողիկոս Ամենայն Հայոց»:

Այս կանոնադրությամբ կատարվեցին 1932 թվին՝ Խորեն Ա, 1945 թվին՝ Գևորգ Զ, և 1955 թվին՝ Վազգեն Ա կաթողիկոսների ընտրությունները, որոշ փոփոխություններով:

Կաթողիկոսի հրահանգով Գերագույն հոգևոր խորհուրդը 1924 թ. հունվարի 25 թվակիր և համար 71 և 1925 թ. մայիսի 18 թվակիր և համար 212 շրջաբերականով հանձնարարում է թեմերին կազմել մասնավոր հանձնաժողովներ և քննել հայ եկեղեցու բարեկարգության վերաբերյալ հարցերը և թեմերի կարծիքները, դիտողություններ, նոր առաջարկներ ուղարկել Մ. Աթոռ: Գերագույն հոգևոր խորհուրդը հանուն կաթողիկոսի առաջարկում էր հետևյալ բարեկարգական հարցերը.

1. Ժամասացության կրճատում և բարեկարգում (Ժամագիրք, Շարակնոց, Մաշտոց, Տոնացույց):

2. Միասրան—Մաշտոցի կրճատում և բարեփոխում:

3. Ժամասացության ընթացքում աշխարհաբար լեզվի հարց:

4. Կուսակրոնության հարց:

5. Հայ եկեղեցու սահմանադրության հարց:

6. Արտաքո եկեղեցու սքեմի հարց:

7. Հոգևորականության նյութական-տնտեսական ապահովության հարց:

8. Ընթացիկ հարցեր:

1926 թ. մայիս 10-ի կոնդակով վերականգնվում էր «Հայ եկեղեցու դարերի ընթացքում սրբությամբ պահպանված իրավունքը նրա պաշտոնյաների վերաբերմամբ»:

«Քեզ ենք տալիս ժողովուրդ հայոց,—հայտարարում է կաթողիկոսը,—թեմական առաջնորդների, հոգևոր պաշտոնյաների, գործակալների և հոգևոր վարչական հաստատությանց պաշտոնյաների ընտրության իրավունքը»:

1923 թ. նոյեմբ. 9 թվակիր և համար 349 կոնդակով հայ եկեղեցում ընդունվում էր նոր տոմարը:

Նույն թվին 359 համար կոնդակով արտոնվում էր հայ եկեղեցիներում երգեհոնի կամ դաշնամուրի գործածությունը «ի ժամ պաշտամանց և եկեղեցական արարողութեանց նուագելոց յեկեղեցիս երգեհոն կամ դաշնամուր»:

Գևորգ Ե-ի օրով մեր եկեղեցական օրացույցի մեջ է մտնում Ապրիլյան Եղեռնի զոհերի հիշատակը տոնելու կարգադրությունը:

Դեռևս 1920 թ.-ին գրող Վրթ. Փափազյանը իր մարտ 25 թվակիր նամակով դիմում էր Գևորգ Ե-ին առաջարկելով համազգային սգի օր նշանակել ապրիլի 24-ը:

Արդարև 1920 ապրիլի 24-ին ս. Էջմիածնի Մայր տաճարում հանդիսավորապես նշվում էր Ապրիլյան եղեռնի նահատակների հիշատակը հանդիսավոր ս. պատարագով, քարոզով և հոգեհանգստյան պաշտոնի կատարումով, նախագահությամբ Գևորգ Ե կաթողիկոսի:

1921 թ. սեպտ. 24-ին նույն հարցով կաթողիկոսին է դիմում նաև Կ. Պոլսի հայոց

Զավեն պատրիարքը, հանուն ատամբողջության առաջարկելով. «յաղագս յաւերժացուցանելոյ զյիշատակ բիւրաւոր նահատակացն մերոց եւ զոհից կոտորելոց յընթացս համաշխարհային պատերազմի, սահմանել սա այն յատուկ օր, այն է 11/24 ամսոյն ապրիլի»:

Կաթողիկոսը ընդառաջելով համայն հայության և Պոլսո պատրիարքի ցանկության և առաջարկության 1920 թ. նոյեմբերին և 416 համար կոնդակով հրահանգում էր բոլոր եկեղեցիներում ամեն տարի անխափան նշել «յիշատակն բիւրաւոր նահատակացն մերոց, յընթացս առաջին համաշխարհային պատերազմի եւ կատարել հոգեհանգիստ յեկեղեցիս Հայաստանեայց»:

Կաթողիկոսը իր կոնդակում նշում էր, որ «մեծաւ գոհունակութեամբ եւ մխիթարութեամբ վշտացեալ սրտի» ընդունում է եղած առաջարկը, որը և Մայր Աթոռի և Հայոց Հայրապետի սրտով էր և սահմանում՝ ապրիլ 11/24-ը «Տօն Ազգային, յիշատակ նահատակացն մերոց համաշխարհային պատերազմի»:

Այնուհետև, կաթողիկոսը հրահանգում էր ապրիլի 24-ը մտցնել եկեղեցական օրացույցների մեջ «Ի մշտնջենական յիշատակ ապագայի»: 1921 թվից ապրիլի 24-ը որպես ազգային տոն մտնում է և Մայր Աթոռի եկեղեցական օրացույցի և մեր բոլոր օրացույցների մեջ:

1926 թվի նոյեմբերին Գևորգ Ե-ը մեծահանդես ու ավանդական շքով կատարում է մեռոնօրհնեք Մայր տաճարում: Ականատես Մեսրոպ արք.-ը վկայում է իր հուշերում, որ մեռոնօրհնեքի առթիվ Մայր Աթոռ ժամանած նման ծովածավալ բազմություն ինքը տեսել է միայն Մայր Աթոռում, Խրիմյան Հայրիկի օծման հանդիսության ժամանակ: Այնուհետև մինչև 1955 թ. նոյեմբերը Վազգեն Ա Հայրապետի գահակալությունը շուրջ 30 տարի, Մայր Աթոռում մեռոնօրհնեք չի կատարվում: Նորընտիր Տ. Վազգեն կաթողիկոսը 1955 թ. նոյ. 7-ին կատարում է նույնպիսի հանդիսությամբ մեռոնօրհնեք:

Գևորգ Ե-ի օրով հայ եկեղեցին մասնակցում է միջեկեղեցական ժողովների և խորհրդակցությունների: Այսպես 1927 թվին, Գևորգ Ե-ը Լոզանի «Հավատոյ և կարգի» միջեկեղեցական ժողովին ուղարկում է Ղևոնդ Դուրյան, Գրիգորիս Պալաքյան, Մաթեոս Ինճեյան եպիսկոպոսներից բաղկացած մի պատգամավորություն, որը ներկա էր լինում միջեկեղեցական այդ ժողովին:

Այս առթիվ Գերագույն հոգ. խորհուրդը մշակում և թեմերին էր ուղարկում հետևյալ շրջաբերականը, որտեղ գծվել և նշվել էին այն սկզբունքները ու ուղղությունը, որոնցմով պետք է առաջնորդվեր նման միջեկեղեցական ժողովներում հայ եկեղեցու պատվիրակությունը, նշանակված Մայր Աթոռի կողմից:

1.—Ողջունել համաքրիստոնեական համագումարի բացումը, հայտնել հայ առաքելական հնագույն ազգային եկեղեցվո սիրով մասնակցելը նրան, որ եկեղեցիների մերձեցման է ձգտում և ընդհանուր համագործակցությամբ Քրիստոսի սիրո շնչով աշխարհը ջերմացնելու և նրա Ավետարանի հավիտենական գաղափարները կյանքի մեջ մարմնացնելու նպատակ է դրել՝ և դեպի այդ նպատակները առաջնորդելու ուղիներ հարթելու հետամուտ է:

2.—Հայ եկեղեցին՝ իր պատմական անցյալում մշակած կանոնական իրավունքի և սրբագործած ավանդությունների համաձայն իր կյանքի առհմնական խնդիրների լուծման մեջ՝ վախճանական որոշումներ ընդունել է Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետի գլխավորությամբ գումարված ազգային-եկեղեցական ժողովով: Ուստի և ներկա համագումարում հայ եկեղեցու ներկայացուցչությունը իրավունք չունի նրա վախճանական որոշումներին մասնակցելու և պարտադիր ճանաչելու այն հայ եկեղեցու համար: Այլ հանձնարարում է միայն խորհրդակցական մասնակցություն ունենալու և եղած բոլոր որոշումները ու համագումարի ամբողջական պատկերը ընդարձակ զեկույցով մատուցանելու Վեհափառ Հայրապետին՝ հառաջիկա ազգային և եկեղեցական ժողովի խորհրդակցության և քննության ենթարկելու և նրա հեղինակավոր որոշման համեմատ էլ հիշյալ համաժողովի ապագա գումարումների մեջ իր դիրքը որոշելու:

3.—Քրիստոնեական եկեղեցիների մերձեցման և համագործակցության նախադրյալ համարելով եկեղեցիների փոխադարձ ծանոթությունը, այլև ի նկատի առնելով ներկա համաժողովի կատարելիք ծրագիրը՝ հանձնարարում է հանձնաժողովին, ըստ պահանջելի հարկին, տալ հայ եկեղեցվո դավանական և ծիսական արարողական նկարագիրը, ուղեցույց ունենալով տիեզերական երեք ժողովները և Ներսես Շնորհալվո «Ընդհանրականը»: Ինչպես նաև՝ հատկապես հայ եկեղեցվո վարչական կազմակերպության նկատմամբ՝ Մաղաքիա Օրմանյանի ընդհանուր գնահատության արժանացած «Հայ եկեղեցին»: Այլև պարտք է դնում հանձնաժողովիդ վրա հատկապես շեշտելու հայ եկեղեցվո ազգային-ժողովրդական ոգին, նրա դեմոկրատիկ բնույթը՝ նկարագրելով նրա պատմական համառոտ անցյալը, ընդգծելով արևելքի բազմացեղ և բազմակրոն ժողովուրդների մեջ դարեր շարունակ քրիստոնեական կրոնին հավատարիմ մնալը և նահատակ եկեղեցվո կյանքով ապրելը, տալով բյուրավոր վկաների շարքեր մինչև իսկ մեր օրերում:

Գերագույն հոգևոր խորհուրդը Ամենայն Հայոց Հայրապետի հաճությամբ՝ նախագծելով սույն համառոտ ղեկավար սկզբունքները՝ վստահ է որ հանձնաժողովդ լրջությամբ, շրջահայեցողությամբ և հայ եկեղեցվո ոգվո հարազատությամբ կընթանա վերոհիշյալ համագումարում, զգալով և գիտակցելով այն

մեծ պատասխանատվությունը, որ ծանրանում է իր վրա՝ պատվով ներկայացնելու հայ եկեղեցին՝ այդ քրիստոնյա եկեղեցիներից մեկը՝ իր մենության, վեհության և քրիստոնեական ամենատեսակ սկզբունքների հավատարմության մեջ, և մաղթում է հաջողություն ու հայցում Տիրոջ օրհնությունը համաժողովի վրա («Սիոն», 1927, թիվ 9, էջ 283):

1925 թ. որթոտոքս եկեղեցիների նախաձեռնությամբ նշվում էր Նիկիո առաջին Տիեզերական ժողովի (325 թ.) 1600-ամյակը Լոնդոնում Քենտրբերիի արքեպիսկոպոսի հրավերով, որին հանուն Մայր Աթոռ ս. Էջմիածնի մասնակցում էր Լոնդոնի հայոց հոգևոր հովիվ Գրիգոր-Գուսան ծ. վարդապետը:

Գևորգ Ե կաթողիկոսը 1925 թ. սահմանեց ս. Գրիգոր Լուսավորչի շքանշանը, նրանով պարգևատրելու համար հայ եկեղեցու ծառայությանը նվիրված հոգևորական և աշխարհական Մայր Աթոռի հարազատ զավակների գործունեությունը:

## ԹԵՄԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳ Ե-Ի ՕՐՈՎ

Գևորգ Ե-ի օրոք մեծ ուշադրություն դարձվեց նաև մեր ներքին և արտաքին թեմերի, թեմական կազմակերպությունների ամրապնդման և նոր թեմերի կազմության վրա:

Ըստ Պոլոժենիայի ռուսական կայսրության մեջ գոյություն ունեին հայկական վեց թեմեր. 1) Նախիջևանի և Բեսարաբիայի, 2) Աստրախանի, 3) Երևանի, 4) Վրաստանի, 5) Ղարաբաղի և 6) Շիրվանի իրենց ենթակա շրջաններով, վանքերով, ուխտատեղիներով և եկեղեցիներով (Պոլոժենիա, հոդ. 1161—1168):

Գևորգ Ե-ի օրով պահպանվեցին սույն թեմերը որոշ փոփոխություններով: Հայրապետական կարգադրությամբ 1920 թ. ստեղծվել Շիրակի նոր թեմը, որը նախապես մտնում էր Երևանի թեմի մեջ: Գևորգ Ե-ի օրով բոլոր ներքին թեմերն ունեին իրենց թեմակալ առաջնորդները ու թեմական իշխանությունները:

Այնուհետև կաթողիկոսը զբաղվում է սփյուռքի թեմերի կազմակերպչական հարցերով: Մինչ այդ հատկապես Եվրոպայի թեմերի համար Կ. Պոլսի պատրիարքարանն էր հոգում առաջնորդների և հոգևոր հովիվների մասին Մայր Աթոռի հավանությամբ և գիտությամբ: Բայց առաջին համաշխարհային պատերազմից հետո Կ. Պոլսո հայոց պատրիարքությունը ամփոփվել էր իր պատյանի մեջ և հազիվ կարողանում էր հոգալ միայն Կ. Պոլսում և գավառներում մնացած հայության հոգևոր կարիքները:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո գաղթականության մի հոծ ալիք ողողել էր Մերձավոր Արևելքը, Եգիպտոսը, Իրաքը, ամբողջ Եվրոպան, Հյուսիսային և Հարավային Ամերիկաները ներառյալ: Ստեղծված այս նոր կացության առաջ Գևորգ Ե ձեռնարկեց սփյուռքի թեմերի կազմակերպման դժվարին աշխատանքներին:

1920 թ. դեկտ.-ին Գևորգ Ե Կ. Պոլսի Զավեն պատրիարքին գրած իր պաշտոնական նամակում առաջ էր քաշում սփյուռքում Մայր Աթոռի հոգևոր իրավասության ներքո թեմերի կազմակերպության հարցը, մանավանդ «Իսպառ անջատելոց յՕսմանեան պետութենէ» երկրներում և թեմերում և նշանակում էր նոր առաջնորդներ «ենթակայացեալք ըստ հոգեւորի եւ վարչականի Մեծի Ընդհանրական Աթոռոյս ս. Էջմիածնի եւ Պետի լրութեան ազգիս»:

Կաթողիկոսը Պարսկա-Հնդկաստանի թեմի առաջնորդ էր նշանակում Միսրոպ արք. Մագիստրոսին 1926 թվականին:

1920 թ. սեպտեմբերին կազմակերպվում էր ռումինահայ նոր թեմը, մեջն առնելով նախկին Բեսարաբիայի թեմը և ուր նախ հոգևոր կառավարիչ և ապա առաջնորդ էր նշանակվում Հուսիկ արք. Զոհրաբյանը: Նույն թվին Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդ էր նշանակվում Երվանդ եպս. Բերտախչյանը: Իսկ Հունաստանի առաջնորդն էր Կարապետ արք. Մազլումյանը:

Թեև 1919 թվին Ղևոնդ եպս. Դուրյանը նշանակվել էր առաջնորդ եվրոպահայ թեմի, սակայն Դուրյանը նախընտրել էր Մանչեստրի հոգևոր հովվությունը: 1925 թվին Եվրոպայի հայոց կաթողիկոսական ներկայացուցիչ էր նշանակվում Գրիգորիս եպս. Պալաքյանը: Մասնավոր կոնդակով Գևորգ Ե-ը հրահանգում էր նրան Փարիզի հոգևոր հովիվ տ. Վռամշապուհ եպս.-ի և Մանչեստրի հոգևոր հովիվ տ. Ղևոնդ եպս-ի հետ համագործակցաբար կազմակերպել Եվրոպայի հայությունը ստեղծելով «համազգայնութային եվրոպահայ եկեղեցական խորհուրդ» «տալով ընտրել ըստ թեմական կենտրոնական խորհուրդս, նաև զառաջնորդն» և աշխատանքները ղեկավարել միշտ խորհրդակցաբար երկու եպիսկոպոսների հետ, վեճ ու պայքար չստեղծել ու այդ մասին տեղեկացնել Մայր Աթոռին:

Պալաքյան եպիսկոպոսը, սակայն, չկարողացավ արդարացնել իրեն վստահված այդ բարձր և պատասխանատու պաշտոնը եվրոպահայ ընդարձակ թեմում: Հայրապետա-

կան պատվիրակը դժբախտաբար ընկավ քաղաքական որոշ կուսակցության ազդեցության տակ, «Եվրոպահայ խորհուրդը» դարձավ Հայաստանի դեմ պայքարելու մի գործիք, և ինքը թշնամացավ Վռամշապուհ և Ղևոնդ եպիսկոպոսների հետ և նույնիսկ իր դեմ փակ գտավ Լոնդոնի, Փարիզի հայ եկեղեցիների դռները: Գևորգ Ե կաթողիկոսը մասնավոր հեռագիր-հրահանգով նրան ի կարգ հրավիրեց, թելադրելով, որ Պալաքյանը չխառնվի կուսակցական-քաղաքական ոչ մի հարցի և ղեկավարվի միայն Մայր Աթոռի հրահանգներով, նկատի ունենալով միաժամանակ Մայր Հայրենիքի և հայ ժողովրդի գերագույն շահերը: Պալաքյան ձեռնթափ եղավ, քաշվեց Մարսել և իրեն հռչակեց առաջնորդ Մարսելի, այսպես մի նոր դժվարություն ստեղծելով Հայ եկեղեցու ծոցում:

Այնուամենայնիվ Մայր Աթոռի համար կենսական նշանակություն ուներ եվրոպահայ թեմերի կազմակերպությունը:

1929 թ. Գևորգ Ե մասնավոր կոնդակով Հայրապետական նոր պատվիրակ նշանակեց Եվրոպայի հայության համար Եգիպտոսի թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպիսկոպոսին, որը նախապես էլ 1916 թ. սկզբ.-ին նշանակվել էր Հնդկաստանի, Հեռավոր Արևելքի, Եթովպիայի և Սուդանի պատվիրակ. պաշտոն՝ որ նա կատարեց փառավոր արդյունավորությամբ:

Թորգոմ արք. ստանձնեց այդ դժվարին պարտականությունը և ութ ամիսներ շարունակ ուսումնասիրելով կացությունը Եվրոպայի բոլոր հայ գաղութներում և իր զեկուցագիրը ներկայացրեց Ամենայն Հայոց Հայրապետին:

Հայրապետական պատվիրակի իրավասության տակ էին մտնում, բացի Ռումինիայի, Հունաստանի, Բուլղարիայի թեմերից, որտեղ արդեն կային կազմակերպված առաջնորդական վիճակներ, ամբողջապես արևմտյան, կենտրոնական և հարավային Եվրոպան:

Հայրապետական կոնդակը Թորգոմ արք.-ին հրահանգում էր, «հօրն միակ առաջնորդական վիճակ մը, եկեղեցականապես կազմակերպել եվրոպահայությունը. ավելի ճիշտ՝ Եվրոպայի արևմտյան, կենտրոնական և հարավային մասերու մեջ գտնված այն հայ համայնքները, որոնցմե ոմանք թեև վաղուց կազմակերպված էին իբրև հովվական անջատ շրջանակներ»: Կաթողիկոսը հրահանգում էր նաև, որ չկրկնվեն Պալաքյանի օրով տեղի ունեցած անախորժությունները, մանրամասնորեն քննել կացությունը և ապա տնօրինել պարտն ու պատշաճը: Թորգոմ սրբազանը ութ ամիս շարունակ այցելեց, քննեց, քարոզեց և եկավ այն եզրակացության, թե «անկարելի՛ անօգուտ է ամբողջ եվրոպահայությունը միակ առաջնորդական վիճակի մը մեջ պարագրելու ծրագիրը, և թե ավելի գործնական է և եկեղեցական կազմակերպության տեսակետից ավելի բանավոր և արդյունավետ՝ եվրոպահայ համայնքները խմբել մեկե ավելի առաջնորդական վիճակներու մեջ»: Թորգոմ արքեպիսկոպոսի տեսությամբ համաեվրոպական մեկ թեմ ստեղծելու գաղափարը ջուրն էր ընկնում: Հայրապետական պատվիրակը դրա փոխարեն առաջարկում էր կազմել Եվրոպայում հետևյալ թեմերը, նկատի ունենալով «խմբավորյալ հայաբնակչության տեսակետը». 1) Փարիզի շրջանակ, 2) Լիոնի շրջանակ և 3) Մարսելի շրջանակ: Հայրապետական պատվիրակը կացությունը լրջորեն ուսումնասիրելուց հետո և ելնելով կոնկրետ փաստերից ու ստեղծված կացությունից Ֆրանսիայի հայոց համար «անկարելի կնկատե միակ թեմի գաղափարը»: Եվ ընդհակառակը Եվրոպայում մի քանի հայ եպիսկոպոսների ներկայությունը համարում է «առավելություն, ոչ միայն իբրև նվիրապետական ազդեցություն մը այլոց առջև, այլ նաև եկեղեցական հեղինակության իրական ուժ մը հոգևոր, ներքին կյանքի տեսակետեն»: Ֆրանսիայից դուրս Թորգոմ սրբազանը առաջարկում էր եվրոպական մյուս երկրներում գտնվող հայ համայնքների համար ստեղծել ուրույն հովվական շրջանակներ՝ Իտալիայում, Բելգիայում, Շվեցարիայում, Գերմանիայում, Հոլանդիայում, Չեխիայում, Ավստրիայում, Հունգարիայում, Անգլիայում և այլուր: Յուրաքանչյուր հովվական շրջանակ ունենում էր իր հոգևոր հովիվը, եկեղեցական խորհուրդը ենթակա հայրապետական պատվիրակին: Թորգոմ սրբազանը նպատակահարմար էր գտնում, որ ամբողջ Եվրոպայի հայրապետական պատվիրակը տարբեր մեկը լինի առաջնորդներից, որպես ներկայացուցիչը Ամենայն Հայոց Կաթողիկոսի, և որի նախագահության ներքո կազմվի եվրոպահայ թեմերի եպիսկոպոսական ժողով:

Յուրաքանչյուր թեմական վիճակ և հովվական շրջանակ ունենում են իրենց ժողովական կազմը, ներկայացուցչական ընտիր և նրանցից ընտրված վարչական մարմինը, որը գործելու է կենտրոնի մեջ և հոգաբարձուներ՝ որոնք վիճակի կամ հովվական շրջանակի մեջ են գործում:

Թեմական կազմակերպության ընդհանուր նկարագիրը Եվրոպայում լինելու էր զուտ եկեղեցական: Հայ եկեղեցին պետք է լինի գաղութահայության ազգային կյանքի առանցքը: Եկեղեցու շուրջ պետք է համախմբվեն, կրթական, մշակութային, հայրենա-

նակցական-բարեգործական մյուս միությունները ու կազմակերպությունները: Այն հայերը, որոնք վճարում են իրենց եկեղեցական տուրքը և հայ եկեղեցու զավակներ են, իրավունք ունեն մասնակցելու թեմական ընտրություններին ընտրելու և ընտրվելու իրավունքով:

Մայր Աթոռ ս. Էջմիածինը Թորգոմ սրբազանի սույն զեկուցագիրը յուրացնում էր և մի քանի փոքր փոփոխություններից հետո ընդունում՝ որպես հիմք և սկզբունք Եվրոպայում թեմական կազմակերպությունների համար: Պետք է ասել, որ մինչև այսօր էլ Եվրոպայի մեր թեմերը ղեկավարվում են նույն սկզբունքով:

Գևորգ Ե զբաղվում էր նաև հեռավոր Ամերիկայի թեմերի կազմակերպությամբ: Առաջին համաշխարհային պատերազմից հետո հայ գաղթականության մի մեծ հոսանք հասել էր նաև Ամերիկայի ափերը: Գևորգ Ե անհրաժեշտ էր գտնում ամբողջ Հյուսիսային Ամերիկան կազմակերպել միակ թեմի մեջ, օժտելով այն ընտրովի թեմական առաջնորդով ու թեմական կազմակերպությամբ: Այս նպատակով, դեռևս 1921 թ. նա Ամերիկա էր գործուղում որպես հայրապետական պատվիրակ Խորեն արք. Մուրադբեգյանին: Խորեն արք.-ը հաջողությամբ կատարեց իրեն վստահված գործը, կազմակերպեց թեմը, ստեղծեց ազգային-եկեղեցական մարմիններ. իսկ կաթողիկոսը առաջնորդ նշանակեց տ. Տիրայր արքեպիսկոպոսը:

Ամերիկայի ուղևորությունից իր վերադարձին Խորեն արք-ը Գևորգ Ե-ին ներկայացրեց իր ուղևորության մասին չափազանց շահեկան և ընդարձակ մի տեղեկագիր:

Գևորգ Ե-ի օրով Մայր Աթոռ ս. Էջմիածնի և մեր նվիրապետական մյուս Աթոռների հարաբերության և գործունեության մասին կխոսվի հաջորդ համարում:

(Շարունակելի)



ԲԱԲԳԷՆ ԵՊՍ. ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆ

# Ս. ԲԱՐՍԵՂ ՄԵԾ ՀԱՅՐԱՊԵՏ

Բարսեղ անունը շատ գործածական է հայ և հույն կեսարացիներու մոտ. ինչպես Պողոսը Մալթա կղզիի բնակիչներուն, և Ստեփանոսը զեյթունցիներուն մոտ:

Ավագ հինգշաբթիի և Զրօրհնեքի մեծ աղոթքներուն հեղինակն է ան, հետևաբար հայ եկեղեցասերներու ընտանի են «Սրբոյն Բարսեղի Հայրապետին Կեսարիոյ ասացեալ է աղօթքս» խոսքերը:

Ազնվական և բազմանդամ ընտանիքի մը անդրանիկն է ան: Ծնավ 329-ի վերջերը կեսարացի հույն ընտանիքի մը մեջ: Տկար էր կազմով և առողջությամբ, մտքով հզոր և հոգիով մեծ այս մարդը, և երիտասարդությունը անցուց Նեոկեսարիա (Նիքսար-Պոնտոս) իր մոր և մեծ մոր խնամքին ներքև:

Երիտասարդ Բարսեղ իր բարձրագույն կրթությունը ստացավ Կեսարիո, Բյուզանդիոնի և Աթենքի մեջ: Այդ տարիներուն հեթանոս բարքեր ողջ էին և զորավոր՝ մանավանդ Աթենքի մեջ: Հոն Բարսեղ կհանդիպի երկու հատկանշական անձերու. իրարու հակապատկեր նկարագրով. Գրիգոր Նազիանզացի, սուրբ մը և մեծ միտք մը, որուն զկյանքն բարեկամ կմնա. երկրորդը՝ Հուլիանոսի, որ ապա «Ուրացող կայսր» պիտի դառնար Բյուզանդիոնի: «Տեսեք, կըսեր Բարսեղ, ինչպիսի հսռազան մը կպատրաստե կայսրությունը ինքն իրեն համար»: Բարսեղ կմարգարեանար: Տարիներ ետք նախկին դասընկերներ իրարու պիտի հանդիպեին Կեսարիո մեջ, Հուլիանոս՝ ուրացեալ մը, Բարսեղ՝ հովվապետ եկեղեցվո:

Հոգելույս Թորգոմ պատրիարք Գուշակյան (1937-ին) դասախոսության ընթացքին հետևյալը պատմեց պատմական այդ հանդիպումին մասին:

Կայսրը Կեսարիա կայցելե. ս. Բարսեղ բարիգալուստ մաղթող պատվիրակություն մը կղրկե, որուն կհանձնե նաև նշխարհ մը որ Հուլիանոսի տան: Ուրացողը, նախատելու համար իր նախկին դասընկերն ու անոր հավատքը, զամբյուղ մը հարդ կղրկե Բարսեղին, որ շնորհակալություն հայտնելե ետք հարդը բերող պալատականներուն՝ կըսե.

«Հաճեցեք նաև հայտնել կայսեր, որ ես իմ կերակուրես ղրկեցի իրեն, և ինք իր կերակուրեն ինծի»...

Տասն և ութ տարեկանին (357) կորոշե վանական դառնալ. այդ տարի իսկ կմկրտվի:

Նարժե մեջ բերել քրիստոնեական խոր իր փորձառությունը իր մկրտության առիթով: «Խոր քունե մը արթնցողի պես զգացի մըկըրտված պահուս: Տեսա քրիստոնեական առաքինության հրաշակերտող լույսը: Աշխարհի իմաստուններուն և մեծերուն ունայնությունը տեսա, որ անցավոր է ու կորստական... Ավետարանը կարդացի ու սորվեցա թե կատարելության պողոտան ունեցածնիս

ծախելով աղքատները մասնակից ընել է մեր բարիքներուն, հրաժարիլ հող ընելէ աշխարհիկ ունէ բանի համար. ու չթույլատրել որ հոգին մոլորի երկրավոր բաներու սերերեն»։

Ս. Բարսեղ ձեռնարկեց այցելել ծանոթ վանական անձերու և կեդրոններու։ Պաղեստին, Սյուրիա, Եգիպտոս, Միջագետք։ Վանական ռևէ կազմակերպություն չգոհացուց զինք։ Ան իր անձնական ծրագիրը ուներ. որ բարձրորեն կազմակերպված և իսկապես գործնական մեթոդն էր վանական կյանքի։ Կազմակերպողի և վարչագետի իր անզուգական կարողությունները ի գործ դրավ և կարգ ու կանոն մտցուց վանականներու կյանքին մեջ։ Ստեղծեց համայնական աշխատանքի դրությունը, որպեսզի անոնք (վանականներ) օգտակար ըլլան մարդկության։ Մեկ երդիկի և մեկ ճաշասեղանի շուրջ ժողվեց ամենքը։ Մեղմացուց վնասակար ու անտեղի խստակեցությունը. շատ մը այլ բարեկարգություններ մուծեց վանական կյանքեներս և իրավամբ ստացավ «Հայր արևելյան վանականներու» պատվանունը։

Իր ժողովուրդին սրտին մեջ տեղ գտավ ան մանավանդ 367—368 թվականներու սովի ժամանակ։ Այնպես մը կազմակերպեց նպաստի գործը, որ՝ պետական բարձրաստիճան անձեր հիացան։

Աղքատին հայրն էր ան. խարազանողը անխիղճ հարուստներուն. խթանողը շահամոլներուն։ Իր քարոզները կարգի բերին կծծիները և փրկեցին չքավորները սովին առթած դաժան հարվածներեն։ Հավասարապես նպաստ հատկացնել տվավ քրիստոնեին, հեթանոսին, հայուն, հույնին ու հրեային։

370-ին եպիսկոպոս ընտրվեցավ Կեսարիո։ Հակառակորդներ անոր ֆիզիկական տկարությունը պատճառ ընելով աշխատեցան արգիլել իր եպիսկոպոսացումը։ Նազիանզացին ջրեց ամեն առարկություն. վճիռի մը նման կտրուկ, հետևյալը հայտարարելով. «Բարսեղ տկար է, այո՛, բայց մենք հոգևոր առաջնորդ մը և կրոնքի ուսուցիչ մըն է որ կուզենք և ոչ թե ըմբիշամարտ մը...»։

Ս. Բարսեղ սերտ հարաբերություն մշակած է հայոց եկեղեցվո հետ։ Ան պաշտպանն ու ախոյանը եղավ արևելյան եկեղեցիներու ուղղափառության, ընդդեմ արիոսական հերետիկոսության։ Վալենս կայսրը, որ արիոսական մըն էր, Կեսարիո իր կառավարչին ու փոխանորդին Մոտեստոսի հրահանգ կղրկե որ «Բարսեղը կարգի բերե»։

Ս. Բարսեղի և Մոտեստոսի միջև տեղի ունեցող հետևյալ խոսակցությունը պատմական արժեք ունի և դարե-դար բերանացի սերունդներ պատմած են իրարու։

Փոխարքան (Մոտեստոս) Բարսեղին՝

«Ինչո՞ւ արիոսական վարդապետության դեմ կքարոզես և կայսեր հրամանին անհընազանդ կգտնվիս»։

**Բարսեղ։**—«Ձեր ըսածը չեմ հասկնար, ո՞ր անհնազանդության մասին կխոսիք»։

**Փոխարքան։**—«Կայսեր կրոնքը կմերժես. մենք բոլորս կընդունինք զայն»։

**Բարսեղ։**—«Չեմ կրնար արարած պաշտել. կայսրս իսկ կարգիլե այս բանը»։

— «Մեզի ի՞նչ եղած է. մեր հավատքը անարժե՞ է քեզի համար»։

— «Դուք բարձր պաշտոնատար մ եք. մեր փոխարքան. ձեր բարեկամությունը պատիվ է ինձ։ Բայց քրիստոնեությունը հավատք է և ոչ թե աշխարհիկ դիրքեր»։

Ասոր վրա փոխարքան կզայրանա, կսկսի սպառնալ և ապա կըսե ս. Բարսեղի. «Չե՞ս վախնար այս սպառնալիքներես»։

— «Ինչո՞ւ վախնամ. ինծի ինչ կրնա պատահիլ»։

— «Կրնաս ստացվածքդ կորսնցնել, աքսորվիլ, չարչարվիլ և մահանալ»։

— «Այդ բաները զիս չեն վախցներ. ուրիշ սպառնալիք եթե ունիք զանոնք ինծի ըսեք»։

— «Ոչ ոք ցարդ համարձակած է այս կերպ խոսիլ», կըսե փոխարքան բարկությենեն բռնկած։

— «Թերևս մինչև հիմա եպիսկոպոսի մը հանդիպած չեք», կպատասխանե Բարսեղ։

Կապադովկիո նահանգին մեջ անարդարություններ կգործվեին իր օրով. մինչև իսկ գերիներու հայտնի վաճառք և անօրեն տեղի կունենար։ Բարսեղ ծառացավ վատ այս գործին դեմ։ Թեև թշնամիներ շինեց պաշտոնատարներու մեջ իրեն հանդեպ, սակայն ժողովուրդին պաշտամունքին ալ առարկա դարձավ։

Օր մը ապաստան տվավ ան առևանգումի ենթակա այրիի մը, իր տան մեջ։ Կեսարիո քաղաքապետը զայրացավ։ Կառավարատուն բերել տվավ Բարսեղը։ Ժողովուրդը լսեց, հազարավորներ խռնվեցան և այնպիսի ցույց մը կատարեցին ի նպաստ իրենց եպիսկոպոսին, որ քաղաքապետը վախցավ։ Բարսեղ առանց խոսք մը ըսելու, ձեռքի մեգական մեկ շարժումով հանդարտեցուց ժողովուրդը, հանգստացնելով նաև խռոված սիրտը քաղաքապետին։

Ս. Բարսեղ եղավ նաև բարեկարգիչը եկեղեցվո, կարգի հրավիրեց անկարգ եկեղեցականները, սանձարձակ կենցաղ ունեցող, սիմոնական, դրամապաշտ և անպատկառ մասը իր թեմի կղերին։ Այդ առիթով գրած իր բազմաթիվ նամակներեն 365-ը հասած են մեզի, դյութական պարունակությամբ գրական արժեքով թանկագին գիրեր։

Ան ունի նաև արժեքավոր մատենագրական գործեր. մեկնություններ, որոնցմե Ծը-

ընդդեմ գրքի մեկնությունը. «Վեցօրէից ապարչութիւնը», ուսկեւյարուն հայ թարգմանիչներ հայերենի վերածած են: Մեծ եղած է նաև իր համբավը ու հմայքը իբրև քարոզիչ: Էրասմոս իր մասին ըսած է. «Բոլոր դարերու ամենանուրբ քարոզիչն է ս. Բարսեղ»: Ունի նաև վանական կարգի կանոն մը և Պատարագամատույց մը:

Ս. Բարսեղ իմաստուն հեռատես մը, ավելի շիտակը մարգարե մըն էր, երբ իր բարեկամներուն՝ Աթանասի, Ամբրոսիոսի և Պապին իսկ կգրե. «Արևելքի եկեղեցիներու ապահովության համար անհրաժեշտ է արևմուտքի եկեղեցիներու համակրությունը և օգնությունը»: Միշտը պիտի ըլլար նաև փոխադարձը: Այսօր ամբողջ Փոքր Ասիան, Ասորիքը, նույնիսկ Միջին Արևելքը քրիստոնյա աշխարհ մը եղած պիտի ըլլար (հայ, հույն, ասորի և ն ազգերե բաղկացած), եթե արևմուտքի քրիստոնյաներ իրենց արևելքի եղբայրներուն պաշտպան կանգնեին... Ս. Բարսեղ կարծես նախատեսած էր սպառնացող վտանգը: Բյուզանդիոնի «մեղքերը» պատճառ եղան արևելքի եկեղեցիին տկարանալուն, նահանջերուն ու մահվան:

Հունվար 1-ին (379) վախճանեցավ ս. Բարսեղ, երբ ամբողջ ժողովուրդը իր տան շուրջի փողոցները լեցուցած էին ու կաղոթեին: Սուրբերու ընտանիք մըն էր իրը, ծընողք, քույրեր, եղբայրներ եկեղեցվո ծառայության նվիրված ու սրբացված են եկեղեցվո կողմե:

Ամբողջ Կեսարիո ժողովուրդը, քրիստոնյա հրեա և հեթանոս հուղարկավորներն էին ուրբին, որ իր հայրերու գերեզմանին մեջ թաղվեցավ: Քաղկեդոնի ժողովը «Մեծ» մակդիրը տվավ իրեն 72 տարի ետք: Արևելյան եկեղեցիներու համար եռամեծ վարդապետները եղան Բարսեղ, Ոսկեբերան և Գր. Նազիանզացի: Բայց ինք ճանչցվեցավ իբրև տիպարը եպիսկոպոսներու, ախոյան (Աթանասյան) ուղղափառության, հայրը անհամար վանականներու. հեղինակը բազում իմաստալից քարոզներու և 365 նշանավոր նամակներու:

Հայց. եկեղեցին Ամանորի առիթով կկատարե իր հիշատակը, նման հույն եկեղեցվո:

## Ս. ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏԻՈՔԻ

Փառավոր դեմք մը «առաքելական հայրապետներու» դասեն: Եպիսկոպոս Անտիոքի և մարտիրոս: Հաջորդը Եվարիոսի, որ Պետրոս Առաքյալի էր հաջորդած:

Իր կյանքին ու մահվան պարագաներու մասին քիչ գիտենք, սակայն իր համբավը կշռւյա գրած իր յոթ նշանավոր նամակներեն, ուղղված յոթ եկեղեցիներու: Սուրբ մեջբերված մասեր այդ նամակներեն ցույց պիտի տան Իգնատիոսի հոգին:

Իր չափահասության դարձի եկած և մըկըրտված հեթանոս մըն է ան: Եկեղեցին «Աստուածազգեաց» մակդիրը տված է իրեն հիմնվելով ավանդության մը վրա՝ ըստ որում Քրիստոս «իր գիրկը առավ մանուկ մը», ըստ ս. Ավետարանին (Մարկոս Թ. 35—37), և ըսավ. «Ով որ այսպիսին կընդունի իմ անունովս, զիս կընդունի»:

Թեև երկար տարիներ Անտիոքի եպիսկոպոսությունը վարած, սակայն գրեթե ոչինչ հասած է մեզի իր պաշտոնավարության մասին: Համի Տեառն 107-ին ան մահվան կդատապարտվի և կղրկվի Հռոմ, կրկեսը ձգվելու:

Այդ դաժան ճամփորդության մասին հետեվյալը կգրե ան Հռոմի քրիստոնյաներուն:

«Շղթաներու մեջ եմ այժմ, ոչ մեկ կարիք ունենալ սորվեցա: Անտիոքեն Հռոմ ճամփուս ընթացքին, ցամաքի վրա և ծովու՝ վայրագ գազաններու դեմ կռիվ կմղեմ գիշեր ու ցերեկ: Ըսել կուզեմ խումբը ան զինվորներուն, որոնք զիս կպահպանեն, նման ընձառյուծներու, որոնք շրջապատած են իրենց զոհը: Որքան քաղաքավար ու մեղմ ըլլամ անոնց հանդեպ, այնքան ավելի վատ կդառնան»:

Շատ հավանաբար Զմյուռնիայեն անցավ ան, որ բանուկ առևտրական քաղաք մըն էր: Հոն իրեն այցելեցին ս. Պողիկարպոս և երեք այլ եպիսկոպոսներ, Եփեսոսի, Մակնեզիո և Տրաղեսի, ինչպես նաև բազմաթիվ քրիստոնյաներ:

Իր նամակներուն առաջին չորսը Զմյուռնիայեն գրեց: Քրիստոնյաներ զինք ազատելու համար միջոցներ կփնտրեին. գրեց անոնց և արգիլեց իրենց վարմունքը.

«Ձեր սերը վախ կազդե ինծի: Ան դեռևս վնասե ինձ. մարդոց շնորհքը չէ, որ կփընտրեմ, այլ Աստուծո հաճելի ըլլալ կուզեմ: Այսպիսի պատեհություն չեմ կրնար ունենալ հասնելու այդ բանին. (Ած.յ. հաճելի ըլլալու). թող իմ արյունս թափվի իբրև զոհ անոր, մինչ սեղանը զոհի պատրաստ է... Միայն աղոթեցեք, որ քաջությունն ունենամ, հոգիի և մարմնի, ըլլալու որոշումիս հավատարիմ մարդ մը և ոչ թե լոկ խոսող մը. թող կերակուրն ըլլամ գիշախանձ անասուններու, որոնց միջոցավ կարենամ երթալ դեպի Աստված: Աստուծո ցորենն եմ ես, գազաններու ակռաներով աղացվող, դառնալու բարի հացը»:

107 (Հ. Ք.) թվականը վկայաբաններ նըշանակած են իբր տարին անոր նահատակության, որ տեղի ունեցած է ի Հռոմ, նետվելով կրկեսի գազաններուն առջև: Տրայա-

նոս կայսրն էր մահվան վճիռն արձակողը, երբ պարթևներու վրա պատերազմի կերթար Անտիոքէն անցավ և իմացավ, թե Իգնատիոս մեծ աշխատանք կտանի հելլենները քրիստոնյա դարձնելու համար. զայրացավ մանավանդ ստուգելով, որ առաքելական իր այս գործին մեջ հաջողություններ կունենա ան:

Խոսելով իր նահատակության մասին, կըսե.

«Երանի թե գազանները ամբողջովին ուտեն սպառեն մարմինս, ըլլա գերեզմանս, և բեռ չդառնամ ոչ ոքի... որքան կապրիմ՝ ստրուկ մ'եմ. երբ նահատակվիմ, ազատ մարդ պիտի դառնամ... մի ջանաք իմ ազատության համար միջնորդել խնդրեմ... թող գա վրաս ամեն հարված... միայն թե իրեն (Քրիստոսի) հասնիմ...»:

Տարիներ ետք, գաղտնի պահված իր ոսկորները ոչ միայն բեռ չեղան մարդոց, այլ օրհնաբեր ու թանկագին մասունքները եղան Հռոմի և Անտիոքի եկեղեցիներու մեջ:

Տրոասեն մեկնելիք նավը զինք Մակեդոնիա պիտի տաներ: Իգնատիոս իր վերջին երեք նամակները անկից գրեց: Որովհետև նավը Տրոասեն պիտի մեկներ շուտով, Պողիկարպոսեն խնդրեց, որ իր կողմե գրե Փիլադելֆիո և Զմյուռնիո եկեղեցիներուն ու իր բարեկամներուն:

Պողիկարպոս կատարեց անոր փափաքը, և շուրջ հիսուն տարիներ ետք իր կարգին մարտիրոսական պսակը ընդունեց Զմյուռնիո մեջ՝ խարույկի վրա ողջակիզվելով:

Իգնատիոս իր նամակներուն մեջ կհորդորե նորահաստատ եկեղեցիները, որ ուղղափառ հավատքը պահեն անաղարտ: Հնազանդ գտնվին եկեղեցվո օրինավոր իշխանության, միշտ մասնակցին հասարակաց «Սիրո ճաշին»՝ պաշտամունքին:

«Ամեն անոնք, որոնք Քրիստոսի կպատկանին, իրենց եպիսկոպոսին հնազանդ ու պաշտպան կլլեան... եղբայրներ, հերձվածողներու հետևողներ Աստուծո արքայությունը չեն կրնար ժառանգել: Բաժանումները, հերձվածները փախեք, անոնցմե չարիք միայն կուգա», կգրե Զմյուռնիո հավատացյալներուն: «Հոն, ուր եպիսկոպոսն է, ժողովուրդը հոն ըլլա, ճիշտ ինչպես որ՝ հոն, ուր Հիսուս Քրիստոս է, հոն կգտնվի կաթողիկե եկեղեցին»*:

Որոշ է, թե Բ դարու սկիզբը հերետիկոսներ կկործանեին «հավատքը»: Իգնատիոս կպայքարի անոնց դեմ, մանավանդ երևութականաց, որոնք սերտ հարաբերություն կըմշակեին հրեից հետ:

Այդ մասին իր նամակներեն մեկուն մեջ կգրե ան. «Մի՛ լսեք ոնէ մեկուն, որ Հիսուս Քրիստոսի մասին կխոսի, բայց կուրանա Անոր Դավթի սերունդեն լինելը, իսկապես Մարիամեն ծնած ըլլալը. իրապես Անոր ուտելն խմելը... Անոր հիրավի խաչվիլն ու մահը: Կան անհավատներ, որոնք կըսեն, թե Տերը ըստ երևույթին չարչարվեցավ... ապա ուրեմն ինչո՞ւ են իմ շղթաներս. ինչո՞ւ կդիմեմ դեպի սուր, դեպի կրակ ու դեպի մահ»:

Դ դարուն, երբ ս. Իգնատիոսի նշխարքը Անտիոք փոխադրվեցավ, ս. Ոսկեբերան այսպես ճառեց իր մասին.

«Անտիոքացիք, դուք սուրբը իբրև եպիսկոպոս ղրկեցիք և այժմ իբր մարտիրոս կընդունիք, աղոթքով ճամփա դրիք և պսակներով կդիմավորեք... Ամեն անոնք, որ իրեն կդիմեն (իր բարեխոսության), օրհնությամբ կլեցվին»:

* Առաջին անգամ «կաթողիկե եկեղեցի» բացատրության կհանդիպինք իր գրչին տակ: Նույնպես Իգնատիոս իբրև պատվանուն կգործածե «քրիստոնյա» բառը, որ առաջին անգամ Անտիոքի մեջ գործածված էր, գրեթե արհամարհական իմաստով (Գործք. ԺԱ. 26):

ՌՈԲԵՐՏ ԱԹԱՅԱՆ

# ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՏԱՂԵՐ

Մշակում ձայնի և երգեհոնի կամ դաշնամուրի համար

## Երկու խոսք

Տաղերը անցյալի հայ բանաստեղծական-երաժշտական ժառանգության կարկառուն նմուշներից են։ Տաղերի բանաստեղծության և երաժշտության ակունքները ընկած են վաղագույն ժամանակների ժողովրդական ստեղծագործության մեջ, 10-րդ դարից սկսած դրանք նոր զարգացում են ապրել իբրև պրոֆեսիոնալ արվեստի գործեր։

Պրոֆեսիոնալ արվեստի մեջ տաղերի ժանրի երևան գալը կապված է եղել այն ժամանակաշրջանում հայ մշակույթի բոլոր բնագավառներում տեղ գտած աշխարհիկ մտածողության թունդ զարթոնքի հետ։ Գրիգոր Նարեկացին իր տաղերով ձևավորել է միջնադարյան բանաստեղծության այդ տեսակի (հիմնականում՝ նրա հոգևոր տարատեսակի) ժանրային հատկանիշները, հենց նրա մի շարք ոտանավորներն էլ իր ժամանակ երգի դրվել, երգվել են։ Տաղերի ժանրը հայ ժողովրդական և պրոֆեսիոնալ երաժշտական ստեղծագործության մեջ գոյատևել է մինչև ուշ միջնադարը։

Երաժշտական առումով տաղերն իրենցից ներկայացնում են խոշոր վոկալ մոնոդիկ պիեսներ, բազմազան թեմաներով և զանազան բնույթի՝ քնարական, հայեցողական, վիպական, դրամատիկական տարրերով հագեցված և այլն։ Կան աշխարհիկ և հոգևոր տաղեր։ Աշխարհիկ տաղերում արտացոլված է միջնադարյան քաղաքացու կյանքը, կենցաղն ու հոգեկան տվայտանքները։ Սրանց մեղեդիները ձևով և բովանդակությամբ համեմատաբար պարզ են։ Հոգևոր տաղերում կան զուտ կրոնական բովանդակության նմուշներ, որոնք պատկերում են Քրիստոսի կյանքն ու տնօրինությունները (ըստ էության՝ չարի և բարու պայքարը), և այնպիսիները, որոնց մեջ կրոնականը ոչ այնքան բովանդակություն է, որքան արտահայտման միջոց (հաճախ այլաբանական բնույթի), երբեմն էլ դրսևորված է միայն խորագրում կամ եզրափակող փառաբանության մեջ։ Այս երկրորդ խմբի հոգևոր տաղերում առկա է իրական կենսազգացողություն, մեծ տեղ է հատկացված մասնավորապես բնության և մարդկային անձնավորության գեղեցկության գովերգմանը։ Բանաստեղծության բովանդակության այդ յուրահատկությունը, որ շատ բնորոշ է մանավանդ Նարեկացու մի շարք տաղերին, բնականորեն անդրադարձել է նաև նրանց երաժշտության վրա, ինչի շնորհիվ զգալիորեն լայնացել է այդ խմբի տաղերի երաժշտական-կերպարային, հուզական շրջանակը. դրանք ավելի ևս արժեքավոր են դարձել։

Հոգևոր տաղերի մեղեդիները համեմատաբար բարդ են, հաճախ համերգային բնույթի։ Կանոնական երգեր չլինելով, դրանցում հոգևոր երաժշտության ձայնային սկզբունքը խստորեն չի կիրառված։ Դրա փոխարեն մեծ նշանակություն է ձեռք բերել թուն մեղեդիական զարգացման սկզբունքը։ Լադային և ելևէջային զարգացման ազատության հետևանքով հոգևոր տաղերը ձևի տեսակետից ևս ընդարձակ են ու բազմազան։

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հոգևոր տաղերի մեղեդիական արվեստն ամբողջությամբ կրում է միջնադարի հայ քաղաքային ժողովրդական, մասնավորապես՝ գուսանական երաժշտության նշանակալից ազդեցությունը: Հիրավի. նրանց երաժշտության լադային հիմքի ընդարձակությունը, համարձակ զարտուղությունները, խրոմատիզմի՝ որպես հոգեբանական ինքնաարտահայտման միջոցի կիրառումը, շարականների և հոգևոր երաժշտության մի քանի այլ տեսակների եղևէջային-կշռույթային սահմանափակության հաղթահարումը, հնչյունածավալի լայնարձակությունը և գործիքային բնույթի վիրտուոզ դարձվածքների օգտագործումը՝ այս բոլորը գուսանական երաժշտությանը բնորոշ երևույթներ են, որ անցել են տաղերի մեջ, ինչպես նաև՝ ուշ ստեղծված կամ 12-րդ դարում վերանայված շարականների մեջ:

Հայկական տաղերի մեղեդիները, նրանց կատարելության, գեղեցկության և նրանցում արտահայտվող տրամադրության խորության պատճառով, հաճախ համեմատում են Բախի ու Հենդելի վոկալ կամ գործիքային արիաների հետ:

Տաղերի մի զգալի մասը, ինչպես ասացինք, պրոֆեսիոնալ ստեղծագործության արգասիք է: Դրանցից շատերը ժամանակին ձայնագրվել են խազերով: Սակայն, վերջին մի քանի հարյուր տարիների ընթացքում, երբ կորսվել է խազերը կարդալու բանալին, դրանք սերնդից սերունդ բերանացի են հաղորդվել, շատ տաղեր էլ, որպես հնչող նյութ, մեզ չեն հասել: Չասած այն մասին, որ այդ մեղեդիներն իրենց ստեղծման պահին իսկ մոտիկ են եղել որոշ տեսակի ժողովրդական երգերին, այս բերանացի գոյատևման ընթացքում ևս դրանք ենթարկվել են հղկման և հարդարման, ինչին ենթարկվում են բոլոր ժողովրդական երգերը, որ նույնպես սկզբնորեն ստեղծված են որևէ անհատի կողմից: Դրա հետևանքով է, որ 19—20-րդ դարերում, նոր ձայնագրության պահին այդ տաղերն արդեն իրենցից ներկայացրել են գրեթե բուն ժողովրդական ստեղծագործություններ:

Ստորև ներկայացվող վեց տաղերից հինգի մեղեդիները գրի է առել Կոմիտասը: «Ես ձայն զառիծուն ասեմ» հրատարակված է նրա «Հայոց եկեղեցական եղանակները» հոդվածում («Արարատ», 1894, № 7 և 8), «Հավիկ մի պայծառ տեսի»-ն Կոմիտասի կատարումից (ձայնապնակ) վերծանել է երաժշտագետ Մ. Աղայանը և զետեղել նրա «Ազգագրական ժողովածուի» 2-րդ գրքում (1950, Երևան), «Տիրամայրն», «Սայլն այն իջանէր» և «Հաւուն, հաւուն»՝ Կոմիտասի հայկական նոտաներով սևագրություններից վերծանել է տողերիս հեղինակը: «Տիրամայրն» հրապարակված է Ա. Հարությունյանի «Միջնադարյան մի քանի տաղերի մասին» հոդվածում («Պատմա-բանասիրական հանդես», № 3, 1965), «Սայլն» հրապարակված է մեր «Սայլն այն իջանէր» տաղի կոմիտասյան ձայնագրության մասին հոդվածում («Էջմիածին», Դ, 1966): «Ուր ես, մայր իմ»-ը, որ «Տիրամայր»-ի հետ հարց ու պատասխանի սկզբունքով զույգ է կազմում, ձայնագրել ենք ՍՍՀՄ ժող. արտիստուհի Գոհար Գասպարյանի երգածից:

Այդ վեց տաղերից երկուսը միայն կան Ն. Թաշճյանի ձայնագրություններում («Ձայնագրեալ երգեցողութիւնք Ս. Պատարագի» 1878), «Հաւուն, հաւուն»-ը (էջ 99), 1-ին տողը բաց թողնված, և «Տիրամայրն» (էջ 168): Նույն մեղեդիների կոմիտասյան ձայնագրությունները առավել շահեկան են, ընդհանրապես Կոմիտասը հիշյալ հինգ տաղերն էլ ձայնագրել է Արևելյան Հայաստանում, դրանք էջմիածնական տարբերակներ են, ավելի մոտիկ բուն հայկական, գեղջուկ երաժշտական ոճին և դրա շնորհիվ ավելի ևս հետաքրքրական:

Նկատի ունենալով այս տաղերի գեղարվեստական բարձր արժեքը և ընդառաջելով մեր մի շարք առաջնակարգ երգիչների ցանկությանը, մենք դրանք մշակեցինք ձայնի և երգեհոնի (կամ՝ դաշնամուրի) համար, ինչպես նաև ձայնի և կամերային նվագախմբի համար: Դրանցից մի քանիսն արդեն կատարվել են Երևանում, Մոսկվայում և այլուր: Ներկայացվող ներդաշնակմամբ նույն տաղերը, որպես ընդհանրապես մեղեդիական արվեստի աչքի ընկնող նմուշներ, հնարավոր է կատարել նաև լարային կամ փողային զանազան գործիքների մենանվագով դաշնամուրի կամ երգեհոնի հետ, կամ մենանվագ երգեհոնով:

## ՍԱՅԼՆ ԱՅՆ ԻՋԱՆԷՐ
(Գրիգոր Նարեկացի)

[illegible] ձայնի և երգեհոնի (կամ դաշնամուրի) համար

ՌՈԲԵՐՏ ԱԹԱՅԱՆԻ

**Recitato, rubato, poco a poco animando**

*Հանդարտ պատմելով, հետզհետե ոգևորությամբ*




կար - գեալ. Եւ ի վե - րայ նո -
- րա որ - դի ար - քա - յի.
ա - ռա - ջի նո - րա ման - կունք զե -






չը սար - ձէր սայ - լիկն այն.
Եւ ա-հա չը-խա - ղայր ա - նուն
այն։ Այն նոր-սըն հա - պուկ էր. ձայն ա-ձէր
Եղն ա - մո - լին։ Եւ ա-հա խա - ղայր



ա – նուն այն.
ի գիլ գայր ի գիլ
սայ – լէկն ի գիլ
և նր-որն-չա-լով գայր մր-սա – նէր



Փառք
Քրիս - տո
- սի
ա - մե - նա զօր
յա - րու - թեան:
rit.

# ՈՒՐ ԵՍ ՄԱՅՐ ԻՄ

Lento cantabile ed espressivo

*Ծորուն երգային, խոր զգացմունքով*




mf
p


con 8 va
(ad. lib.)

## ՏԻՐԱՄԱՅՐՆ
(Stabat mater)

Largo con dolore
*Ծանր, վշտագին*







## ՀԱՒՈՒՆ ՀԱՒՈՒՆ

(Գրիգոր Նարեկացի)

Andante dolce e lirico

*Դանդաղ, շափով, մեղմ, քնարական*





ցաւ. դի-տե
կին. սի-րա
լով զնե-բու նա սըս.
սնունդ սի-րել այն
1.
Dal 𝄋
2.
նա - սըս. Զայ - նըն:

[illegible]

(Գրիգոր Նարեկացի)





# ՀԱՒԻԿ ՄԻ ՊԱՅԾԱՌ ՏԵՍԻ







# ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

**Երևանի էլեկտրոնային արագացուցիչը.**—Գործարկվեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի ֆիզիկայի ինստիտուտի Երևանի էլեկտրոնային արագացուցիչը: Գործարկման առաջին օրը արագացուցչի շնորհիվ ստացվեցին մի փունջ էլեկտրոններ, որոնք արագացված էին մինչև 6,1 միլիարդ էլեկտրոն-վոլտ էներգիայի:

Արագացուցիչը ամենաբարդ գիտա-տեխնիկական կառուցումն է Հայաստանում: Այն խոշոր չափով հարստացնում է սովետական գիտությունը ֆիզիկայի բնագավառում և հանդիսանում է համաշխարհային նշանակություն ունեցող փորձնական կայան: Արագացուցիչը կառուցված է Երևանի, Մոսկվայի և Լենինգրադի գիտնականների, ինժեներների ու տեխնիկների համատեղ ջանքերով ու գործակցությամբ:

ՍՍՀՄ Մինիստրների սովետը ու Սովետական Միության կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն ողջունել են արագացուցչի կառուցողներին ու բարձր գնահատական տվել նրանց կատարած աշխատանքին:

**Հայ-վրացական կապերի մի նոր հաստատություն.**—Երկու ամիս առաջ Երևանի պետական համալսարանին կից ստեղծվեց հայ-վրացական բանասիրության կաբինետ (գիտական հաստատություն) Շոթա Ռուսթավելու անվամբ: Նորաստեղծ հաստատության նպատակն է՝ ուսումնասիրել վրաց ժողովրդի պատմությունը, լեզուն և գրականությունը:

Կաբինետի առաջին գիտական ժողովը համընկավ վրաց հայտնի լեզվաբան ու պատմաբան, ակադեմիկոս Ակակի Շանիձեի ծննդյան 80-ամյակին, որը և հանդիսավոր կերպով նշվեց նույն ժողովում:

Ա. Շանիձեն Թբիլիսիի վրաց համալսարանի հիմնադիրներից է 1918 թվականին և նույն համալսարանում հայագիտության ամբիոնի հիմնադիրն ու ղեկավարը շուրջ 50 տարի շարունակ: Նա հեղինակն է մի քանի տասնյակ ստվարածավալ աշխատությունների վրաց, հայոց և պարսից լեզուների վերաբերյալ, որոնց թվում աչքի ընկնող աշխատություններ կան հայոց հին և նոր լեզուների քերականական հարցերին նվիրված:

Հայաստանի Գերագույն սովետի նախագահության որոշմամբ ակադեմիկոս Ա. Շանիձեին շնորհվել է Հայկական ՍՍՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում:

**Մարդատար ճոպանուղին.**—Սկսեց գործել Երևանի առաջին մարդատար ճոպանուղին, որի շնորհիվ Նալբանդյանի և Չարենցի փողոցների հատման կետից կարելի է 2—3 րոպեում հասնել Նորք թաղամասի կենտրոնը: Ճոպանուղու նախագիծը պատրաստել են հայ և վրաց ճարտարապետները, իսկ կառուցումը կատարել են Երևանի շինարարները:

Հետագայում ճոպանուղին շարունակվելու է մինչև Նորքի նորակառույց բնակելի թաղամասը: Այդպիսի ճոպանուղի է կառուցվելու Կոնդից դեպի Ծիծեռնակաբերդ:

**Մակար Եկմալյանի ցեղջկական երգերը.**—Հուչակավոր կոմպոզիտոր Մակար Եկմալյանը մեզանում հայտնի է որպես հեղինակ և մի շարք ազգային երգերի հեղինակ: Ուսումնասիրելով Եկմալյանի արխիվները, երաժշտագետ Ռ. Աթայանը հայտնաբերել է, որ անվանի կոմպոզիտորի ստեղծագործական հորիզոնը շատ ավելի լայն է եղել, քան մենք գիտենք մինչև այժմ:

Ռ. Աթայանը հայտնաբերել և ուսումնասիրել է Մ. Եկմալյանի գրչին պատկանող մի քանի տասնյակ գողտրիկ ցեղջկական երգեր զանազան բնույթի՝ սիրային, էպիկական, կենցաղային, կատակ երգեր: Իր ուսումնասիրությունների մասին Ռ. Աթայանը հանդես եկավ հատուկ զեկուցումով Երևանի կոնսերվատորիայում՝ ուղեկցությամբ երգչախմբի, որը կատարեց այդ երգերից մի քանիսը: Այդ երգերը, ինչպես և Եկմալյանի մի քանի այլ ստեղծագործություններ, շուտով լույս կտեսնեն առանձին ժողովածուով:

**Էրեբունիի թանգարան.**—Արին-Բերդի մոտ (Երևանի արվարձան) կառուցվում է մի հնտաքրքիր շենք, որտեղ տեղավորվելու է Էրեբունիի թանգարանը: Այստեղ կենտրոնացվելու են այն իրերը, որոնք հայտնաբերվել են Արին-Բերդի պեղումների ժամանակ: Ցուցանմուշների թվում կլինեն ուրարտական

Արգիշտի Ա. թագավորի սեպագիր արձանագրությունները, որոնցից մեկում նա հայտնում է, թե մեր թվագրությունից առաջ 782 թվականին հիմնադրել է Էրեբունին, այսինքն այժմյան Երևանը։

Թանգարանի շենքը կլինի երկու հարկանի և կունենա ուրարտական ճարտարապետությանը հատուկ գծեր, ճակատային մասը զարդարված կլինի բարձրաքանդակներով, իսկ շենքի առջև ստեղծվելիք պուրակում դրվելու է Արգիշտի Ա.-ի հուշարձանը։

**Գյուղատնտեսական ինստիտուտի նոր շենք.**— Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի շենքը կառուցված է մոտ 35 տարի առաջ, որով այն շատ դեպքերում չի համապատասխանում ներկա ուսումնական պայմաններին։

Որոշված է կառուցել նոր ուսումնական շենք, որի նախապատրաստական աշխատանքները արդեն սկսված են։ Նոր շենքը կլինի յոթ հարկանի և կկազմի ներկա շենքի շարունակությունը։ Այն օժտված կլինի ուսման համար անհրաժեշտ բոլոր հարմարություններով։

**Երևանի ջերմաէլեկտրակայանի լրիվ գործարկումը.**—Նոյեմբերի սկզբներին տեղի ունեցավ Երևանի ջերմաէլեկտրակայանի պաշտոնական բացումը, թեպետ այն էլեկտրականություն էր մատակարարում դեռևս 1963 թվականից սկսած։ Կայանը սկսեց աշխատել իր նախագծային ամբողջ կարողությամբ, այսինքն տալիս է 550 հազար կիլովատ-ժամ էլեկտրականություն և 3100 տոննա-ժամ գոլորշի։

Սկսած 1963 թվականից, երբ գործարկվեց առաջին ագրեգատը, ջերմակայանը արդեն տվել է 6,6 միլիարդ կիլովատ-ժամ էլեկտրականություն։ Այդպիսի քանակությամբ էլեկտրականություն ստանալու համար հարկ կլիներ բաց թողնել Սևանի լճից ավելի քան չորս միլիարդ խ/մ ջուր և կամ լճի մակերեսն իջեցնել ևս 3,28 մետրով և կամ այրել 92 հազար տոննա մազութ։

**Երևանի առաջին գետնուղին.**—Նոյեմբերյան տոների նախօրյակին Երևանում, Օրջոնիկիձեի և Կալինինի անվան փողոցների խաչմերուկում, բացվեց մայրաքաղաքի առաջին գետնուղին։ Այն կառուցված է հետիոտն ուղևորների համար՝ խուսափելու համար տրանսպորտի երթևեկության խախտումներից։

Գետնուղին ունի հինգ ելք ու մուտք, 170 մետր երկարություն, 4 մետր լայնություն և 2,9 մետր բարձրություն։ Այն գեղեցիկ կերպով երեսպատված է մարմարով։

**Ջրամբար Մարմարիկի ձորում.**—Երբ պատրաստ լինեն և աշխատել սկսեն Հրազդանի (Ախտա) լեռնաքիմիական կոմբինատի գործարանները, նրանց համար պետք կլինի հսկայական քանակությամբ ջուր՝ տեխնիկական կարիքների համար։

Նպատակ ունենալով խնայել Հրազդանով հոսող Սևանի ջրերը, շինարարները որոշեցին նոր ջրամբար կառուցել կոմբինատի կարիքների համար։ Ջրամբարը կառուցվում է Մարմարիկի ձորում, Մեղրաձոր գյուղի մոտակայքում։ Նորակառույց 850 մետր երկարությամբ թունելի միջով փոխված է Մարմարիկ գետակի հունը և ձորի մեջ սկսված է ջրամբարի պատնեշի կառուցումը։ Պատնեշի ներքևի մասը կունենա 400, իսկ վերևի մասը՝ 10 մետր լայնություն, 61 մետր բարձրություն և 500 մետր երկարություն։ Ջրամբարը կկուտակի տարեկան 36 միլիոն խորանարդ մետր ջուր, որը և կբավարարի կոմբինատին։ Բացի այդ, ջրամբարը կծառայի որպես զվարճավայր՝ ամառները ձորում հանգստացող հազարավոր դպրոցականների համար։

**Մեծ հետաքրքրություն դեպի Հայաստանը.**—Տարեց-տարի ավելանում է Հայաստան այցելող զբոսաշրջիկների թիվը ինչպես արտասահմանից, այնպես էլ Սովետական Միության ամենատարբեր ծայրերից։ Տուրիստական հանրապետական կայանի տվյալներով, այս տարի մինչև դեկտեմբերի 1-ը Հայաստան են այցելել 20000 սովետական տուրիստներ՝ Ռուսաստանից, Միջին Ասիայից, Սիբիրից, Ուրալից, Հեռավոր Արևելքից և այլ վայրերից։

**Վրաց կոմպոզիտորի երգերը հայ բանաստեղծների տեքստերով.**—Վրաստանում հանրածանոթ տաղանդավոր կոմպոզիտոր Սանդրո Միրիանաշվիլին գրել է երգերի մի ամբողջ շարք՝ բանաստեղծներ Ավ. Իսահակյանի, Հովհ. Թումանյանի, Վ. Տերյանի, Հովհ. Շիրազի, Ս. Կապուտիկյանի, Գ. Էմինի, Վ. Գավրյանի և այլոց լիրիկական բանաստեղծությունների տեքստերով, ընդամենը 20 երգ։

Երգերը կարելի է հաղորդել հեռուստատեսությամբ՝ իբրև ֆիլմ-համերգ։ Երգերը կատարվում են վրացերեն, սակայն յուրաքանչյուր երգից առաջ տեքստը կարդացվում է հայերեն։

**Լեզվի ինստիտուտում.**—Գիտությունների ակադեմիայի Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը տպագրության է հանձնել «Հայ ազգային գրական լեզվի զարգացումը սովետական շրջանում» ստվարածավալ աշխատությունը, որը պատրաստել են ինստիտուտի մի խումբ աշխատակիցներ։ Աշխատության մեջ մանրամասն կերպով վերլուծվում են հնչյունաբանության, ուղղագրության, ուղղախոսության և ձևաբանության հարցեր։

Ինստիտուտի աշխատակիցները կազմել ու ավարտել են նաև ժամանակակից հայերենի քառահատոր բացատրական բառարանը, որի առաջին հատորն արդեն տպագրության է հանձնված։

**Երիտասարդության տուն.**—Երևանում, Աբովյանի անվան պուրակի մոտ գտնվող սարալանջին, սկսվել է Երիտասարդության տան շինարարությունը։ Տունը բաղկացած կլինի մի շարք շենքերից, որոնցից ամենաբարձրը կլինի 14 հարկանի։

Երիտասարդության այս հետաքրքիր զվարճավայրը կունենա համերգային ու պատկերության սրահներ, սրճարան, ռեստորանային, լողավազան, ճաշարան և

այլն: Շինարարության համար օգտագործվելու են՝ երկաթբետոն, ապակի, տուֆ և պլաստիկատներ:

**Ազգային ճաշարան.**—Երևանում, Սփյուռքահայության հետ մշակութային կապի շենքի ներքնահարկում, բացվել է «Վահագն» ազգային ճաշարան-սրճարանը:

Ամեն ինչ այստեղ հայկական է: Կամարակապ սրահ, պատին Վահագնի ավանդությունը պատկերող բրոնզաձույլ արձան, կոճղերից պատրաստված կարասիներ, կավե ամաններ, ազգային տարազով մատուցողներ: Կարելի է պատվիրել հայկական ընտիր կերակուրներ՝ քաբաբներ «Քյո փթա», թակած «Խաշլամա», «Հարիսա», «Պուտուկ», պանրաբլիթ, թարմ լավաշ, թան, ապա զանազան գինիներ և տեղում պատրաստված օշարակներ:

Իր տեսակի մեջ մայրաքաղաքում միակ այս ճաշարան-սրճարանը դարձել է երևանցիների համար հաճելի ժամադրավայր:

**Լեռնային Ղարաբաղին՝ Լենինի շքանշան.**—Տնտեսական զարգացման և մշակութային շինարարության բնագավառում ձեռք բերած նվաճումների համար, Սովետական Միության Գերագույն սովետի կողմից Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը պարգևատրվել է Լենինի շքանշանով:

Շքանշանի հանձնումը տեղի ունեցավ Ստեփանակերտում, հանդիսավոր իրադրության պայմաններում: Հանձնման հանդեսին ներկա էին Մոսկվայից ու Բաքվից ժամանած բարձրաստիճան ղեկավար անձինք, Լեռնային Ղարաբաղի ղեկավարները, հարևան ադրբեջանական շրջանների ներկայացուցիչները: Ժամանած հյուրերը շնորհավորեցին Լեռնային Ղարաբաղի աշխատավորությանը՝ բարձր պարգևի համար, և ցանկացան նոր հաջողություններ:

Լենինի շքանշան է շնորհված նաև Նախիջևանի Ինքնավար Հանրապետությանը:

**Հուշարձան զոհվածներին.**—Ղափանի շրջանի Ծավ գյուղում, հանդիսավոր իրադրության մեջ, տեղի ունեցավ Հայրենական պատերազմում զոհված ծավեցի մարտիկների հիշատակին նվիրված հուշարձանի բացումը: 1941—1945 թթ. պատերազմի ժամանակ Ծավ գյուղից ռազմաճակատ են մեկնել 112 մարդ, որոնցից 50 հոգի զոհվել են պատերազմի դաշտում:

Գրանիտե այս գեղեցիկ հուշարձանը, որն ունի 8,5 մետր բարձրություն, կոչված է հավերժացնելու նրանց հիշատակը:



# ՑԱՆԿ

**«Էջմիածին» ամսագրում 1967 թվականի ընթացքում տպագրված նյութերի**

## Ա. ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ սրբատառ կոնդակը Թուրքիո Հայոց ամենապատիվ տ. Շնորհք սրբազան պատրիարքին ուղղյալ՝ տ. Շահան և տ. Խոսրով եպիսկոպոսների ձեռնադրության առթիվ, Ա—Բ 3։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ սրբատառ կոնդակը գեր. տ. Գարեգին եպս. Գազանճյանին Հնդկաստանի և Հեռավոր Արևելքի հայրապետական պատվիրակի փոխանորդ նշանակելու առթիվ, Ա—Բ 5։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ սրբատառ կոնդակը Ռուստրի Հայոց ս. Փրկիչ եկեղեցու յոթանասունհինգամյակի առթիվ, Ա—Բ 7։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ սրբատառ կոնդակը Փարիզի Հայոց Աղքատախնամ ընկերակցության յոթանասունհինգամյակի առթիվ, Ա—Բ 9։

Ամանորի և Փրկչի հրաշափառ և սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և Եթովպիայի կայսր Նորին Վեհափառություն Հայլե Սելասիե Ա-ի միջև փոխանակված հեռագրերը, Ա—Բ 11։

Փրկչի հրաշափառ և սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները, Ա—Բ 12։

Ամանորի և Փրկչի հրաշափառ և սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և նվիրապետական Աթոռների ու առաջնորդարանների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները, Ա—Բ 29։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի այցելությունը Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Մինիստրների սովետի նախագահ Բադալ Մուրադյանին, Ա—Բ 26։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման քառասունվեցերորդ տարեդարձի կապակցությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական անձնավորությունների միջև փոխանակված հեռագրերը, Ա—Բ 27։

Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և նվիրապետական Աթոռների և առաջնորդարանների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները, Դ 8։

Այցելություն Երևանի քաղաքագլուխ Գ. Հասրաթյանին, Դ 15։

Վեհափառ Հայրապետի հայտարարությունը Երևանի ռադիոյի թղթակցին, Դ 22։

Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները, Ե 8։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի պատասխանը մամուլի գործակալության թղթակցի հարցին, Ե 17։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ—«Յիշատակն արդարոց», Զ 3։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը պոլսահայ տպագրության չորսհարյուրամյակի առթիվ, Թ 3։

Հարցազրույց Երևանի ռադիոյի թղթակցի հետ, Թ 39։

Վեհափառ Հայրապետի այցելությունը Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Բադալ Մուրադյանին, Թ 12։

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Մոսկվայի և Համայն Ռուսիայի պատրիարք, Նորին Սրբություն Տ. Տ. Ալեքսի սրբազան պատրիարքի ծննդյան հիսունամյակի առթիվ, ԺԲ 3։

Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակի առթիվ փոխանակված հեռագրեր Վեհափառ Հայրապետի և պետական անձնավորությունների միջև, ԺԲ 5։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման քառասունյոթերորդ տարեդարձի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական անձնավորությունների միջև փոխանակված հեռագրեր, ԺԲ 7։

Վեհափառ Հայրապետի այցելությունը Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Նագուշ Հարությունյանին, ԺԲ 15։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի այցելությունը Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Բ. Մուրադյանին, ԺԲ 18։

## Բ. ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ամանոր և սուրբ Ծնունդ, Ա—Բ 28։

Խոսքեր 1967 տարվա սեմին, Ա—Բ 31:
«Լո՜յս, արարիչ լուսոյ, առաջի՛ն լոյս, ծագեա ի հոգիս մեր զլոյս քո իմանալի», Գ 9:
Հարության վկայությունը, Դ 9:
Ազգային-եկեղեցական տոներ, Ե 9:
Պատմական այցելություն, Զ 4, Թ 5:
«Աղբիւր բացեալ գիտութեան Աստուծոյ», Է—Ը 3:
«Օրհնեսցի պահպանեսցի եւ նախախնամեալ պահեսցի հիւսիսային կողմն աշխարհիս». Ժ—ԺԱ 3:

## Գ. ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

Ներ. տ. Շահան և գեր. տ. Խոսրով Ծորապյան եպիսկոպոսների ժամանումը Ստամբուլ, Ա—Բ 45:
Նամակ Ադիս-Աբեբայի միջեկեղեցական մնայուն հանձնաժողովին, Ա—Բ 52:
Երուսաղեմի հայոց Սրբոց Հակոբյանց վանքի գանձատան ձեռագրերը վերադառնում են իրենց տեղը, Գ 22:
Հաղորդագրություն՝ Ե. Հ. Խ.-ի ընդհանուր քարտուղար, դոկտ. Է. Կ. Բլեյկի Մայր Աթոռ այցելության մասին, Դ 17:
Վեհափառ Հայրապետը Մոսկվայում, Ե 15:
Տանն Կիլիկիայի գահակալի Եվրոպա ուղևորության մասին, Զ 28:
Վեհափառ Հայրապետի ուղևորությունը Ժնև, Թ 9:
Նամակների փոխանակում կարդինալ Բեայի և տ. Հայկազուն արքեպիսկոպոսի միջև, Թ 49:
Վեհափառ Հայրապետը Լենինգրադում և Մոսկվայում, ԺԲ 17:

## Դ. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագ և քարոզ հրաշափառ Ծննդյան տոնի առթիվ Մայր տաճարում, Ա—Բ 35:
Եպիսկոպոսական ձեռնադրություն, Ա—Բ 38:
Ամանորը հոգևոր ճեմարանի հարկի տակ, Ա—Բ 49:
Մայր Աթոռում, Ա—Բ 55, Գ 30, Դ 28, Ե 18, Զ 30, Է—Ը 6, Թ 50, ԺԲ 29:
Մեծարանքի երեկո, Ա—Բ 65:
Վարդանանց տոնի և Վեհափառ Հայրապետի անվանակոչության տարեդարձը Մայր Աթոռում, Գ 6:
Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, պրոֆ. Առաքել Առաքելյանի հոբելյանը, Գ 18:
Ներքին թեմերի տարեկան խորհրդակցական ժողով Մայր Աթոռում, Գ 26:
Քայլերգ ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի, Գ 51:
Վեհափառ Հայրապետի քարոզը ս. Զատկի առթիվ խոսված Մայր տաճարում, կիրակի՝ մարտի 26-ին, Դ 9:
Հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագ Մայր տաճարում՝ Փրկչի հրաշափառ Հարության տոնի առթիվ, Դ 12:
Հայրապետական հանդիսավոր ս. պատարագ և քարոզ Երևանի ս. Սարգիս եկեղեցում, Դ 19:
Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար, դոկտ. Է. Կ. Բլեյկը Մայր Աթոռում, Դ 18:
Մայր Աթոռի շինարարական ծրագրերը 1967 թվականին, Դ 25:
Մայրագույն վարդապետական իշխանության տվչություն, Դ 27:
Բուլղար ուղղափառ եկեղեցու պետ. Նորին Սրբություն Տ. Կիրիլ պատրիարքը Մայր Աթոռում, Զ 6:
Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի տոնը, Զ 22:
Սարկավագների ձեռնադրություն, Զ 24:
Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ գեր. տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանը Մայր Աթոռում, Զ 32:
Հնդիկ մալաբար եկեղեցու պատվիրակության այցը Մայր Աթոռ, Թ 45:
«Սաթենադրյուր»—հուշարձանի բացումը Մայր Աթոռում, Թ 47:
Հոգևոր ճեմարանի վերաբացումը, Թ 52:
Հանդիսություններ Վեհափառ Հայրապետի գահակալության 12-րդ տարեդարձի առթիվ, ԺԲ 9:
Հանդիսություն հոգևոր ճեմարանում Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակի առթիվ, ԺԲ 22:

## Ե. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ 50-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԲԱՑԱՌԻԿ ՀԱՄԱՐԻ ՆՅՈՒԹԵՐ

Խոսք հայրենիքի մասին, Ժ—ԺԱ 17:
ԱՆԹՈՍՅԱՆ Ս.—Հայ լեզվաբանության նվաճումները սովետական շրջանում, Ժ—ԺԱ 96:
ԲԱԲԱՅԱՆ Լ., ՄԱՐՏՅԱՆ Վ.—Վերածնված ժողովրդի նորոգ ճարտարապետությունը, Ժ—ԺԱ 49:
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՊԱՐԳԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ, ՀԱՏԻՏՅԱՆ ԱՐԹՈՒՆ—Մայր Աթոռը և վերածնված հայրենիքը, Ժ—ԺԱ 6:
ԹԱՀՄԻԶՅԱՆ Ն.—Համառոտ ժամանակագիր սովետահայ երաժշտական կյանքի, Ժ—ԺԱ 103:
ԿՈՒՐՂԻՆՅԱՆ Կ.—Հրաշալի ակնթարթը, Ժ—ԺԱ 82:
ՄԱԴՈՅԱՆ Գ.—Հայաստանի գրականության և արվեստի թանգարանը, Ժ—ԺԱ 92:
ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ Ս.—Հազարամյակների արվեստի նոր ժառանգորդը, Ժ—ԺԱ 78:
ՄՈՒՐԱԴՅԱՆ Ն.—Սովետահայ գրականության կես դարը, Ժ—ԺԱ 32:
ՏԵՐՅԱՆ ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ, ՇԱՀԲԱԶՅԱՆ ՊԱՐԳԵՎ—Մայր Աթոռ ս. Էջմիածնի խաղաղասիրական գործունեությունը, Ժ—ԺԱ 23:
ՔՈԼԱՆՋՅԱՆ Ս. Ե.—Պատմության աղբյուրների ուսումնասիրումը և հրատարակումը Սովետական Հայաստանում, Ժ—ԺԱ 58:
Մայր հայրենիքի նյութական վերաշինությունը, Ժ—ԺԱ 111:

## Զ. ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԲԱՑԱՌԻԿ ՀԱՄԱՐԻ ՆՅՈՒԹԵՐ

ԱՆԹՈՍՅԱՆ Ս.—Հայ մշակույթը և նրա համաշխարհային նշանակությունը, Է—Ը 59:
ԱՐԾՐՈՒՆԻ Թ.—Հատված «Պատմութիւն Տանն Արծրունեաց» աշխատությունից, Է—Ը 92:
ԳՅՈՒԼՅԱՆ Գ. Ր.—Վարդանանց պատերազմը և նրա

խորհուրդը, Է—Ը 90:
ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Ա.—Բանաստեղծություններ, Է—Ը 91:
ԹԱՇՃՅԱՆ Ե.—Ուխտագնացություն դեպի Հաղբատի և Սանահնի վանքերը, Է—Ը 71:
ՀԱՏԻՏՅԱՆ Ա.—Ս. Գրիգոր Լուսավորիչ որպես մատենագիր, Է—Ը 22:
ՄԱՐՈՒՔՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՀԱՆԱ—Կրոնական առարկաների դրվածքը Հոգևոր ճեմարանում, Է—Ը 63:
ՄԵՅԽԱՆԱՋՅԱՆ Խ.—«Ի քեն հայցեմք», Է—Ը 82:
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՎՐԵԺ ՍԱՐԿԱՎԱԳ—Կոմիտաս կաթողիկոսի «Անձինք նվիրեալք»-ը, Է—Ը 84:
ՇԱՀԲԱԶՅԱՆ Պ.—Հայաստանյայց եկեղեցին և Միսաք Մեծարենցի գրական ժառանգությունը, Է—Ը 45:
ՊՈՂԱՊԱԼՅԱՆ ՆԵՐՍԵՍ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ—Տեղեկագիր Հոգևոր ճեմարանի 1966—1967 ուսումնական տարեշրջանի գործունեության, Է—Ը 8:
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ ՍԱՐԿԱՎԱԳ—Հավերժի ճամփով, Է—Ը 89:
ՏԵՐՅԱՆ ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ—Ուրվագիծ ս. Էջմիածնի դպրոցի պատմության, Է—Ը 14:
ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ Վ., ՄԵՅԽԱՆԱՋՅԱՆ Խ.—Երաժշտության դասավանդումը Հոգևոր ճեմարանում, Է—Ը 76:
Ամավերջի հանդիսություն Հոգևոր ճեմարանում, Է—Ը 68:

## Է. ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԱՍՅԱՆ Հ.—Հայերեն Աստվածաշնչի տպագրության 300-ամյակի տոնակատարությունը Ամստերդամում, Ե 28:
ԱՎԱԳՅԱՆ Ս. Ա.—Մորո ձորո վանքը և նրա վիմագրությունները, Գ 56, Դ 56, Ե 58:
ԲԱՐԹԻԿՅԱՆ Հ.—Իսահակ Անգեղոս կայսեր պատասխան նամակը Հայոց կաթողիկոս Գրիգոր Տղային, Գ 50:
ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ Ս.—Նորահայտ արձանագրություն Հաղբատավանքում, Զ 56:
ԲԵՀԲՈՒԴՅԱՆ Ս.—Հայաստանի Հանրապետական կենտրոնական արխիվում, Գ 32:
ԳՈԼԱՆՃՅԱՆ Ն.—Բարաբբայի դատապարտությունը, Զ 87:
Հ. Ա.—Վարդան քհն. Տյուլեկյան՝ «Կյանքը գերեզմանեն անդին» (Ֆրեզնո, 1962, 141 էջ), «Կիրակնօրյա խոհեր» (Երուսաղեմ, տպարան Սրբոց Հակոբյանց, 1966, 229 էջ), Դ 39:
ՇԱՔԱՐՅԱՆ ՆԱՐԵԿ ՎԱՐԴԱՊԵՏ—Ազգային-եկեղեցական նոր ամսագիր ի Մելբուրն, Գ 48: Ուխտագնացություն դեպի ս. Երուսաղեմ, Թ 54:
ՊԱՐԳԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ—Հայ ժողովրդի ազգապահպանման և ազգահավաքման սուրբ օջախը, Ե 20:
ՍԻՐՈՒՆԻ Հ. Ճ.—Կոմիտասին հետ, Գ 36, Դ 37, Ե 37, Զ 39:
ՏԱՅԱՆ Ա.—Երաժշտագետ Հ. Ղևոնդ Տայան, Գ 59:
ՔՈԼԱՆՋՅԱՆ Ս.—Մեր ձեռագրական կորուստները, Ե 46, Զ 50:
Ս. Ներսես Շնորհալու անտիպ տաղերը, Դ 28, Ե 30:

## Ը. ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գեր. տ. Շահան եպս. Սվաճյան, Ա—Բ 42:
Գեր. տ. Խոսրով եպս. Էմիրզյան, Ա—Բ 44:
Գերաշնորհ տ. Վաչե եպիսկոպոս Հովսեփյան, ԺԲ 25:
Գերաշնորհ տ. Վարդես եպիսկոպոս Գյուրջյան, ԺԲ 27:

## Թ. ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Հայաստանի գրողների Հինգերորդ համագումարը, Ա—Բ 68:
ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ, Ա—Բ 78, Գ 61, Դ 61, Ե 62, Զ 62, Է—Ը 85, Թ 61:
Եղիշե Չարենցի ծննդյան 70-ամյակին նվիրված հանդիսավոր նիստ, Թ 60:

## Ժ. ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

Ողողում ս. Ղազար վանքում, Ա—Բ 58:
Լուրեր Հեռավոր Արևելքի ազգային-եկեղեցական կյանքից, Ա—Բ 61:
Եկեղեցական կյանք—Բուխարեստ, Եկեղեցական կյանք—Սոֆիա, Դ 31:
Լուրեր սփյուռքահայ ազգային-եկեղեցական կյանքից, Ե 24:
Հ. Բ. Ը. Միության 59-րդ ընդհանուր ժողովը, Զ 84:
«Գեղարդ» կրոնական-ազգային նոր ամսագիր, Զ 85:
Եկեղեցական-ազգային կյանք, ԺԲ 32:

## ԺԱ. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻՍԱՀԱԿՅԱՆ ԱՎ.—Բեթղեհեմի այրի սուրբ մանկիկը, Ա—Բ 54:
ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Ա.—Զրույց վանականի և Արաշի մասին, Ե 92: Սուտ էր..., Ե 94:
ԶԱՐՅԱՆ ԿՈՍՏԱՆ—Գարուն, ԺԲ 24:
ՀԱՏԻՏՅԱՆ Ա.—Համառոտ ակնարկ Մայր Աթոռ ս. Էջմիածնի պատմության վրա (1920—1967 թթ.), ԺԲ 37:
ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆ ԲԱԲԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ—Ս. Բարսեղ Մեծ Հայրապետ և Իգնատիոս Անտիոքի, ԺԲ 49:
ԱԹԱՅԱՆ ՌՈԲԵՐՏ—Հայ միջնադարյան տաղեր, ԺԲ 58:

## ԺԲ. ՄԱՀԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Հանգիստ գեր. տ. Վարդան արքեպս. Գասպարյանի, Ա—Բ 67:
Վերապատվելի պրոֆ. Գրիգոր Խաչիկյանի մահը, Ա—Բ 69:
Հանգիստ արժանապատիվ տ. Կգեստիոս ավագ քահանա Քիլիմջյանի, Ա—Բ 71:
Հանգիստ Հովհեն Զանանի, Ե 61: